ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը **5**

Փոխհարաբերությունները ՀՀ պետբյուջեի հետ **13**

Արտաքին հատված **17**

Դրամավարկային քաղաքականություն **21**

Ֆինանսական շուկա **32**

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը **37**

Վճարահաշվարկային հարաբերություններ **43**

Մակրոտնտեսական ցուցանիշները 2005 թ. հունվար – մարտին **50**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ **64**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակագրության վարչություն
ՀՀ բանկերում իրականացված հարցման արդյունքները (2004 թ. նոյեմբեր) **65**

Ա. Գրիգորյան, Կ. Պողոսյան, Գ. Աղաջանյան, Հ. Ջորյան
Բաղադրյալ տնտեսական ինդեքսները, տնտեսական գործունեության ինտեգրալային ցուցանիշները և ձեռնարկությունների ճկունությունը ՀՀ-ում (2004թ. ձեռնարկություններում իրականացված հարցումների արդյունքների հիման վրա) **74**

Լ. Հայրապետյան, Փ. Մարգարյանց, Վ. Նիկողոսյան, Ա. Շաբոյան, Հ. Ջորյան
ՀՀ-ում կանխիկ դոլարայնացման մակարդակի գնահատումը **84**

Ա. Ստեփանյան, Ա. Մկրտչյան
ՀՀ գնաճի մոդել **93**

Ա. Նախշիկյան, Վ. Մելիք-Փարսադանյան
Եկամուտների անհավասարաչափ բաշխման պայմաններում տնտեսության ճյուղային զարգացումների և ամբողջական պահանջարկի փոխազդեցությունները **114**

Ա. Գրիգորյան, Կ. Պողոսյան, Գ. Աղաջանյան
ՀՀ կենտրոնական բանկի կողմից ձեռնարկություններում իրականացված երկրորդ փորձնական հարցման արդյունքների ամփոփում **129**

Մակրոտնտեսական իրավիճակը

2005 թվականի առաջին եռամսյակում շարունակվել են դրսևորվել բարձր տնտեսական աճի միտումներ, որոնց արդյունքում գրանցված տնտեսական աճը 0.3 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Տնտեսական աճը կազմել է 7.8%, ՀՆԱ դեֆլյատորն աճել է 6.2%-ով, իսկ գնաճը 2004թ. դեկտեմբերի համեմատ ավելացել է 3.7%-ով՝ դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված տնտեսական աճի 7.3%, դեֆլյատորի աճի 3.5% և գնաճի 2.2% ցուցանիշների պարագայում:

Հաշվետու ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի ձևավորման վրա շարունակել են էական ազդեցություն ունենալ արտաքին գործոնները, մասնավորապես՝ նախորդ տարիներից փոխանցված ֆինանսական զգալի ներհոսքը: Արտարժութային միջոցների մեծածավալ ներհոսքը, փոխարժեքի արժևորման միջոցով, նպաստել է դրամայնացման գործընթացին, որն արտահայտվել է փոխարժեքի արժևորմամբ:

2005 թվականի առաջին եռամսյակում արձանագրվել է տնտեսական աճի տեմպի համեմատ սպառման առաջանցիկ աճի տեմպ, որը ինչպես նախորդ տարիների տնտեսական աճի, այնպես էլ մասնավոր տրանսֆերտների աճով պայմանավորված՝ եկամուտների աճի հետևանք էր: Դա հիմնականում արտահայտվել է պարենային ապրանքների պահանջարկի աճով, որը գյուղատնտեսական մթերքների սեզոնային սահմանափակ առաջարկի պայմաններում նպաստել է այդ ապրանքախմբի գների բարձրացմանը:

Առաջին եռամսյակում գրանցված կապիտալ ներդրումների զգալի ավելացումը համախառն առաջարկի բաղադրատարրերում արտահայտվել է կապիտալ շինարարության ծավալների աճով:

Արտաքին հատվածում ապրանքաշրջանառությունը ավելացել է 28.1%-ով՝ պայմանավորված ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ծավալների աճով: Այնուամենայնիվ, ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի, ներառյալ պաշտոնական տրանսֆերտները, ճեղքվածքի տեսակարար կշիռը գրեթե չի փոփոխվել՝ կազմելով մոտ 21.3%:

Եռամսյակի ընթացքում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը զսպող ազդեցություն է ունեցել տնտեսության վրա՝ ծրագրված փոքր-ինչ ընդլայնողի պարագայում: Ընդ որում, ծախսումների մասով այն խիստ անհավասարաչափ էր բաշխված եռամսյակի ընթացքում (պետական ծախսերի զգալի մասը կատարվել է եռամսյակի վերջին ամսվա կեսից):

Դրամի արժևորման հետևանքով տնտեսությունում սկսված դրամայնացման գործընթացը խթանելու համար ՀՀ կենտրոնական բանկը հաշվետու եռամսյակի ընթացքում պարբերաբար հանդես է եկել արտարժույթի առքի գործառնություններով, որը գնաճային ճնշումներից խուսափելու նպատակով զուգորդվել է իրացվելիությունը ներքաշող գործիքների կիրառմամբ:

Արդյունքում՝ 2005 թվականի առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականությունը ընթացել է ծրագրվածի շրջանակներում:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[1]

2005 թվականի առաջին եռամսյակում ներքին պահանջարկի 8.6% աճը ձևավորվել է մասնավոր հատվածի ծախսերի շարունակական բարձր աճի և պետական հատվածի ծախսումների աճի տեմպերի նվազման ազդեցությամբ:

[1] *«Համախառն պահանջարկ» բաժնում ներկայացված 2005 թ. առաջին եռամսյակի տվյալները ԿԲ գնահատումներն են:*

Համախառն պահանջարկի տարրերի իրական փոփոխությունները (%)

Ցուցանիշներ	2004 թվականի առաջին եռամսյակը 2003 թվականի առաջին եռամսյակի նկատմամբ, փաստ. %	2005 թվականի առաջին եռամսյակը 2004 թվականի առաջին եռամսյակի նկատմամբ, փաստ. %	2005 թվականի առաջին եռամսյակը 2004 թվականի առաջին եռամսյակի նկատմամբ ծրագիր, %
Իրական ՀՆԱ	107.5	107.8	107.3
Ներքին պահանջարկ	110.3	108.6	108.5
Սպառում	110.5	109.4	108.5
Պետական	116.3	110.2	118.5
Մասնավոր	109.6	109.3	107.0
Կապիտալ ներդրումներ	108.7	101.9	108.5
Պետական	99.6	77.0	97.0
Մասնավոր	114.4	116.1	115.1
Ներմուծում	115.1	118.8	108.5
Արտահանում	109.8	114.3	104.8

Հաշվետու ժամանակահատվածում պահպանվել են մասնավոր հատվածի ծախսերի աճի բարձր տեմպերը՝ հիմնականում պայմանավորված սպառման ավելացմամբ:

Մասնավոր տրանսֆերտների ներհոսքի և բնակչության եկամուտների շարունակական աճի արդյունքում գրանցված մասնավոր սպառման աճը, թեև զիջել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը, սակայն պահպանվել է բարձր՝ 9.3% մակարդակի վրա: Այն 1.5 տոկոսային կետով գերազանցել է տնտեսական աճի ցուցանիշը, և արդյունքում ՀՆԱ-ում մասնավոր սպառման կշիռը կազմել է 103.9%՝ անցյալ տարվա 103.2%-ի համեմատ:

Մասնավոր ներդրումների աճը, մոտ երկու տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, կազմել է 16.1%: Այն, հիմնականում պայմանավորված լինելով տեղական արտադրողների կողմից ֆինանսավորված ներդրումների աճով, վճարային հաշվեկշռում արտացոլվել է հումքի և ներդրումային ապրանքների ներմուծման զգալի ավելացմամբ: Ակնկալվում է, որ տարվա հաջորդ ամիսներին շարունակվելու է մասնավոր ներդրումների աճի տեմպերի ավելացումը՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ներդրումների աճի հաշվին, որը կայուն հիմք է հանդիսանալու տնտեսությունում արտադրողականության բարձրացման համար:

2004 թվականի առաջին եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունը զսպող ազդեցություն է ունեցել տնտեսության վրա՝ ծրագրով նախատեսված փոքր-ինչ ընդլայնողականի համեմատ: Այսպես. պետական եկամուտների՝ ծրագրով նախատեսված ցուցանիշը գերակատարվել է հարկերի հավաքագրման աճի հաշվին, իսկ պետական ծախսերի աճի ցուցանիշը՝ թերակատարվել՝ պետական ներդրումների զգալի թերակատարման հաշվին:

Պետական ծախսերի կառուցվածքում թերակատարում է գրանցվել ինչպես պետական սպառման, այնպես էլ պետական ներդրումների գծով: Ընդ որում, եթե պետական սպառումը աճել է 10.2%՝ ծրագրով նախատեսված է 18.5%-ի պարագայում, ապա պետական ներդրումները ծրագրով նախատեսված 3% նվազման փոխարեն նվազել են 23%-ով: Վերջինս պայմանավորվել է առավելապես ՕԻԳ-երի գծով համաֆինանսավորման ծրագրերի թերակատարմամբ: Արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում պետական ընդհանուր ծախսերն ավելացել են ընդամենը 1.8%-ով՝ ծրագրով նախատեսված 12.9%-ի փոխարեն:

Էական փոփոխություն է արձանագրվել արտաքին հատվածում. զուտ արտահանումը ծրագրով նախատեսված 2.6% իրական աճի փոխարեն նվազել է 6.7%-ով: Զուտ արտահանման նշված շեղումը տեղի է ունեցել ապրանքների և ծառայությունների ներմուծման՝ ծրագրով նախատեսված ցուցանիշից զգալի շեղման հետևանքով. ներմուծման իրական աճը կազմել է 18.8%՝ ծրագրով նախատեսված 8.5% և նախորդ տարվա 15.1%-ի փոխարեն: Դա հիմնականում պայմանավորվել է մասնավոր հատվածի ներդրումների ավելացման շնորհիվ հումքի և ներդրումային ապրանքների ներմուծման զգալի ավելացմամբ: Արտահանման կառուցվածքում մոտ 4 անգամ ավելացել են գունավոր մետաղների արտահանման ծավալները՝ մասամբ պայմանավորված մետաղագործական արդյունաբերության արտադրության ծավալների աճով և համաշխարհային շուկայում դրանց նկատմամբ պահանջարկի աճով: Առանց ադամանդի ներմուծման ցուցանիշը հաշվի առնելու՝ իրական աճը կազմել է 22.4%, իսկ արտահանումը՝ 29.4%:

ՀԱՄԱԽՍՈՒՆ ԱՌԱՋԱՐԿ

2005 թվականի առաջին եռամսյակում, ինչպես և նախորդ տարի, ձևավորված տնտեսական աճին առավել մեծ չափով՝ 3.0 տոկոսային կետով նպաստել է ծառայությունների ոլորտը, որը, սակայն, 2.2 տոկոսային կետով զիջել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Շինարարության ճյուղի նպաստումը տնտեսական աճին մնացել է գրեթե անփոփոխ՝ 1.1 տոկոսային կետ:

Արդյունաբերության ոլորտում գրանցված թողարկման ծավալների աճի արդյունքում 0.8 տոկոսային կետով ավելացել է ՀՆԱ-ում վերջինիս տեսակարար կշիռը, իսկ նպաստումը տնտեսական աճին կազմել է 1.0 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 0.8 տոկոսային կետի փոխարեն:

Գյուղատնտեսության ոլորտում աճի տեմպերի նվազման հետևանքով դրա նպաստումը տնտեսական աճին, նախորդ տարվա համեմատ նվազելով 0.7 տոկոսային կետով, կազմել է ընդամենը 0.1 տոկոսային կետ:

Հաշվետու ժամանակահատվածում ապրանքների զուտ հարկերի ավելացված արժեքի աճը, գերազանցելով նախորդ չորս տարիների համապատասխան ցուցանիշներին, կազմել է 18.4%՝ 2.5 տոկոսային կետով նպաստելով ՀՆԱ իրական աճին:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: 2005 թվականի առաջին եռամսյակում արդյունաբերական արտադրանքի իրական աճի տեմպերն արագացել են՝ պայմանավորված մշակող արդյունաբերության, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ճյուղերում գրանցված թողարկման ծավալների իրական աճի բարձր տեմպերով: Արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում արդյունաբերության ֆիզիկական ծավալի աճը կազմել է 5.1%՝ նախորդ տարվա 2.8% համապատասխան ցուցանիշի փոխարեն:

Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում 10.6% իրական աճը տեղի է ունեցել հիմնականում գազակերպ վառելիքի արտադրության ու բաշխման 84.5% ավելացման հաշվին: Վերջինս հանրապետությունում շարունակվող բնակարանների գազաֆիկացման աշխատանքների ակտիվացման արդյունք է:

Տարամետ դրսևորումներ են արձանագրվել մշակող արդյունաբերության ճյուղում. սննդի արդյունաբերության և ոսկերչական արտադրատեսակների արտադրության նվազման հետ մեկտեղ գրանցվել է մետաղագործական արդյունաբերության աճ:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները 2004-2005թթ. առաջին եռամսյակում, %

Արդյունաբերության ճյուղ	Տեսակարար կշիռ*		Իրական աճ (+) / նվազում (-) **	
	2004	2005	2004	2005
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	24.2	21.3	-1.2	10.6
Հանքագործական արդյունաբերություն	15.0	20.4	3.2	-0.5
Վերամշակող արդյունաբերություն, որից՝	60.7	58.4	3.9	5.2
Սննդի արդյունաբերություն	32.0	23.2	9.1	-12.2
Մետաղագործական արտադրություն	11.4	21.1	-0.6	50.2
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	3.3	2.3	-16.6	-0.3
Քիմիական արդյունաբերություն	3.2	2.2	480	-9.3
Մեքենաների և սարքավորումների արտադրություն	0.7	0.9	-6.5	50.2
Մանածագործական արտադրություն	0.4	0.4	140.3	-6.0
Ամբողջ արդյունաբերություն	100.0	100.0	2.8	5.1

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ (արտադրանքի ծավալները հաշվարկված են ընթացիկ գներով)*

*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում (աճը հաշվարկված է համադրելի գներով)*

Սննդի արդյունաբերության արտադրանքի թողարկման 12.2%-ով նվազման հիմնական պատճառը դրա մոտ 20%-ը կազմող կոնյակի արտադրության ծավալների 23.7% նվազումն է՝ պայմանավորված այդ ոլորտում գործող խոշոր գործարաններից մեկի վերակառուցմամբ: Այնուամենայնիվ, կոնյակի իրացումն ու արտահանումը մնացել են անփոփոխ՝ ի հաշիվ պատրաստի արտադրանքի առկա պաշարների:


Քիմիական արդյունաբերությունում արձանագրված 9.3% անկումը պայմանավորվել է սինթետիկ կաուչուկի արտադրության 15.5% նվազմամբ, որի պատճառը ճյուղի խոշոր ձեռնարկությունում առաջացած ժամանակավոր ֆինանսական խնդիրներն են: Միևնույն ժամանակ, քիմիական արդյունաբերության մեջ մտնող քիմիկադեղագործական արտադրատեսակների արտադրությունն ավելացել է 66.8%-ով:

Մշակող արդյունաբերության երկրորդ խոշոր ենթաճյուղում՝ մետաղագործական արդյունաբերությունում, արտադրության ծավալներն ավելացել են 50.2%-ով՝ հիմնականում ի հաշիվ սև (կոնվերտորային) պղնձի արտադրության մոտ 2.3 անգամ ավելացման: Արդյունքում՝ 2.8 անգամ ավելացել է ճյուղի արտադրանքի արտահանումը: Դա պայմանավորվել է պղնձի համաշխարհային շուկայում ձևավորված բարենպաստ իրավիճակով և պղնձի գնի աննախադեպ բարձր մակարդակով[2]: Ակնկալվում է, որ գունավոր մետաղների արտադրությունը պահպանելու է բարձր աճի տեմպերը նաև տարվա հաջորդ ամիսներին (ճյուղում ընդգրկված խոշոր ձեռնարկություններում իրականացվել են զգալի ներդրումներ):

Մեքենաների և սարքավորումների արտադրության բնագավառում արձանագրված 50.2% աճը հիմնականում համակարգիչների արտադրության 63.2%-ով և սառնարանային ցուցափեղկերի արտադրության 77.3%-ով ավելացման արդյունք է:

Ոսկերչական արտադրատեսակների արտադրության ծավալների նվազման միտումները դանդաղել են, որը մասամբ պայմանավորվել է թանկարժեք քարերի և մետաղների ներմուծման մոտ 50% աճով (հիմնականում՝ հումքի ներմուծման ծավալների ավելացման հաշվին): Նշվածը թույլ է տալիս ենթադրել, որ տարվա հաջորդ ամիսներին այդ ենթաճյուղի արտադրության ծավալներն ավելանալու են:

Նշված զարգացումների արդյունքում էական տեղաշարժեր են գրանցվել արդյունաբերության ենթաճյուղերի կառուցվածքում. սննդի արդյունաբերության տեսակարար կշռի նվազման հետ մեկտեղ մոտ 10 տոկոսային կետով ավելացել է մետաղագործական արդյունաբերության տեսակարար կշիռը: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ 5.4 տոկոսային կետով ավելացել է հանքագործական արդյունաբերության տեսակարար կշիռը, չնայած հաշվետու ժամանակահատվածում այս ենթաճյուղի արտադրության ծավալների աճը ցածր է եղել նախորդ տարվա ցուցանիշից:



Հարկ է նշել, որ սննդի արդյունաբերության տեսակարար կշռի նվազումը ժամանակավոր է, իսկ մետաղագործական արդյունաբերության տեսակարար կշռի աճը, ելնելով գունավոր մետաղների համաշխարհային շուկայի կանխատեսումներից, շարունակվելու է մոտակա երկու տարիներին[3], ուստի արդյունաբերության ճյուղային կառուցվածքում տարվա երկրորդ կեսին ակնկալվում են որոշ տեղաշարժեր, որոնց արդյունքում նշված ճյուղերը հանդիսանալու են արդյունաբերության խոշորագույն ճյուղեր:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: 2005 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսության համախառն արտադրանքը իրական արտահայտությամբ ավելացել է 1.1%-ով՝ նախորդ տարվա 6.2%-ի փոխարեն: Իրական աճի տեմպերի նման անկումը պայմանավորվել է անասնաբուծության թողարկման աճի տեմպերի նվազմամբ: Առաջին հերթին դա կապված է հաշվետու ժամանակահատվածում մսի արտադրության 2.3% նվազման հետ, այն դեպքում, երբ նախորդ տարի այն ավելացել էր 9.7%-ով:

---

[2] Միջազգային շուկաներում գունավոր մետաղների գների աճը սկսվել է դեռ նախորդ տարվա երկրորդ եռամսյակից. պատճառը սահմանափակ առաջարկի պարագայում դրանց պահանջարկի ավելացումն էր՝ պայմանավորված հիմնական սպառողների՝ ԱՄՆ-ի և Չինաստանի տնտեսության կայուն աճով: Գների նման վարքագիծը խթանել է 2005 թվականի առաջին եռամսյակի ընթացքում այդ շուկայում արձանագրված սպեկուլյատիվ կապիտալի ներհոսքը, որի հետևանքով, օրինակ, պղնձի գինը հասել է աննախադեպ բարձր մակարդակի:

[3] Դա պայմանավորված է համաշխարհային շուկայում գունավոր մետաղների պահանջարկի կայուն աճով և դրանց առաջարկի ավելացման համար անհրաժեշտ մեծածավալ և երկարաժամկետ ներդրումներով: Տվյալների աղբյուրը՝ Bloomberg, International Copper Study Group (ICSG), World Bureau of Metal Statistics, Economist Intelligence Unit.


Նվազել են նաև ձվի արտադրության աճի տեմպերը. նախորդ տարվա մոտ 14% աճի փոխարեն արձանագրվել է 3% նվազում: Միևնույն ժամանակ, կաթի արտադրության աճը կազմել է 11.5%՝ նախորդ տարվա առաջին եռամսյակում գրանցված 3.3%-ի փոխարեն:

Բուսաբուծության ոլորտում գարնանացան մշակաբույսերի ցանքատարածությունները նվազել են մոտ 50%-ով՝ ի հաշիվ հացահատիկային և հատիկաընդավոր մշակաբույսերի ցանքատարածությունների մոտ 4.3 անգամ նվազման:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Կապիտալ շինարարության ոլորտում զգալի արագացել են աճի տեմպերը, և 2005 թվականի առաջին եռամսյակում իրականացված կապիտալ շինարարության ծավալները իրական արտահայտությամբ ավելացել են 22.3%-ով՝ 2004թ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 10.7%-ի փոխարեն:

Շինարարության ծավալների նշված աճը հիմնականում կազմակերպությունների միջոցների հաշվին կատարված կապիտալ շինարարության 74.7% աճի արդյունք է, որը տեղի է ունեցել մշակող արդյունաբերության ոլորտում իրականացված շինարարության ծավալների ավելացման հաշվին: Արդյունքում՝ կապիտալ շինարարության ֆինանսավորման կառուցվածքում կազմակերպությունների միջոցների տեսակարար կշիռն ավելացել է մոտ 9 տոկոսային կետով և կազմել 30.9%:

Հաշվետու ժամանակահատվածում նվազել են բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարության աճի տեմպերը. 2005 թվականի առաջին եռամսյակում այն կազմել է 8.3%՝ նախորդ տարվա 250%-ի փոխարեն: Արդյունքում՝ բնակչության միջոցների տեսակարար կշիռը կապիտալ շինարարության ֆինանսավորման կառուցվածքում նվազելով 6.6 տոկոսային կետով՝ կազմել է 51.1%:



Կապիտալ շինարարության ճյուղային կառուցվածքում առանձնանում է մշակող արդյունաբերության ճյուղում իրականացված կապիտալ շինարարության աճը, որի արդյունքում նշված ճյուղի տեսակարար կշիռը ողջ շինարարության կառուցվածքում, նախորդ տարվա համեմատ ավելանալով մոտ 8 տոկոսային կետով, կազմել է 10.3%:

Ծառայությունների ոլորտում իրականացված կապիտալ շինարարության տեսակարար կշիռը թեև գրեթե չի փոխվել, այնուամենայնիվ գրանցվել է դրա վերաբաշխում ըստ ծառայությունների առանձին ճյուղերի: Այսպես, տրանսպորտի, կապի, առևտրի և նորոգման ոլորտներում իրականացված շինարարության տեսակարար կշռի նվազման հետ մեկտեղ մոտ 7 տոկոսային կետով ավելացել է կոմունալ ծառայությունների տեսակարար կշիռը:

Զգալի տեղաշարժ է գրանցվել դրա ֆինանսավորման կառուցվածքում. պետական բյուջեի միջոցների տեսակարար կշռի մոտ 16 տոկոսային կետով նվազման հետ մեկտեղ մոտ 27 տոկոսային կետով ավելացել է բնակչության միջոցների տեսակարար կշիռը և կազմել 37.3%:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Ծառայությունների ոլորտում նախորդ տարիներին գրանցված բարձր աճի տեմպերը որոշակի նվազել են. տրանսպորտի և կապի ճյուղում ավելացված արժեքի իրական աճը 2005 թվականի առաջին եռամսյակում կազմել է 10.6%՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի 11.7%-ի փոխարեն, իսկ առևտրի և հանրային սննդի ծառայությունների ավելացված արժեքի աճը՝ 3.5%՝ 2004թ. առաջին եռամսյակի 9.5%-ի փոխարեն:

Այնուհանդերձ, մատուցված ծառայությունների կառուցվածքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե չի փոփոխվել, և դրանում շարունակել են գերակշռել տրանսպորտի (32.6%) և կապի (25.6%) ծառայությունները:

Տրանսպորտի ոլորտում աճել են ինչպես բեռնաշրջանառության, այնպես էլ ուղևորաշրջանառության ցուցանիշները՝ կազմելով, համապատասխանաբար 22.9% և 5.2%: Ընդ որում, բեռնաշրջանառության ցուցանիշն աճել է խողովակաշարային տրանսպորտով բեռնաշրջանառության 33.2%-ով ավելացման հաշվին, որը համահունչ է արդյունաբերության մեջ գազի արտադրության և բաշխման գծով արձանագրված զգալի աճին: Ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների՝ նախորդ տարիներին գրանցված աճի միտումը շարունակվել է նաև հաշվետու ժամանակահատվածում: Ընդ որում, երկաթուղային տրանսպորտի ճյուղի ակտիվացումը առաջին հերթին պայմանավորվել է հանքագործական և մետաղագործական արդյունաբերության շարունակական ակտիվացմամբ, ինչպես նաև ցեմենտի արտադրության աճով:

Հաշվետու ժամանակահատվածում կապի ոլորտի մատուցած ծառայություններից ստացված հասույթը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ իրական արտահայտությամբ ավելացել է 20.2%-ով՝ նախորդ տարվա 17.5%-ի փոխարեն: Տարվա հաջորդ ամիսներին ակնկալվում է նշված ցուցանիշի զգալի ավելացում՝ պայմանավորված ոլորտում ներկայումս գործող ձեռնարկության կողմից իրականացվող ներդրումներով, ինչպես նաև բջջային հեռախոսակապի նոր օպերատորի գործունեության մեկնարկով:

Առևտրի ոլորտում առևտրաշրջանառության ցուցանիշն ավելացել է 1.9%-ով[4]: Ընդ որում, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալն ավելացել է 3.5%-ով (նախորդ տարի դրա աճը կազմել էր 9.5%):

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

2005 թվականի համար ՀՀ ԿԲ կողմից ծրագրվել է ժամանակահատվածի վերջի դրությամբ 3.0% և միջին տարեկան 2.2% գնաճ: Տարեկան գնաճի ցուցանիշն ապահովելու համար առաջին եռամսյակի վերջի դրությամբ և միջին գնաճի ցուցանիշները պետք է կազմեին համապատասխանաբար 2.2% և 2.1%: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության փաստացի տվյալների՝ առաջին երեք ամիսներին արձանագրվել է. ժամանակահատվածի վերջի դրությամբ 3.7% գնաճ և միջին գնաճի 4.4% ցուցանիշ:

Հաշվետու ժամանակահատվածում գների մակարդակի ձևավորման վրա էական ազդեցություն է ունեցել տրանսֆերտների ներհոսքը, որն ատահայտվել է համախառն պահանջարկի աճով:

Համախառն պահանջարկի աճը սպառողական շուկայում հիմնականում դրսևորվել է պարենային ապրանքախմբի պահանջարկի աճով, որը գյուղատնտեսական մթերքների առաջարկի սեզոնային սահմանափակության պայմաններում հանգեցրել է պարենային ապրանքների, ներառյալ ոգելից խմիչքի և ծխախոտի, գների աննախադեպ բարձր՝ 5.5%[5] ավելացման: Զգալի՝ 40% աճ է արձանագրվել «բանջարեղեն և կարտոֆիլ» ենթախմբում՝ պայմանավորված «թարմ լոլիկի» 121.3%, «խառը կանաչու» 124.4%, «թարմ վարունգի» 40%, «թարմ կաղամբի» 38.6% և «կարտոֆիլի» 14% գների աճով: Էական է եղել նաև «միրգ» ենթախմբում ներառված ապրանքների գների աճը՝ 17.5%: Գնաճ է արձանագրվել նաև «ձկնամթերք» ապրանքախմբում՝ 36.8%:

Ոչ պարենային ապրանքների, որոնց մեջ մեծ է ներմուծված ապրանքների կշիռը, գները մնացել են անփոփոխ՝ չնայած փոխարժեքի արժեքավորմանը: Ներմուծված ապրանքների գները բարձրացել են մոտ 0.4%-ով, բացառությամբ բենզինի, որի գները նվազել են մոտ 6%-ով:

2005 թ. (2004թ. դեկտ. = 100)	ՍԳԻ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	Ոչ պարենային ապրանքներ	Վճարովի ծառայություններ
Հունվար	105.4	107.7	100.8	100.2
Փետրվար	104.7	107.0	100.5	98.9
Մարտ	103.7	105.5	100.1	99.5

[4] 2004թ. համապատասխան ցուցանիշները բացակայում են, քանզի, սկսած 2005 թվականից, Ազգային վիճակագրական ծառայությունը փոխել է այդ ցուցանիշների ներկայացման ձևը և այսուհետ դրանք հաշվարկելու է ըստ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի»:

[5] «Գներ և սակագներ» բաժնում զետեղված ցուցանիշները 2004 թվականի դեկտեմբերի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

Մի շարք ներկրվող ապրանքատեսակների գների վրա դոլարի արժեզրկումը ազդեցություն չի ունեցել, որը բացատրվում է հետևյալ հանգամանքներով:

Ամենաէականը որոշ ապրանքային շուկաներում առկա ոչ մրցակցային կամ մենաշնորհային պայմաններն են: Օրինակ՝ համաձայն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ շաքարավազի շուկայում խոշորագույն ներմուծողի տեսակարար կշիռը կազմում է 97.9% (համեմատության համար նշենք, որ բենզինինը կազմում է 21.5%)[6], և շաքարավազի գները, չնայած դրամի արժեքավորմանը, գրեթե չեն փոփոխվել:

Այսինքն՝ որոշ ներմուծողներ, օգտվելով մենաշնորհային դիրքից կամ ոչ կատարյալ մրցակցային պայմաններից, չեն նվազեցրել իրենց կողմից ներմուծված ապրանքների գները:

Հաջորդ հանգամանքն այն է, որ դրամի փոխարժեքի արժեքավորումը լագավորված է ազդում ներմուծվող ապրանքների գների մակարդակի վրա: Դա պայմանավորված է նրանով, որ ներմուծողների կողմից գների սահմանումը կախված է փոխարժեքի վարքագծի սպասումներից: Դրամի փոխարժեքի արժեքավորման և կայունացման երկար ժամանակահատված է անհրաժեշտ, որպեսզի տնտեսավարող սուբյեկտները ճշգրտեն իրենց ներմուծած ապրանքների գները:

Միևնույն ժամանակ, ապրանքի գինը, բացի գնման գնից, կախված է նաև այլ ծախսերից՝ մասնավորապես աշխատավարձերից, իսկ դոլարի արժեզրկմանը զուգահեռ արձանագրվել է նաև պահանջարկի և աշխատավարձերի աճ: Այսինքն՝ ներմուծվող գների կայունությունը կարելի է բացատրել նաև այս հանգամանքով:

Եվ վերջապես, շատ ապրանքների գները, պայմանավորված արգելանիվի էֆեկտով, նույնչափ ճկուն չեն նվազման ուղղությամբ, որքան՝ աճի:

Չնայած համախառն պահանջարկի ընդլայնմանը և պարենային ապրանքների գների աճին՝ եռամսյակի ընթացքում ծառայությունների սակագները նվազել են 0.5%-ով՝ հիմնականում տրանսպորտի և կապի ծառայությունների, ինչպես նաև բուժսպասարկման սակագների՝ համապատասխանաբար 1.1% և 3.2% նվազման հաշվին: Միևնույն ժամանակ, բարձրացել են սպառողական զամբյուղում ընդգրկված այլ ծառայությունների գները (մասնավորապես՝ հագուստի կարի ծառայության գներն աճել են 8.8%-ով, քիմմաքրման-լվացքատան ծառայություններինը՝ 1.8%-ով, կենցաղային սարքերի նորոգմանը՝ 0.6%-ով, իսկ մշակույթի ոլորտինը՝ 1.8%-ով): Պահանջարկի աճին զուգահեռ ծառայությունների գների համեմատաբար չեզոք վարքագիծը բացատրվում է այն հանգամանքով, որ ծառայություններն, ի տարբերություն, օրինակ, արդյունաբերության, ցածր կապիտալատարության և աշխատուժի որակավորման նկատմամբ համեմատաբար ցածր պահանջների շնորհիվ պահանջարկի աճին ավելի հետշտությամբ կարող են արձագանքել՝ ավելացնելով թողարկման ծավալները:

ՀՆԱ ԴԵՖԼՅԱՏՈՐ ԵՎ ՑՅՈՒՂԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

Ներքին տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների գների մակարդակը բնութագրող ՀՆԱ դեֆլյատորը 2005 թվականի առաջին եռամսյակում կազմել է 106.0 տոկոս:

Միջին գնաճի համեմատ դեֆլյատորի բարձր մակարդակի ձևավորմանը մեծապես նպաստել են արտաքին գործոնները. տրանսֆերտների ներհոսք, գունավոր մետաղների միջազգային գների աճ: Ընդ որում, եթե տրանսֆերտների ներհոսքը, նպաստելով համախառն պահանջարկի ընդլայնմանը, արտահայտվել է գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների 7.3% աճով, ապա գունավոր մետաղների գների աճը, գունավոր մետալուրգիայի արտադրանքի գների 62.7% ավելացման միջոցով, հանգեցրել է արդյունաբերողների արտադրանքի գների 15.2% աճի:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների աճը անասնապահական մթերքների իրացման գների 10.8% աճի հետևանք է: Միևնույն ժամանակ, բուսաբուծական մթերքների իրացման գները նվազել են 1.6%-ով՝ հիմնականում պայմանավորված հացահատիկի իրացման գների անկմամբ:


Հաշվետու ժամանակահատվածում բեռնափոխադրումների սակագների ինդեքսը նվազել է 7.1 տոկոսով: Ընդ որում, նվազել են բեռնափոխադրումների բոլոր տեսակների սակագները՝ երկաթուղային տրանսպորտինը՝ 7.6%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 2.9%, օդային տրանսպորտինը՝ 8.9%, խողովակաշարային տրանսպորտինը՝ 7.2%:

2005 թվականի հունվար-մարտին, նախորդ տարվա համապատասխան ժամանակշրջանի համեմատ, շինարարության գներն աճել են 7.9%-ով:

---

[6] ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի «2003 թվականի տարեկան գործունեության ծրագիր»:

2004-2005 թթ. առաջին եռամսյակի ընթացքում գների փոփոխություններն ըստ տնտեսության առանձին ճյուղերի (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

2005 թվականի հունվար-մարտին հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմել է 8.9%՝ տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը՝ 1194.0 հազար մարդ, որոնցից 106.8 հազարը չեն ունեցել աշխատանք՝ գրանցվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում՝ որպես գործազուրկ: Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ հանրապետությունում գործազրկության մակարդակը նվազել է 0.9 տոկոսային կետով:

Գրանցված գործազրկության մակարդակի և տնտեսական աճի պայմաններում առաջին եռամսյակի ընթացքում արտադրողականության իրական աճը կազմել է 9.2%:


Վերջին հնգամյակի ընթացքում արձանագրված արտադրողականության շարունակական աճը, հանգեցնելով աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճի, խթանել է աշխատավարձի աճը: Այսպես՝ 2005 թվականի հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, տնտեսության միջին անվանական աշխատավարձի աճը կազմել է 23.7%, իրականի աճը՝ 18.5%:

Նշենք նաև, որ իրական աշխատավարձի աճը գների վրա ունեցել է խթանող ազդեցություն, քանի որ բարձր է եղել արտադրողականության աճի ցուցանիշից:


Փոխհարաբերությունները ՀՀ պետական բյուջեի հետ [1]

2005 թվականի առաջին եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունն ընթացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածին բնորոշ՝ ծրագրված համամասնությունների նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գերակատարմամբ և ծախսերի թերակատարմամբ՝ հիմնականում պայմանավորված ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծախսերի թերի կատարմամբ: Հատկանշական է, որ այս տարի ևս շարունակվել է բյուջեի հարկային եկամուտների՝ նախորդ տարիներին արձանագրված գերակատարման միտումը:

Ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը եռամսյակի արդյունքում ունեցել է փոքր-ինչ զսպող ազդեցություն: Ընդ որում, եկամուտների ազդակը կազմել է 0.4 զսպող, իսկ ծախսերինը՝ 0.2 զսպող:




ՀՀ պետական բյուջեի փաստացի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են տարեկան ծրագրի 22 տոկոսը, իսկ հարկային եկամուտները (ներառյալ պետական տուրքը)՝ 20.7 տոկոսը, մինչդեռ, ըստ ՀՀ 2005 թվականի պետբյուջեի եռամսյակային համամասնություններով նախատեսված առաջին եռամսյակի ծրագրի՝ նշված ցուցանիշները պետք է կազմեին համապատասխանաբար՝ 20.8 տոկոս և 20.3 տոկոս:



[1] *Հաշվետվությունում օգտագործվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ ԿԲ ներկայացված պետբյուջեի 2004 թվականի փաստացի և 2005թ. առաջին եռամսյակի նախնական փաստացի ցուցանիշները:*

Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները ավելացել են 36.6%-ով, հարկեր և տուրքերը՝ 19.8 %-ով, իսկ կապիտալ եկամուտները՝ 69.5%-ով: Ոչ հարկային եկամուտները կազմել են 8.3 մլրդ դրամ (նախորդ տարվա 1.7 մլրդ դրամի փոխարեն), որից 6.2 մլրդ դրամը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականաշնորհումից ստացված մուտքերն են: Հարկային եկամուտների մեջ նախորդ տարվա համեմատ 1 տոկոսային կետով նվազել է անուղղակի հարկերի կշիռը՝ կազմելով 66.3%, իսկ անուղղակի հարկերի աճը կազմել է 18.3 տոկոս: Ընդ որում, ավելացված արժեքի հարկը և մաքսատուրքը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ համապատասխանաբար աճել են 26.2% և 56.6%-ով, իսկ ակցիզային հարկը նվազել է 12.5-ով: Ուղղակի հարկերը, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ, աճել են 31.4%-ով սակայն դեռևս ցածր է դրանց տեսակարար կշիռը հարկային եկամուտներում (18.4%, աճը՝ 1.6 տոկոսային կետ): Շահութահարկի աճը կազմել է 36.3%. պահպանվել է շահութահարկի հավաքագրման՝ նախորդ տարվանից արձանագրված դրական միտումը: Այլ հարկային եկամուտներն ավելացել են 26.6 տոկոսով, իսկ պետական տուրքը նվազել է 5 տոկոսով:

Դրամաշնորհները կազմել են 2.9 մլրդ դրամ՝ ծրագրված 0.9 մլրդ-ի փոխարեն, որը պայմանավորված էր Հոլանդական դրամաշնորհի՝ նախատեսված ժամկետից շուտ ստացմամբ:




Պետական բյուջեի փաստացի ծախսերը[2] կազմել են ծրագրվածի 77%-ը. ընթացիկ ծախսերը կազմել են ծրագրվածի 85.6%-ը, իսկ կապիտալ ծախսերը՝ 42.7 %-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ծախսերն ավելացել են 5.2%-ով. ընթացիկ ծախսերը՝ 8.3%-ով, զուտ վարկավորումը՝ 40%-ով, իսկ կապիտալ ծախսերը նվազել են 18.1 %-ով: Կապիտալ ծախսերի թերակատարման հիմնական պատճառը ներքին ֆինանսավորման կապիտալ ծախսերի նախատեսված ծավալների թերի կատարումն էր՝ ծրագրված 9.9 մլրդ դրամի փոխարեն փաստացին կազմել է 3.4 մլրդ դրամ: Ընթացիկ ծախսերի մեջ պետական սպառումը և տրանսֆերտները, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ, աճել են համապատասխանաբար 10.5%-.ով և 32%-ով, իսկ լրահատկացումները (սուբսիդիաները) նվազել են 41%-ով:

Պետբյուջեի հարկային եկամուտների ծրագրված մակարդակների ապահովմանը զուգահեռ, եռամսյակի ընթացքում շարունակվել են հարկերի հավաքագրման անհամաչափության մեղմման՝ նախորդ տարվա ընթացքում դրսևորված դրական միտումները. հունվար, փետրվար և մարտ ամիսների վերջին երեք օրերին հավաքագրված հարկերի միջին ցուցանիշը կազմել է 19.6%, ինչպես և նախորդ տարի էր, իսկ ամսվա վերջին օրը հավաքագրված հարկերի միջին ցուցանիշը կազմել է 9.4 % (նախորդ տարի՝ 12.5%):


Հարկերի հավաքագրման ոլորտի դրական տեղաշարժերը եռամսյակի ընթացքում ուղեկցվել են ծախսերի կատարման գործընթացում առկա որոշակի խնդիրներով. այն է՝ ծախսերի ծրագրված սահմանաչափերի թերի իրականացմամբ և ծախսերի անհավասարաչափ բաշխվածությամբ: Վերջինիս հետևանքով զգալի միջոցներ են կուտակվել ՀՀ գանձապետարանի միասնական և Կառավարության ժամկետային ավանդների հաշիվներում, որոնց միջին օրական մնացորդը կազմել է 64 մլրդ դրամ՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի 38.8 մլրդ դրամի և 2003 թվականի առաջին եռամսյակի 6.5 մլրդ դրամի փոխարեն:

[2] Հարկ է նշել, որ առկա է անհամապատասխանություն պետբյուջեի եռամսյակային ծրագրերի միջև. եռամսյակային համամասնությունների սահմանված առաջին եռամսյակի ծրագիրը չի համապատասխանում 2005թ. առաջին երեք ամիսների համար ներկայացված ծրագրերի արդյունքում ստացվող առաջին եռամսյակի ծրագրին:

Ընդ որում, մարտի վերջի դրությամբ միասնական հաշվի մնացորդը կազմել է 27.6 մլրդ դրամ, իսկ ժամկետային ավանդի հաշվում միջոցների մնացորդը՝ 37 մլրդ դրամ: Միասնական հաշվի միջին մեծությունը հատկապես բարձր էր հունվար և փետրվար ամիսներին՝ պայմանավորված բյուջեի ծախսերի շատ ցածր մակարդակով, որի հետևանքով փողի բազան կառավարվել է տատանման թույլատրելի միջակայքի ստորին սահմանում: Մարտին, բյուջեի ծախսերի եռամսյակային ծրագրված ցուցանիշի ապահովման համար, ծախսերի ավելի մեծ մակարդակ իրականացնելու պայմաններում արծանագրվել է ԿԲ-ից դուրս կանխիկի, հետևաբար՝ փողի բազայի աճ:



Պետբյուջեի եկամուտների և ծախսերի՝ վերը ներկայացված մակարդակների պայմաններում առաջին եռամսյակում հավելուրդը կազմել է 7.8 մլրդ դրամ՝ ծրագրված 16.4 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն: Բյուջեի հավելուրդի ֆինանսավորումը կազմել է 13.8 մլրդ դրամ, որը հիմնականում ձևավորվել է ֆինանսավորման ներքին աղբյուրներից առաջացած խնայողությունների հաշվին: Վերջինս կազմել է 17.5 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը՝ 3.6 մլրդ դրամ: Ներքին աղբյուրներից խնայողությունների պատճառը եռամսյակի ընթացքում Գանձապետարանի միասնական հաշվում Կառավարության միջոցների կուտակումներն են՝ պայմանավորված եկամուտների գերակատարմամբ և ծախսերի թերի կատարմամբ: Բացի դրանից, ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության ավանդներն առաջին եռամսյակի ընթացքում ավելացել են 37.3 մլրդ դրամով, որը միասնական հաշվի միջոցների, մասամբ էլ Գանձապետարանի կողմից պետական պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցների ավանդադրման արդյունք էր: Հարկ է նշել, որ ըստ եռամսյակային համամասնություններով սահմանված առաջին եռամսյակի ծրագրի՝ միասնական հաշվից նախատեսված էր 6.3 մլրդ դրամի ծախս, մինչդեռ փաստացի կուտակվել է 14.5 մլրդ դրամ:



Պետական արժեթղթերի զուտ ֆինանսավորումը կազմել է 7.4 մլրդ դրամ՝ ծրագրված 3.3 մլրդ դրամի փոխարեն: Փաստացի նման մակարդակի ձևավորումը պայմանավորվել է պետական արժեթղթերի լրացուցիչ թողարկումներով՝ որոնք ավանդադրվել են Կենտրոնական բանկում՝ ՀՀ բանկային համա-

կարգի իրացվելիության կարգավորման նպատակով: Հատկանշական է, որ արժեթղթերի ժամկետայնության երկարացմանը զուգընթաց, շարունակվել է տոկոսադրույքների նվազման միտումը: Այսպես, եռամսյակի ընթացքում թողարկված արժեթղթերի միջին եկամտաբերությունը ՊԿՊ-ի համար կազմել է 4.02%՝ նախորդ տարվա 6.3 % -ի փոխարեն, իսկ պետական միջինժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 6 %՝ նախորդ տարվա 9 % -ի փոխարեն:

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման ոլորտում վերջին տարիներին դրսևորվել են ՀՀ պետական բյուջեի եռամսյակային համամասնությունների և ամսական ծրագրերի միջև շեղումեր: Առաջին եռամսյակի ամսական ծրագրերում միասնական հաշվից նախատեսված շարժերը չեն համապատասխանել եռամսյակային համամասնություններով նախատեսված՝ պետական բյուջեի ծախսերի և պակասուրդի մակարդակներին: Այս պարագայում, պետբյուջեի ծրագրերի անհամապատասխանությունը էական անորոշություններ է առաջացրել դրամավարկային ծրագրավորման և դրա հետևանքով՝ բանկային համակարգի իրացվելիության կառավարման գործընթացում: Կապված պետական գնումների գործընթացում հունվար և փետրվար ամիսներին առկա որոշակի խնդիրների հետ, արձանագրվել է պետբյուջեի ծրագրված ցուցանիշների համեմատ ծախսերի կատարման ցածր մակարդակ: Եռամսյակի ծախսերի ծրագրի ապահովման նպատակով մարտին ծախսերի կատարումը որոշ չափով մեղմել է բյուջեի զսպողական ազդեցությունը: Այդուհանդերձ, կոորդինացման ոլորտում բարելավվել է իրացվելիության կառավարման գործընթացը: Մասնավորապես՝ շարունակվել է պետական պարտատոմսերի լրացուցիչ թողարկումների և ՀՀ կենտրոնական բանկում դրանց ավանդադրման գործընթացը:

Արտաքին հատված

2005 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով առաջին եռամսյակում կանխատեսվել էր վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատում անվանական արտահայտությամբ և ՀՆԱ-ում տեսակարար կշռով: Ծրագրով կանխատեսվել էր ապրանքների արտահանման և ներմուծման ծավալների աճ՝ համապատասխանաբար 14 տոկոսով, որի արդյունքում ակնկալվում էր նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապրանքային հաշվեկշռի պակասուրդի խորացում 13 տոկոսով: Նախատեսվում էր ընթացիկ հաշվի մյուս հոդվածների, մասնավորապես՝ ծառայությունների ու եկամուտների հաշվեկշիռների վատացում, իսկ ընթացիկ տրանսֆերտների զուտ ներհոսքի աճ:

ԿԲ գնահատումներով[1]՝ արտահանումը (կրեդիտ) առաջին եռամսյակի ընթացքում ավելացել է 28 տոկոսով և կազմել 199 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման աճը հիմնականում պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ ու դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճով՝ 43 մլն ԱՄՆ դոլար և 15 մլն ԱՄՆ դոլար: Սակայն գրանցվել է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալների կրճատում 29 տոկոսով, որը զսպել է արտահանման աճի տեմպը, քանի որ մեծ տեսակարար կշիռ ունի արտահանման կառուցվածքում:


Նույն ժամանակահատվածում ներմուծումը (դեբետ) եռամսյակի ընթացքում աճել է 28 տոկոսով և կազմել 329 մլն ԱՄՆ դոլար: Ավելացել են մի շարք ապրանքախմբերի ներմուծման ծավալները: Ներմուծման աճին մեծապես նպաստել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Հանքահումքային մթերքներ», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» հոդվածների աճերը՝ 33 մլն ԱՄՆ դոլար, 18 մլն ԱՄՆ դոլար, 14 մլն ԱՄՆ դոլար և 10 մլն ԱՄՆ դոլար համապատասխանաբար: Ներմուծման աճի պատճառը հիմնականում բարձր ներքին պահանջարկն է ինչպես սպառողական ապրանքների, այնպես էլ կապիտալ և հումքային ապրանքների նկատմամբ: Որոշակի դրական ազդեցություն է ունեցել նաև դոլարի արժեզրկումը դրամի նկատմամբ:

Ապրանքների արտահանման ու ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ու ներմուծման ծավալները 2005 թվականին սկսել են ավելանալ: Նշված ապրանքախմբի արտահանումն ու ներմուծումը կրճատվել էր դեռևս 2003 թվականի վերջից և շարունակվել 2004 թվականի ընթացքում: Եթե արտաքին առևտրի վարքագիծը դիտարկենք առանց վերը նշված ապրանքախմբի, ապա արտահանման աճը կկազմի 31 տոկոս, իսկ ներմուծման աճը՝ 27 տոկոս: Առևտրի հաշվեկշիռը[2], առանց այդ ապրանքախմբի ցուցանիշը հաշվի առնելու, խորացել է մոտ 29 մլն ԱՄՆ դոլարով (23 տոկոսով), իսկ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածը, ներառյալ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, ավելացել է 47 մլն դոլարով (36 տոկոսով):

Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների ցուցանիշները ծրագրայինից էապես չեն շեղվել, բացի ընթացիկ տրանսֆերտներ հոդվածից, որի աճի տեմպը մոտ երկու անգամ գերազանցել է ծրագրվածը: Ընթացիկ տրանսֆերտները 2005 թվականի առաջին եռամսյակում ավելացել են 43 տոկոսով և կազմել 56 մլն ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ ընթացիկ հաշվի պակասուրդը առաջին եռամսյակում կազմել է 91 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 74 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Արտաքին հատվածի կարևորագույն ցուցանիշներից մեկը՝ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 18.8 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով 0.6 տոկոսային կետով:

[1] 2005 թվականի առաջին եռամսյակի վճարային հաշվեկշռի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են:
[2] Առևտրի հաշվեկշիռը հաշվարկված է արտահանման FOB գներով և ներմուծման CIF գներով:

Առևտրային բանկերի ՁԱՀ-ն եռամսյակի ընթացքում գրեթե չեն փոխվել. արտաքին ակտիվների և արտաքին պարտավորությունների կրճատման արդյունքում պահպանվել է 2004 թվականի մակարդակը՝ 6.6 մլն ԱՄՆ դոլար և 5.4 մլն ԱՄՆ դոլար համապատասխանաբար: Ընդ որում՝ ռեզիդենտների արտարժութային ավանդները (առանց կուտակված տոկոսների) եռամսյակի ընթացքում ավելացել են ընդամենը 1.6 մլն ԱՄՆ դոլարով:



Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[3] 2005 թվականի առաջին եռամսյակի վերջին կազմել են 33.0 մլն դոլար՝ նախորդ տարվա 22.0 մլն դոլարի փոխարեն: Առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 13.8 մլն դոլարի վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 3.0 մլն դոլարի հիմնական գումարի մարումներ:

2005 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա վերջի համեմատությամբ, վարկատու երկրների կազմում ավելացել է մեկ նոր վարկատու երկիր՝ Կիպրոսը, ինչպես նաև փոփոխվել են վարկատու երկրների տեսակարար կշիռներն ամբողջի մեջ: Մասնավորապես, ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 18.2 % (նախորդ տարվա վերջում՝ 1.7%), ԱՄՆ-ն՝ 16.9% (նախորդ տարվա վերջում՝ 18.9%), Շվեյցարիան՝ 15.2% (նախորդ տարվա վերջում՝ 22.7 %) և Կիպրոսը՝ 15.2 %:

Հաշվետու եռամսյակի ընթացքում նոր ներգրավված վարկերը հիմնականում տեղաբաշխվել են արդյունաբերության և ֆինանսական հատվածներում: Արդյունքում՝ արդյունաբերության հատվածում տեղաբաշխված միջոցները կազմել են 9.8 մլն դոլար, ֆինանսական հատվածում՝ 8 մլն դոլար, էներգետիկայի հատվածում՝ 5 մլն դոլար, առևտրի հատվածում՝ 4.3 մլն դոլար, գյուղատնտեսության հատվածում՝ 3.5 մլն դոլար:


2005 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ տարվա վերջի (2004 թվականին՝ 5.6 %) համեմատ աճել է և կազմել 5.8 %, որոնց մոտ 40.0 %-ը լողացող (LIBOR) տոկոսադրույքով են: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 3.3 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռն աճել է և կազմել ներգրավված վարկերի 22.9 %-ը՝ նախորդ տարվա 6.9 %-ի փոխարեն:

2000-2005 թվականներին ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը ունեցել է հետևյալ դինամիկան[4]:


---

[3] Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:

[4] 2003 թվականից ներառված են նաև վարկային կազմակերպությունների տվյալները:



2005 թվականի առաջին եռամսյակում, ինչպես և նախորդ տարի, արձանագրվել է կապիտալի ու ֆինանսական միջոցների զգալի ներհոսք: Միջոցների զգալի մասը ստացվել է մասնավոր տրանսֆերտների ու գործոնային եկամուտների տեսքով, որոնք ուղղվելով արտարժույթի շուկա՝ էական ճնշումներ են առաջացրել ՀՀ դրամի փոխարժեքի վրա՝ արժեքավորման ուղղությամբ: Արդյունքում՝ 2005 թվականի առաջին եռամսյակում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար անվանական միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 460 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեքավորվելով 15.6 տոկոսով: Եռամսյակի վերջի դրությամբ փոխարժեքը կազմել է 458.13 դրամ՝ նախորդ տարվա վերջի համեմատ արժեքավորվելով 5.7 տոկոսով:




Գրեթե բոլոր երկրներում (այդ թվում՝ նաև Արևելյան Եվրոպա և ԱՊՀ) նույնպես տեղի է ունեցել սեփական արժույթի արժևորում, որի հիմնական պատճառները այդ երկրներում արձանագրված կապիտալի մեծածավալ ներհոսքն է և եվրոյի նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրկումը: Ընդ որում, քանի որ կապիտալի ներհոսքի ժամանակահատվածները տարբեր են այդ երկրներում և տարբեր են նաև եվրոյի նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրկման լագային ազդեցությունները (հիմնականում ի հաշիվ միջազգային շուկաներին ինտեգրման աստիճանից կախված), ապա վիճակագրությունը ներկայացված է մի քանի տարվա կտրվածքով՝ 2001 թվականի նկատմամբ կուտակային սկզբունքով:

Երկրների անվանումները	2002-ի դեկտեմբերը 2001-ի դեկտեմբերի նկատմամբ %	2003-ի դեկտեմբերը 2001-ի դեկտեմբերի նկատմամբ %	2004-ի դեկտեմբերը 2001-ի դեկտեմբերի նկատմամբ %
Ալբանիա	-2.06	-21.95	-32.16
Հայաստան	4.11	0.75	-13.52
Ադրբեջան	2.47	3.10	2.68
Բելառուս	21.52	36.46	37.34
Բուլղարիա	-14.86	-30.18	-35.14

Չեխիա	-16.88	-29.26	-38.31
Էստոնիա	-15.55	-29.85	-35.16
Վրաստան	1.46	0.97	-11.17
Հունգարիա	-19.31	-25.48	-35.39
Ղազախստան	2.93	-3.98	-13.45
Ղրղզստան	-3.42	-7.40	-12.78
Լատվիա	-7.81	-15.63	-18.75
Լիտվա	-17.25	-31.00	-36.75
Մակեդոնիա	-15.28	-29.09	-34.84
Մոլդովա	5.58	0.99	-4.81
Լեհաստան	-3.76	-6.27	-25.06
Ռումինիա	6.02	3.16	-8.01
Ռուսաստան	5.44	-2.29	-7.93
Սլովակիա	-17.39	-31.96	-41.20
Սլովենիա	-11.91	-24.54	-29.77
Թուրքիա	13.35	-3.69	-7.63
Ուկրաինա	0.57	0.57	0.19
Եվրո	-15.93	-30.09	-35.40

Ինչպես երևում է աղյուսակից, Արևելյան Եվրոպայի երկրներում արժևորման գործընթացը սկսվել է ավելի վաղ (2002 թվականից), քան ԱՊՀ երկրներում (հիմնականում 2004 թվականից): Ընդ որում, ՀՀ դրամի արժևորման տեմպերն անհամեմատ ավելի ցածր են, քան Արևելյան Եվրոպայի երկրներում: Դա մեկ անգամ ևս հաստատում է միջազգային տնտեսագիտության այն հայտնի թեզը, որ, եթե անցումային շրջանում գտնվող երկրի զարգացման տեմպերը բարձր են, ապա անխուսափելի է այդ երկրի իրական փոխարժեքի արժևորումը: Միևնույն ժամանակ, եթե երկրում պահպանվում է գնաճի ցածր մակարդակ, ապա, բնականաբար, պետք է արժևորվի նաև անվանական փոխարժեքը:

ՀՀ կենտրոնական բանկի ԶԱՄ-ն եռամսյակի ընթացքում աճել են 45 մլն ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ համախառն արտաքին ակտիվներն աճել են 40 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները նվազել են 5 մլն ԱՄՆ դոլարով: Համախառն արտաքին ակտիվների աճը պայմանավորվել է ԿԲ կողմից միջբանկային շուկայում 25 մլն ԱՄՆ դոլար արտարժույթի գնմամբ, որը զգալիորեն մեղմել է փոխարժեքի արժեքավորումը, և սեփականաշնորհման միջոցների փոխարկմամբ՝ 13 մլն ԱՄՆ դոլարի չափով:



ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը 2005 թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ, արժեքավորվել է 14.3 տոկոսով: Իրական փոխարժեքի արժեքավորման վրա էական ազդեցություն է ունեցել անվանական փոխարժեքի արժեքավորումը: Առաջին եռամսյակում Հայաստանի գնաճը չի գերազանցել գործընկեր երկրների միջին կշռված գնաճի մակարդակը, և դրա ազդեցությունը իրական փոխարժեքի վրա կազմել է 4.3 տոկոսային կետ, իսկ փոխարժեքի ազդեցությունը՝ 18.5 տոկոսային կետ (երկուսն էլ արժեքավորման ուղղությամբ): Գործընկեր երկրների գնաճի ազդեցությունը կազմել է 8.6 տոկոսային կետ, իսկ փոխարժեքինը՝ 2.3 տոկոսային կետ (երկուսն էլ արժեզրկման ուղղությամբ)[3]:

[3]Իրական արդյունավետ փոխարժեքի հաշվարկն իրականացված է միջին երկրաչափական մեթոդով, այդ պատճառով հաշվարկման մեջ ընդգրկված ցուցանիշների տոկոսային փոփոխությունների գումարը հավասար չէ իրական փոխարժեքի փոփոխությանը:

Դրամավարկային քաղաքականություն

Դրամավարկային քաղաքականության առաջին եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

2005 թվականի առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության ուղղությունները ծրագրվել են՝ ելնելով տարեկան ծրագրի առանձնահատկություններից, ինչպես նաև հաշվի առնելով սեզոնայնության գործոնն ու եռամսյակի ընթացքում հնարավոր ռիսկերը: Այսպես, տարեսկզբին, գործարար պասիվությամբ պայմանավորված, փողի պահանջարկի նվազման և նախորդ տարվա վերջին դրսևորված՝ փողի ագրեգատների մեծածավալ աճի ազդեցությունը գների վրա մեղմելու անհրաժեշտության պարագայում ԿԲ-ն առաջին եռամսյակում նախատեսել էր ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի ագրեգատների և փողի բազայի նվազում. փողի զանգվածը՝ 0.6%-ով, դրամային զանգվածը՝ 5.0%-ով և փողի բազան՝ 10.5%-ով:

2005թ. ևս ակնկալվում էր ֆինանսական մեծածավալ ներհոսք, որի ազդեցությունը տնտեսության վրա պետք է արտահայտվեր արտարժույթի առաջարկի աճի բարձր տեմպերով, հետևաբար և՝ դրամի փոխարժեքի արժեքավորման դրսևորումներով: Այս իրավիճակում ԿԲ-ն չէր կարող իրացվելիության կրճատման խնդիրն իրագործել արտարժութային ինտերվենցիաներով, ինչը սովորաբար իրականացրել է նախորդ տարիներին, այլ նախատեսում էր կիրառել դրամային ներքաշող գործիքներ, այդ թվում՝ նաև Կառավարության հետ համատեղ պետարժեթղթերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցների՝ ԿԲ-ում ավանդադրման մեխանիզմը: Իրացվելիության կրճատման խնդրին մասամբ նպաստելու էր առաջին եռամսյակում իրականացվելիք ավելցուկային հարկաբյուջետային քաղաքականությունը: Այս պարագայում ՀՀ ԿԲ ՋԱԱ-ն, ինքնավար հոսքերի ազդեցությամբ, նվազելու էին ընդամենը 1.4 մլրդ, իսկ ՋՆԱ-ն՝ 12.4 մլրդ դրամով, որի արդյունքում փողի բազան կրճատվելու էր 13.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջին ապահովվելու էր 118.2 մլրդ դրամ մակարդակ՝ պահպանելով տատանման թույլատրելի միջակայքի սահմանները:

Դրամավարկային քաղաքականության եռամսյակային նման սցենարը համադրելի էր տնտեսական աճի և գնաճի ակնկալվող՝ համապատասխանաբար 7.3% և 2.2% տեմպերին, ընդ որում, հաշվի առնելով գների տատանումների ամսական սեզոնայնությունը, բարձր գնաճ էր սպասվում հունվարին՝ 3.0%, իսկ փետրվար-մարտին՝ 0.8% գնանկում:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Փողի պահանջարկի ցուցանիշները առաջին եռամսյակում էապես չեն շեղվել ծրագրայինից և համահունչ են եղել տնտեսական ակտիվության աճին: Եռամսյակի ընթացքում փողի զանգվածը նվազել է 2.6%-ով, որը նախատեսված նվազման տեմպերից ցածր է 2.0 տոկոսային կետով, այն դեպքում, երբ դրամային զանգվածի և փողի բազայի փաստացի ցուցանիշները գերազանցել են ծրագրված մակարդակները՝ նվազելով նախատեսվածից մոտ 4 տոկոսային կետով ավելի (համապատասխանաբար՝ 0.2% և 6.4%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ փողի զանգվածն աճել է 23.0%-ով՝ 2.5 տոկոսային կետով նախատեսվածից քիչ, դրամային զանգվածը և փողի բազան՝ համապատասխանաբար 21.4% և 19.5%-ով, որոնք գերազանցել են ծրագրված տեմպերը 5.8 և 5.2 տոկոսային կետերով:


Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ (ըստ 2005 թ. ֆինանսական ծրագրի)

աճի տեմպ, %

Ցուցանիշներ	I եռամսյակը նախորդ տարվա IV եռամսյակի նկատմամբ		I եռամսյակը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ	
	Ծրագիր	*Փաստացի*	*Ծրագիր*	*Փաստ.*
Փողի զանգված (M2X, ժամ. վերջ)	-0.6	-2.6	25.5	23.0
Փողի զանգված (M2X, ժամ. միջին)	6.6	3.8	25.5	22.1
Փողի շրջապտույտի արագ. (միջին)[1]	-	-	-11.3	-9.3
Դրամային զանգված (M2, ժամ. վերջ)	-5.0	-0.2	15.6	21.4
Դրամային զանգված (M2, ժամ. միջին)	3.2	2.1	13.5	12.2
Դրամի շրջապտույտի արագ. (միջին)[2]	-	-	-2.2	-1.1
Փողի բազա (ժամ. վերջ)	-10.5	-6.4	14.3	19.5
Փողի բազա (ժամ. միջին)	1.3	1.6	14.2	14.5
Փողի բազմարկիչ (ժամ. միջին)	5.2	2.1	9.9	6.6
Դրամային բազմարկիչ (ժամ. միջին)	1.9	0.5	-0.9	-1.7

Դրամավարկային ցուցանիշների եռամսյակային միտումների վերոնշյալ պատկերը ձևավորվել է հիմնականում փողի պահանջարկի կառուցվածքային փոփոխությունների ազդեցությամբ, որոնք նախորդ տարվա համեմատությամբ ունեցել են հակառակ ուղղվածություն: Այսինքն, ի տարբերություն նախորդ տարվա, արձանագրվել են փողի զանգվածի դրամային բաղադրատարրերի՝ շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների աճի բարձր տեմպեր, որոնց աճը եռամսյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է համապատասխանաբար 14.9% և 34.3% (2004թ.՝ 6.3% և 27.2%): Փոխարենը՝ դանդաղել են արտարժութային ավանդների աճի տեմպերը. կազմել են 24.8% (նախորդ տարի՝ 39.2%):

Արտարժութային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում




Սակայն, եթե հաշվի առնենք այդ ժամանակահատվածներում դրամի արժեքավորման տեմպերը (2005թ. առաջին եռամսյակի միջինը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 18.5% և 2004թ. նույն ցուցանիշը՝ 3.8%), ապա աճի տեմպը 2005-ին, նախորդ տարվա համեմատ, գրեթե պահպանվել է՝ 43.0%, այսինքն՝ եռամսյակի կտրվածքով զրոյական աճ:

Սա տարվա հիմնական առանձնահատկությունն է, ինչը, դրամի փոխարժեքի շարունակական արժեքավորման պարագայում, թերևս կարելի է մեկնաբանել տնտեսությունում նկատված՝ դրամին անցում կատարելու երևույթի ազդեցությամբ:

---

[1] *Փողի շրջապտույտի արագության միջին եռամսյակային աճի տեմպը նախորդ եռամսյակի նկատմամբ չի ներկայացվում ՀՆԱ-ի եռամսյակային խիստ սեզոնայնությամբ պայմանավորված՝ փողի շրջապտույտի արագության նվազման բարձր տեմպերի պատճառով:*


[2] *Տե՛ս նույնը:*



Փողի ագրեգատները եռամսյակի ընթացքում կրել են հետևյալ կառուցվածքային փոփոխությունները. փողի զանգվածի 7.3 մլրդ դրամի նվազումը (մարտի վերջի մակարդակը՝ 277.9 մլրդ դրամ) բաժին է ընկել շրջանառությունում գտնվող կանխիկին՝ 7.2 մլրդ դրամ կամ 7.3%, և արտարժութային ավանդներին՝ 7.0 մլրդ դրամ կամ 5.0% (որում արտահայտվել է նաև դրամի եռամսյակային 6% արժեքավորումը): Դրամային ավանդները եռամսյակի ընթացքում ավելացել են 6.9 մլրդ դրամով կամ 14.6%-ով, որն էլ չեզոքացվել է կանխիկ դրամի նվազմամբ: Արդյունքում՝ դրամային զանգվածը նվազել է ընդամենը 300 մլն դրամով՝ եռամսյակի վերջին կազմելով 145.5 մլրդ դրամ:

Շրջանառությունում կանխիկը նվազել է ավելի քիչ, քան ծրագրված էր, քանի որ հունվարի կտրուկ անկումից հետո փետրվար-մարտին կանխիկի հանդեպ պահանջարկը զգալի աճել է՝ 9.3 մլրդ դրամով: Վերջինից էլ միայն 6.4 մլրդ դրամը բաժին է ընկել մարտին՝ հիմնականում պայմանավորված հունվար-փետրվարին նախատեսված բյուջետային կանխիկ ծախսերի մի մասը Կառավարության կողմից մարտին իրականացնելու հանգամանքով: Կանխիկի նման միտումների ձևավորմանը նպաստել է նաև ԿԲ կողմից արտարժույթի շուկայում գնման գործառնությունների իրականացումը, ինչն ուղղակիորեն անդրադարձել է շրջանառությունում գտնվող կանխիկի վրա՝ բանկերի կողմից տնտեսությունից կանխիկ արտարժույթի գնման միջոցով:

Դրամային ավանդների աճն ըստ ժամկետայնության բաշխվել է ցպահանջ և ժամկետային ավանդների միջև հավասարաչափ՝ 3.4 մլրդ դրամ, որը նույն ծավալով հավասարաչափ ներգրավվել է մասնավոր հատվածից և պետական մասնակցությամբ ձեռնարկություններից ու կազմակերպություններից:



Ի տարբերություն դրամային ավանդների, արտարժութային ավանդների նվազումը պայմանավորվել է բացառապես մասնավոր հատվածին զուտ մարումներով՝ 11.8 մլրդ դրամ, այն դեպքում, երբ պետա-

կան մասնակցությամբ ձեռնարկություններից և կազմակերպություններից ներգրավված միջոցներն ավելացել են 4.6 մլրդ դրամով: Ընդ որում, երկու հատվածներում էլ գերակշռել են զպահանջ ավանդների փոփոխությունները. մասնավոր հատվածին զուտ մարված ցպահանջ միջոցները կազմել են 10.2 մլրդ, իսկ պետական մասնակցությամբ ձեռնարկություններին՝ 1.6 մլրդ դրամ:


Եռամսյակի ընթացքում նվազել են նաև առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների արտարժութային ավանդները՝ 5.9 մլրդ դրամով, ինչն էլ գերազանցապես պայմանավորել է ընդհանուր ավանդների նվազումը (6.5 մլրդ դրամով):

Տնտեսական աճի, հետևաբար նաև փողի պահանջարկի սեզոնայնությունն այս տարի առավել ցայտուն արտահայտվել է փողի ագրեգատների ամսական վարքագծում. առավել խոշոր անկում է դիտվել հունվարին. փողի զանգվածը նվազել է 16.2 մլրդ դրամով, իսկ շրջանառությունում կանխիկը՝ 16.4 մլրդ դրամով: Փետրվար-մարտին արդեն, տնտեսական որոշակի ակտիվացմանը զուգընթաց, դրսևորվել է դրամի մեծ պահանջարկ, որն արտահայտվել է կանխիկի 9.2 մլրդ, դրամային ավանդների 5.7 մլրդ, հետևաբար և դրամային զանգվածի 14.9 մլրդ դրամի աճով:

Առաջին եռամսյակում փողի ագրեգատների վերոնշյալ փոփոխություններով պայմանավորված՝ փոխվել են նաև փողի զանգվածի կառուցվածքային համամասնությունները: Այսպես, շրջանառությունում կանխիկի և արտարժութային ավանդների կրճատման հետևանքով նվազել է փողի զանգվածում դրանց տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար 1.7 և 1.2 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել 32.9% և 47.7%: Փոխարենը՝ 2.9 տոկոսային կետով ավելացել է դրամային ավանդների տեսակարար կշիռը և մարտի վերջին կազմել 19.4%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ պատկերը գրեթե նույնն է. շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների տեսակարար կշիռների՝ համապատասխանաբար 2.3 տոկոսային կետով նվազում և 1.6 տոկոսային կետով աճ: Բացառությունը միայն արտարժութային ավանդների տեսակարար կշռի նվազման փոխարեն 0.7 տոկոսային կետով աճն է, ինչը պայմանավորվել է 2004 թվականին այդ միջոցների աճի անհամեմատ բարձր տեմպերով:


Փողի և դրամի շրջապտույտի արագություններին բնորոշ է եղել նախորդ տարիների եռամսյակային սեզոնայնությունը. առաջին եռամսյակում դրսևորվել են նվազման միտումներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համապատասխանաբար 9.3% և 1.1%-ով: Դրանք զիջել են ծրագրված նվազման տեմպերը 11.3% և 2.2%-ով, քանի որ, տնտեսական իրական աճի նախատեսված տեմպերի ապահովման պարագայում, թե՛ փողի և թե՛ դրամային զանգվածի միջին եռամսյակային աճը ցածր է եղել ակնկալվող տեմպերից (համապատասխանաբար՝ 22.1% և 12.2%՝ ծրագրային 25.5% և 13.5%-ի փոխարեն):

Փողի և դրամի շրջապտույտի արագությունների եռամսյակային կտրուկ անկման հիմնական պատճառը այդ ցուցանիշների փոփոխությունները պայմանավորող գործոնների խիստ սեզոնայնությունն է, մասնավորապես՝ նախորդ տարվա երկրորդ կեսից գործարար ակտիվության աճի պայմաններում տարեվերջին դրանց բարձր մակարդակների ձևավորումը, որոնք, առաջին եռամսյակում դրսևորված գործարար պասիվության ազդեցությամբ, կտրուկ նվազել են:



Ինչպես և նախատեսվել էր, հաշվետու ժամանակահատվածում փողի առաջարկի կրճատումն ապահովվել է բանկային համակարգի ՁՆԱ նվազման հաշվին: Սակայն, ի տարբերություն ծրագրի, փաստացի նվազման տեմպերն էապես գերազանցել են ակնկալիքները՝ հիմնականում պայմանավորված նախատեսվածից առավել ավելցուկային հարկաբյուջետային քաղաքականության իրականացմամբ: Միևնույն ժամանակ, ելնելով տարվա առանձնահատկությունից, այն է՝ ֆինանսական խոշոր ներհոսք և շուկայում արտարժույթի մեծածավալ առաջարկ, ծրագրված աճի տեմպերը զգալի գերազանցել են նաև բանկային համակարգի ՁԱԱ-ը: Այսպես, ՁՆԱ-ը նվազել են 30.5%-ով կամ 24.4 մլրդ դրամով իսկ ՁԱԱ-ն ավելացել 8.3%-ով կամ 17.1 մլրդ դրամով, այն պարագայում, երբ ծրագրված էր այդ ցուցանիշների համապատասխանաբար 2.6% նվազում և 0.3% աճ:

Բանկային համակարգի ՁԱԱ աճն ամբողջությամբ ապահովվել է ՀՀ ԿԲ արտարժութային ակտիվների ավելացման հաշվին՝ 14.8% (ըստ գործոնների մեկնաբանությունը՝ «Փողի բազա» ենթաբաժնում), իսկ առևտրային բանկերի զուտ արտարժութային պահուստները նվազել են 8.9%-ով կամ շուրջ 5.0 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորվել է արտարժութային ավանդների նվազմամբ:



Բանկային համակարգի ՁՆԱ կառուցվածքում զգալիորեն նվազել է բանկային համակարգի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը՝ 18.5 մլրդ դրամով կամ ավելի քան 2 անգամ, ինչը, արդեն նշել ենք, ավելցուկային հարկաբյուջետային քաղաքականության արդյունք է:

Եռամսյակի ընթացքում 4.4 մլրդ դրամով կամ 10%-ով նվազել են բանկային համակարգի զուտ այլ ակտիվները. 1.7 մլրդ դրամը ԿԲ զուտ այլ ակտիվների շարժերի (մեկնաբանությունները՝ «Փողի բազա» ենթաբաժնում), իսկ 2.7 մլրդ դրամը՝ բանկերի զուտ այլ ակտիվների նվազման հետևանքով, ինչի վրա հիմնականում ազդել են եռամսյակի ընթացքում բանկերի ստացած շահույթը և նրանց կողմից կանոնադրական կապիտալի համալրումը (համապատասխանաբար 1.5 մլրդ և 3.6 մլրդ դրամ):

Սպասվածին հակառակ՝ բանկերի կողմից տնտեսության վարկավորման ցուցանիշի աճի փոխարեն հաշվետու եռամսյակում արձանագրվել է դրա նվազում՝ 1.6 մլրդ դրամով կամ 1.2%-ով: Այդուհանդերձ, թեև ծրագրվածից դանդաղ տեմպերով, սակայն տնտեսության վարկավորումն ավելացել է 2.0 մլրդ դրամով կամ 1.4% -ով (ծրագրված 4.2 մլրդ դրամի կամ 3.2%-ի փոխարեն), իսկ ցուցանիշի նվազումը պայմանավորվել է բանկերի հաշվեկշիռներում առկա ոչ պետական արժեթղթերի մարմամբ:

Տրամադրված վարկերն ուղղվել են բացառապես մասնավոր հատված՝ ավելի քան 4.3 մլրդ դրամ, այն պարագայում, երբ պետական մասնակցությամբ ձեռնարկություններն ու կազմակերպությունները մարել են (զուտ) նախկինում վերցված վարկերը՝ շուրջ 2.4 մլրդ դրամ: Որպես կանոն, վարկավորման ընդհանուր ծավալում գերակշռել են արտարժութային վարկերը՝ 2.7 մլրդ դրամ, գրանցվել է դրամային վարկերի մարումների՝ տրամադրված ծավալներից գերազանցում՝ 723 մլն դրամով: Առաջին եռամսյակում ևս մասնավոր հատվածին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ են կազմել սպառողական վարկերը, ինչն արտահայտվել է տնային տնտեսությունների վարկավորման ծավալների 7.5% կամ 4.2 մլրդ դրամ աճով, որն ավելի քան 2 անգամ գերազանցել է զուտ վարկավորման աճը:

Տնտեսության վարկավորման աճի տեմպերի դանդաղումն ակնհայտ է դառնում հատկապես նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների հետ համեմատությունից. 2004 թ. առաջին եռամսյակում բանկերի կողմից տնտեսության զուտ վարկավորումն ավելացել էր 6.3%-ով, այդ թվում՝ արտարժութային վարկերի աճը կազմել էր 8.6%՝ այս տարվա առաջին եռամսյակի 2.9% աճի փոխարեն:

Առաջին եռամսյակում անհամեմատ ավելացել են բանկերի կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկավորման ծավալները՝ 5.5 մլրդ դրամ (ամբողջությամբ արտարժութային վարկերի աճի հաշվին), ինչը բավականին բարձր տեմպ է վերջին տարիների նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատությամբ. 88.9%՝ 2004թ. առաջին եռամսյակի 16.2% և 2003թ. 13.5%-ի փոխարեն:


ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Շուկայական հարաբերությունների զարգացմանը համահունչ՝ ակնկալվում է նաև բանկային համակարգի ֆինանսական միջնորդության աճ, ինչից ելնելով էլ ՀՀ ԿԲ-ն յուրաքանչյուր տարի ծրագրում է փողի և դրամային բազմարկիչների աճ՝ հաշվի առնելով փողի պահանջարկի եռամսյակային սեզոնայնությունը: Առաջին եռամսյակի համար ծրագրված էր այդ ցուցանիշների՝ համապատասխանաբար 5.2% և 1.9%-ով աճ:

Ըստ փաստացի արդյունքների՝ ծրագրված աճի ուղղվածությունը հիմնականում ապահովվել է, սակայն, կապված փողի ու դրամային զանգվածների միջին եռամսյակային աճի՝ նախատեսվածից ավելի դանդաղ տեմպերի և փողի բազայի ծրագրային մակարդակի գերազանցման հետ, փողի և դրամային բազմարկիչների եռամսյակային աճը որոշակիորեն զիջել է ծրագրված տեմպերը՝ կազմելով համապատասխանաբար 2.1% և 0.5%: Շեղումը հիմնականում պայմանավորվել է շրջանառության մեջ գտնվող կանխիկի՝ ծրագրվածից ավելի քիչ կրճատմամբ և արտարժութային ավանդների՝ նախատեսվածից դանդաղ աճի տեմպերով, ինչպես նաև այն հանգամանքով, որ ավանդների ընդլայնման բազմարկչային էֆեկտը զսպվել է բանկային համակարգում առկա ավելցուկային պաշարների աճով՝ նախորդ եռամսյակի միջին եռամսյակային 5.6 մլրդ դրամից հասնելով 8.3 մլրդ դրամի:

Ինչ վերաբերում է նշված ցուցանիշների եռամսյակային վարքագծին, ապա բազմարկիչների աճի ազդեցության հիմնական գործոններն են եղել շրջանառությունում գտնվող կանխիկի նվազումն ու դրամային ավանդների աճը, ինչը մասամբ զսպվել է արտարժութային ավանդների նվազմամբ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ցուցանիշները դրսևորել են գրեթե նույն վարքագիծը. փողի բազմարկիչն աճել է 6.6%-ով՝ ծրագրված 9.9%-ի, իսկ դրամային բազմարկիչը՝ նվազել 1.7%-ով՝ 0.9%-ի փոխարեն՝ վերոնշյալ գործոնների ազդեցությամբ պայմանավորված:




ՓՈՂԻ ԲԱԶԱ

Առաջին եռամսյակի ընթացքում ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականությունն իրագործվել է՝ նպատակ ունենալով դրամավարկային բոլոր գործիքների միջոցով եռամսյակի վերջին ապահովել իր գործառնական նպատակի՝ փողի բազայի 118.2 մլրդ դրամ մակարդակ (նվազումը՝ 10.5%), ինչի պարագայում գնաճը պետք է կազմեր 2.2%:


Հիմնական խնդիրները, որոնք ծագել են ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում, առավելապես բխել են Կառավարության իրականացրած հարկաբյուջետային քաղաքականությունից, ֆինանսական ներհոսքի մեծ ծավալներից և դեռ նախորդ տարվանից դրսևորված դրամի արժեքավորման արդյունքում արձանագրված արժույթի փոխարինման էֆեկտից (դոլարայնացման նվազում և դրամայնացման աճ):

Այսպես, հունվար-փետրվարին, պետական ծախսումների զգալի թերակատարման պարագայում, փողի բազան կառավարվել է տատանման միջակայքի միջնագծից ներքև և որոշ դեպքերում՝ անգամ ստո-


րին սահմանից ցածր: ԿԲ-ն չի փորձել ավելի մեծացնել փողի առաջարկը՝ կապված հունվարին գրանցված գնաճի բավականին բարձր մակարդակի հետ: Մարտին արդեն, փողի բազան ընդլայնվել է ծրագրվածից ավելի, և միայն մարտի վերջին 10 օրերի ընթացքում, Կառավարության կողմից իրականացված մեծածավալ կանխիկ ծախսումների հետևանքով, ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկն ու փողի բազան ավելացել են 7.0 մլրդ դրամով:



Տարեսկզբից ԿԲ առջև կրկին ծառացել են խնդիրներ՝ կապված մեծածավալ ֆինանսական ներհոսքի և դրամի արժեքավորման դրսևորումների՝ սպասվածից ավելի բարձր տեմպերի, ինչպես նաև արժույթի փոխարինման էֆեկտի հետ, ինչով էլ պայմանավորված՝ Կենտրոնական բանկը հունվար-մարտին ակտիվ միջամտել է արտարժույթի շուկայում՝ գնելով շուրջ 12.0 մլրդ դրամին համարժեք արտարժույթ: Փոխարինման էֆեկտի մասին են վկայում նաև փողի զանգվածում դրամային ավանդների աճի անհամեմատ բարձր տեմպերը, ինչպես նաև նախորդ տարիների համեմատ ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի՝ մարտին դիտված մեծածավալ աճը:



Գործարար պասիվության ժամանակաշրջանի սեզոնայնությունը պահպանվել է նաև այս տարվա առաջին եռամսյակում, որի ազդեցությամբ միայն հունվարին ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկը նվազել է 14.3 մլրդ դրամով կամ 13.5%-ով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 13.1 մլրդ դրամի կամ 13.6%-ի փոխարեն): Սակայն, ի տարբերություն նախորդ տարիների, երբ փետրվար-մարտին ԿԲ-ից դուրս կանխիկը ցուցաբերել է համեմատաբար կայուն վարքագիծ, այս տարի այդ ընթացքում այն աճել է 7.6 մլրդ դրամով, որից միայն 6.2 միլիարդը՝ մարտին:




ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվների ու այլ կազմակերպությունների հաշիվների մնացորդը եռամսյակի ընթացքում նվազել է 1.7 մլրդ դրամով:

Ընդհանուր առմամբ, եռամսյակի ընթացքում ԿԲ-ն վարել է ծրագրվածի համեմատ առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն, քանի որ միջին եռամսյակային աճը՝ 1.6%, գերազանցել է ծրագրված տեմպերը 0.3 տոկոսային կետով, որի չափով էլ գերազանցվել է նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճի ծրագրված ցուցանիշը՝ 14.2%-ի փոխարեն 14.5%:


Փողի բազան մարտի վերջին կազմել է 123.6 մլրդ դրամ՝ եռամսյակի ընթացքում նվազելով 8.4 մլրդ դրամով կամ 6.4%-ով՝ ծրագրված 10.5%-ի փոխարեն:

Ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին է վկայում նաև ողջ եռամսյակի ընթացքում իրացվելիության ավելցուկի՝ մշտապես բարձր մակարդակի պահպանումը: Այսպես, պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների միևնույն մակարդակի պարագայում, միջին ամսական ավելցուկ պաշարները եռամսյակի ընթացքում աճել են ավելի քան 1.0 մլրդ դրամով՝ մարտին կազմելով 7.6 մլրդ դրամ: Ընդ որում, կտրուկ աճ է արձանագրվել հունվարին (2.1 մլրդ դրամ)՝ կանխիկի սեզոնային կրճատմամբ պայմանավորված՝ այդ միջոցների մի մասի՝ թղթակցային հաշիվներում կուտակման արդյունքում, որը հակառակ դրսևորումն է ունեցել մարտին՝ ավելցուկի մակարդակը նվազեցնելով 1.1 մլրդ դրամով: Այսինքն՝ եռամսյակի ընթացքում բանկային համակարգը մշտապես եղել է բարձր իրացվելի, ինչի մասին է վկայում միջին եռամսյակային ավելցուկի 8.3 մլրդ դրամ ցուցանիշը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նույն ցուցանիշը կազմել է 4.5 մլրդ, իսկ 2003-ին՝ 3.8 մլրդ դրամ):



Եռամսյակային գնաճը կազմել է 3.7%՝ գերազանցելով ծրագրված ցուցանիշը 1.5 տոկոսային կետով: Նման բարձր ցուցանիշ է ձևավորվել հունվարին գրանցված անհամեմատ բարձր գնաճի՝ 5.4% (2004-ի հունվարին՝ 2.5%, 2003-ին՝ 4.1%, 2002-ին՝ 2.2%) ազդեցությամբ: Դա առավել խորը սեզոնայնության դրսևորման արդյունք էր և հիմնականում պայմանավորված էր մեկ՝ «Ձուկ և ձկնամթերք» ապրանքա-

խմբի գների կտրուկ աճով: Փետրվար-մարտին արձանագրվել է 1.7% գնանկում, որը որոշ չափով մեղմել է եռամսյակային ցուցանիշի շեղումը ծրագրված մակարդակից և չեզոքացրել գնաճի տարեկան ծրագրային մինչև 3% ցուցանիշի ապահովման՝ հունվարին առկա ռիսկերը:



Ինչպես արդեն նշվել է «Փողի առաջարկ» բաժնում, առաջին եռամսյակում ծրագրվածին համապատասխան փողի առաջարկի կրճատումը տեղի է ունեցել զուտ ներքին ակտիվների կրճատման հաշվին, ճիշտ է, առավել արագ տեմպերով: Նույն միտումներն են դրսևորվել նաև ԿԲ ՁՆԱ-ի գծով. դրանք նվազել են 177.2%-ով՝ նախատեսված 73.8%-ի փոխարեն, ինչը հիմնականում պայմանավորվել է Կառավարության կողմից իրականացված հարկաբյուջետային քաղաքականության շեղումներով և փաստացի ձևավորված ու ծրագրված փոխարժեքների տարբերությամբ:

Առաջինն արտահայտվել է ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի եռամսյակային վարքագծում (ծրագրված 54.2%-ի փոխարեն նվազել է 110.7%-ով)՝ բյուջետային ծախսերի թերակատարման և պետարժեթղթերի լրացուցիչ թողարկումներից ստացված գումարները ԿԲ-ում ավանդադնելու հետևանքով ԿԲ-ում Կառավարության միջոցների մնացորդի ավելացման ազդեցությամբ:

Փոխարժեքների տարբերությունն արտահայտվել է ԿԲ զուտ այլ ակտիվների փոփոխություններում. նախատեսված աճի (18.1% կամ 1.7 մլրդ դրամ) փոխարեն եռամսյակի ընթացքում ակտիվները նվազել են 19.6%-ով կամ 1.7 մլրդ դրամով: Այսինքն՝ քանի որ ԿԲ ՁԱԱ-ը ծրագրում ամրագրված են ծրագրային փոխարժեքով և, եռամսյակի ընթացքում դրամի շարունակական արժեքավորման պայմաններում, ձևավորվել է ավելի ցածր փաստացի փոխարժեք, ապա ՁԱԱ եռամսյակային մեծածավալ համալրման՝ ծրագրային բարձր փոխարժեքով արտահայտումը հաշվեկշռվել է զուտ այլ ակտիվների նվազմամբ:


Բանկերի հետ փոխհարաբերություններն ընթացել են ծրագրով նախանշված ուղղություններին համապատասխան, որի արդյունքում ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշը նվազել է 53.1%-ով կամ 5.8 մլրդ դրամով՝ ծրագրված 56.3%-ի կամ 6.1 մլրդ դրամի փոխարեն: ՀՀ ԿԲ գործիքակազմում, ինչպես և նախորդ տարիներին, այս տարվա առաջին եռամսյակում ևս ակտիվ է եղել բանկերի կողմից ԿԲ-ում միջոցների ավանդադրման մշտական հնարավորության գործիքը, որի համախառն ծավալները կազմել են 52.9 մլրդ դրամ՝ 2004թ. առաջին եռամսյակի 35.3 մլրդ և 2003-ի 11.6 մլրդ դրամի պարագայում: Այս գործիքի օգնությամբ ԿԲ-ին հաջողվել է եռամսյակի ընթացքում զուտ ներքաշել 2.1 մլրդ դրամի իրացվելիություն:

Ինչպես արդեն նշվել է, ԿԲ գործիքակազմը ներառել է նաև արտարժույթի գնումը, որը հիմնականում նպատակաուղղվել է, արժույթի փոխարինման էֆեկտի դրսևորման պայմաններում, դրամի նկատմամբ պահանջարկի աճին համապատասխան դրամի առաջարկի ապահովմանը:

Միևնույն ժամանակ, արտարժույթի գնման միջոցով իրացվելիության ներարկման ազդեցությունը առանց այդ էլ առկա ավելցուկային պաշարների բարձր մակարդակի վրա չեզոքացնելու նպատակով, պետարժեթղթերի պորտֆելի տնօրինվող ծավալների սահմաններում, ԿԲ-ն բանկերի հետ կնքել է 4.5 մլրդ դրամ համախառն ծավալի հակադարձ ռեպո գործարք, որի հաշվին իրացվելիության զուտ ներքաշումը կազմել է 2.5 մլրդ դրամ:

Իրացվելիության ներքաշման խնդրին, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ ԿԲ գործողությունների կոորդինացման շրջանակներում, օժանդակել է նաև Գանձապետարանի կողմից պետպարտատոմսերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցները ԿԲ-ում ավանդադնելու մեխանիզմը:


Դրա միջոցով հաջողվել է ներքաշել 6.2 մլրդ դրամի ավելցուկային իրացվելիություն, որից միայն 4.0 մլրդ դրամը՝ նախորդ տարվա վերջին մարված միջոցների կրճատումն էր:




Ծրագրված ցուցանիշից զգալի շեղվել են ՀՀ ԿԲ ԶԱԱ-ը՝ 1.4 մլրդ դրամ կամ 0.9% նվազման փոխարեն 22.1 մլրդ դրամի կամ 14.8%-ի աճ: Շեղումը հիմնականում պայմանավորվել է արտարժույթի գնման վերոնշյալ գործառնություններով, ինչպես նաև ԿԲ-ում Կառավարության սեփականաշնորհման հատուկ հաշվից մոտ 8.7 մլրդ դրամին համարժեք արտարժույթի գնմամբ, որը ևս ծրագրով նախատեսված չէր: ԿԲ ԶԱԱ-ը համալրվել է նաև Կառավարության կողմից ստացված դրամաշնորհի, արտաքին պահուստների կառավարումից ստացված տոկոսային եկամուտների և այլ արտարժութային մուտքերի հաշվին՝ 3.8 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ, եռամսյակի ընթացքում սպասարկվել է 2.4 մլրդ դրամին համարժեք գումարի արտաքին պարտք:

Ամփոփելով ԿԲ կողմից առաջին եռամսյակում իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքները՝ կարելի է փաստել, որ ԿԲ գլխավոր նպատակի ապահովման էական ռիսկեր չեն արձանագրվել և, մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ձևավորված միտումների պարագայում, ԿԲ-ն իրատեսական է համարում տարեվերջին մինչև 3% ծրագրային ցուցանիշի պահպանումը: Ինչ վերաբերում է արտարժութային ներհոսքի շարունակման և աճի տեմպերի հետագա արագացման պարագայում ԿԲ կողմից արտարժույթի գնման գործառնությունների իրականացման գնաճային ռիսկերի դրսևորմանը, ապա ԿԲ-ն Գանձապետարանի հետ ձեռք է բերել իր սեփական կարճաժամկետ արժեթղթերը թողարկելու փոխադարձ համաձայնություն և անհրաժեշտության դեպքում կարող է կիրառել իրացվելիության ներքաշման այդ գործիքը ևս:

Առաջին եռամսյակում ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին են վկայում դրամավարկային պայմանների ինդեքսի[1] և դրամավարկային կանոնների[2] հաշվարկները: Իրական արդյունավետ փոխարժեքը թեև եռամսյակի ընթացքում արժեքավորվել է 1.4%-ով, սակայն իրական տոկոսադրույքները նվազել են 1.6 տոկոսային կետով, ինչի ազդեցությամբ էլ դրամավարկային պայմանների ինդեքսը փոքր-ինչ նվազել է՝ նախորդ եռամսյակի 72.5-ից իջնելով 72.3-ի:




Ինչպես երևում է փաստացի և կանոնով հաշվարկված փողի բազաների վարքագծերի համեմատությունից, եռամսյակի ընթացքում արձանագրվել են միջին հաշվով փողի բազայի՝ կանոնի պահանջներից առավել արագ աճի տեմպեր, որի ազդեցության հիմնական գործոնները ներկայացվել են «Փողի բազա» բաժնում: Այսինքն, ըստ կանոնի հաշվարկի տրամաբանության, դրամավարկային քաղաքականության առավել ընդլայնողական բնույթը հիմնավորվում է անվանական ՀՆԱ աճի տեմպի (10.8%) համեմատ փողի բազայի 12-ամսյա աճի (19.5%) առաջանցիկ տեմպերով:



[1] Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ԿԲ բանբերում»:
[2] Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:


Ֆինանսական շուկայում դրսևորված տոկոսադրույքների անկման միտումը շարունակվել է նաև 2005թ. առաջին եռամսյակի ընթացքում: Ինչպես ԱՄՆ դոլարով ներգրավված միջոցների, այնպես էլ ՀՀ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները նախորդ եռամսյակի վերջի համեմատ նվազել են: Եռամսյակի ընթացքում դրամային ավանդների տոկոսադրույքները տատանվել են 4.4%-ի, իսկ դոլարային ավանդների տոկոսադրույքները՝ 5.0 %-ի շրջակայքում: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 0.6 տոկոսային կետ՝ նախորդ եռամսյակի 0.9-ի փոխարեն: ՀՀ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների նվազումը պարզորոշ վկայում է, որ ֆինանսական շուկայի մասնակիցների վստահության աստիճանը ՀՀ դրամի հանդեպ մեծանում է, որը նպաստում է ավանդների տեսքով խնայողությունների տոկոսադրույքների նվազմանը:

Առևտրային բանկերի՝ ՀՀ դրամով և արտարժույթով ավանդների տոկոսադրույքները




Նախորդ եռամսյակի վերջի համեմատ 2.7 տոկոսային կետով աճել են ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները՝ կազմելով 20.8%: ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքները նվազել են 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 20.2%, ինչը հիմնականում պայմանավորվել է ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ: Արդյունքում՝ եթե նախորդ տարվա վերջին ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքը գերազանցում էր ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքը 2.5 տոկոսային կետով, ապա եռամսյակի վերջին արդեն ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքը 0.6 տոկոսային կետով գերազանցում էր ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքը:

Բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքները




2005թ. առաջին եռամսյակի ընթացքում պետական պարտատոմսերի շուկայում ևս տոկոսադրույքների միջին մակարդակը նվազել է:

Առաջին եռամսյակի ընթացքում ՊՊ առաջնային շուկայում պարտատոմսերի նկատմամբ ձևավորված բարձր պահանջարկի պայմաններում, որը կազմել է թողարկման ծավալի 275.9%-ը, միջնաժամկետ մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի միջին տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատությամբ նվազել է 1.55 տոկոսային կետով՝ կազմելով 5.27%, միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 1.27 տոկոսային կետով՝ կազմելով 5.84%, իսկ երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 2.34 տոկոսային կետով՝ կազմելով 6.93%: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման ծավալների աճով պայմանավորված՝ ՊԿՊ միջին տոկոսադրույքներն աճել են 0.1 տոկոսային կետով և կազմել 4.04%, ընդ որում՝ հունվարին կազմել են 4.31%, փետրվարին՝ 4.24%, մարտին՝ 3.77%:



2005թ. առաջին եռամսյակի ընթացքում տեղի է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի 8 թողարկում՝ 6.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 3 թողարկում՝ 4.8 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, պետական միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի 1 թողարկում՝ 1 մլրդ դրամ ծավալով և պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի 1 թողարկում՝ 1.5 մլրդ դրամ ծավալով: ՀՀ ՖԷՆ-ի կողմից իրականացվել է 709.977 մլն դրամի պետական պարտատոմսերի հետգնում, որից 338.205 մլն դրամը կազմել են պետական կարճաժամկետ պարտատոմսերը՝ 2.5% եկամտաբերությամբ և 371.772 մլն դրամը՝ պետական միջնաժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերը՝ 4% եկամտաբերությամբ:




Արդյունքում՝ մարտի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը նախորդ ժամանակահատվածի (31/12/2004թ.) համեմատ աճել է 7442.5 մլն դրամով՝ կազմելով 57032.5 մլն դրամ (անվանական արժեքով):

230 մլն դրամով ավելացել են ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների (այդ թվում՝ ոչ բանկ դիլերների) կողմից պետական արժեթղթերում կատարված ներդրումների ծավալները: Վերջիններիս պարտատոմսերի տեսակարար կշիռը եռամսյակի վերջում կազմել է 12.28% կամ 7000.743 մլն դրամ: Պետական պարտատոմսերում ոչ ռեզիդենտների ներդրումների ծավալները չեն փոփոխվել. կազմել են 89.856 մլն դրամ:

Ռեզիդենտ բանկերի (այդ թվում՝ նաև ՀՀ ԿԲ) ներդրումների ծավալներն ավելացել են 6898.652 մլն դրամով՝ կազմելով 46442.852 մլն դրամ կամ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ամբողջ ծավալի 81.43%-ը:

ՀՀ ՖԷՆ-ի կողմից հետգնված պարտատոմսերի ծավալը եռամսյակի վերջում կազմել է 3499.049 մլն դրամ կամ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ամբողջ ծավալի 6.14%-ը:

Արդյունքում՝ 2005թ. առաջին եռամսյակի վերջին ռեզիդենտների պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի 99.84%-ը՝ 56942.6 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 0.16%-ը կամ 89.9 մլն դրամ:





Երկրորդային շուկայի գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատությամբ նվազել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 4.99%: Միևնույն ժամանակ, ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները նախորդ եռամսյակի համեմատությամբ աճել են 2.9 մլրդ դրամով՝ կազմելով 13.7 մլրդ դրամ: Վերջինիս միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1 մլրդ 60 մլն դրամ:

Առաջին եռամսյակի ընթացքում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործարքները նվազել են: Նախորդ եռամսյակի համեմատ միջբանկային ռեպո գործառնությունների ծավալները նվազել են 11.387 մլրդ դրամով՝ կազմելով 14.183 մլրդ դրամ: Գործարքների միջին ժամկետայնությունը կազմել է 10 օր: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1.161 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.33 տոկոսային կետով և կազմել 3.68 %:

Եկամտաբերության կորի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկամտաբերությունները նվազել են կորի գրեթե ողջ երկայնքով:

Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 88.21%-ը, պայմանավորվել է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը կազմել է 0.47 տոկոսային կետ՝ ի հաշիվ եկամտաբերությունների նվազման: 39%-ով փոփոխվել է կորի գոգվածությունը (0.26-ից՝ 0.18), ինչը նշանակում է, որ երկարաժամկետ պարտատոմսերի նկատմամբ ձևավորված բարձր պահանջարկով պայմանավորված՝ երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերությունը նվազել է: Մնացորդային գործոնները կորի փոփոխության մեջ կազմել են –27.70%:






Առաջին եռամսյակի համար ծրագրված փողի բազայի մակարդակը ապահովելու նպատակով ՀՀ ԿԲ-ն իրականացրել է ինչպես արտարժութային, այնպես էլ դրամային գործառնություններ. մասնավորապես հունվարին ՀՀ կենտրոնական բանկը կնքել է 2018 մլն դրամի հակադարձ ռեպո համաձայնագրեր՝ սահմանված 4.5% տոկոսադրույքով, իսկ մարտին՝ 536 մլն դրամի՝ 3.75%-ով, արժութային միջբանկային շուկայում գնել է (ըստ ամիսների) 5.10, 12.60 և 7.70 մլն ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 478.48, 474.27 և 457.99 դրամ միջին կշռված փոխարժեքներով:

ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները սահմանել է՝ հաշվի առնելով ծրագրված դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը և ֆինանսական շուկայի իրավիճակը: Մասնավորապես՝ 2005թ. առաջին եռամսյակում դրամավարկային գործիքների տոկոսադրույքները ԿԲ խորհուրդը վերանայել է երկու անգամ: Առաջին փոփոխությունը կատարվել է հունվարին. ներգրավվող ավանդների տոկոսադրույքը 1%-ից բարձրացվել է 1.75%-ի, իսկ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը՝ 3.75%-ից 4.5%-ի: Հաջորդ փոփոխությունը կատարվել է մարտին. ռեպո գործառնությունների տոկոսադրույքը 4.5%-ից իջեցվել է 3.75%-ի:


2005 թվականի առաջին եռամսյակի ընթացքում մեծ էր պահանջարկը Կենտրոնական բանկի ավանդների նկատմամբ: ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվել է 52830 մլն դրամի ավանդի պահանջարկ, ընդ որում՝ հունվարին ներդրվել է 9850 մլն դրամի ավանդ՝ սահմանված 1.75% եկամտաբերությամբ, փետրվար և մարտ ամիսներին՝ համապատասխանաբար 19070 մլն դրամի և 23910 մլն դրամի ավանդ՝ դարձյալ 1.75%-ով:

ՀՀ կենտրոնական բանկի սահմանած ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2005թ. առաջին եռամսյակում շարունակել է դրսևորել նախորդ տարի սկսված արժևորումը:

Եռամսյակի վերջում, նախորդ ժամանակահատվածի վերջի համեմատ, գրանցվել է 6.05% արժեքավորում՝ 485.84 դրամից 458.13 դրամ (վարիացիա՝ 141.97, միջին շեղում՝ 11.91 դրամ, նվազագույնը՝ 457.75 դրամ, առավելագույնը՝ 501.80 դրամ): Այսպիսի արժևորումը արտարժույթի առաջարկի աճի հետևանք է, ինչի մասին են վկայում ներքին արժութային շուկայում ձևավորված ծավալները:



Եռամսյակի ընթացքում առքի ծավալները ըստ ամիսների համապատասխանաբար կազմել են՝ 91.90, 95.66 և 104.97 մլն ԱՄՆ դոլար, իսկ վաճառքինը՝ 82.06, 93.81 և 97.88 մլն ԱՄՆ դոլար: Առքի և վաճառքի ընդհանուր ծավալները կազմել են 292.54 մլն և 273.76 մլն ԱՄՆ դոլար, իսկ փոխարժեքները համապատասխանաբար՝ 465.85 դրամ և 470.52 դրամ (գործարքների մոտ 16%-ը իրականացվել է միջբանկային շուկայում): ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի համախառն ծավալը կազմել է մոտ 566.30 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 27.49%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 35.88%-ով:



Արժութային շուկայում իրականացված վաճառքի գործառնությունների մեջ ներառված են նաև Կենտրոնական բանկի կողմից իրականացված առքի ծավալները:

Միջբանկային շուկայում եվրո/դրամ գործառնությունների ծավալների փոփոխություն չի եղել: Առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 12.63 և 33.76 մլն եվրո (նախորդ եռամսյակում՝ 12.46 և 34.49 մլն եվրո):

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը[1]

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2005 թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային գործունեության լիցենզիա է ստացել «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն:

31.03.2005 թ. դրությամբ ՀՀ տարածքում առկա բոլոր 21 առևտրային բանկերը գործել են ընդհանուր վերահսկողության դաշտում: Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի մասնաճյուղերի քանակն ավելացել է իննով և կազմել 242:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2005 թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 8.4.%-ով (5.4 մլրդ դրամով) և 31.03.2005թ. դրությամբ կազմել 70.0 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը պայմանավորվել է եռամսյակի ընթացքում բանկային համակարգի կողմից 2.6 մլրդ դրամ շահույթի ապահովմամբ և կանոնադրական հիմնադրամի 3.6 մլրդ դրամ աճով: Կապիտալի աճը 0.8 մլրդ դրամով չեզոքացրել է լրացուցիչ կապիտալում շենքերի և շինությունների վերագնահատման պահուստի այդչափ նվազումը: Բանկերը նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթից եռամսյակի ընթացքում շահաբաժիններ չեն բաշխել:

Կանոնադրական հիմնադրամի աճն ապահովել են երկու բանկեր. 3.0 մլրդ դրամն ապահովել է փետրվարին բանկային համակարգ մուտք գործած «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն, իսկ 633 մլն դրամը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն:

Բանկային համակարգի ռիսկով կշռված ակտիվներն աճել են 2.5%-ով, իսկ նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները՝ համապատասխանաբար 10.0% և 9.1%-ով: Արդյունքում՝ ընդհանուր և հիմնական կապիտալների առաջանցիկ աճը, ի տարբերություն ռիսկով կշռված ակտիվների աճի, հանգեցրել է կապիտալի համարժեքության ցուցանիշների աճի: Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշն ավելացել է 4.0 տոկոսային կետով, հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 3.4 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 36.3% և 33.6%:

31.03.2005թ. դրությամբ նորմատիվային կապիտալի մեծությունը 6 բանկում գտնվել է 1.0-2.0 մլրդ դրամի միջակայքում, 10 բանկերում՝ 2.0-4.0 մլրդ դրամի միջակայքում և 5 բանկերում գերազանցել է 4.0 մլրդ դրամը:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը եռամսյակի ընթացքում ավելացել է 1.5 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել է 19.3%՝ պայմանավորված ակտիվների աճի տեմպի նկատմամբ կապիտալի առաջանցիկ աճի տեմպով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները նվազել են 1.7%-ով (5.2 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 293.8 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 10, իսկ նվազում՝ 11 բանկերում:

ՀՀ դրամով պարտավորություններն աճել են 1.6%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները նվազել են 2.9%-ով, որի արդյունքում ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 0.9 տոկոսային կետով և կազմել 27.6%:

Բանկային համակարգի պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորվել է ֆիզիկական անձանց ցպահանջ արտարժութային միջոցների 5.5 մլրդ դրամ նվազումով:

---


[1] Նյութի տվյալ մասում տեղեկատվությունը կարող է տարբերվել Դրամավարկային քաղաքականությանը վերաբերող մասում ներկայացված տվյալներից, քանի որ օգտագործված են տվյալների խմբավորման տարբեր վիճակագրական մոտեցումներ (մասնավորապես՝ և՛ ռեզիդենտների, և՛ ոչ ռեզիդենտների տվյալները այս մասում ներկայացված են միասին):

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ պարտավորությունները նվազել են 3.3%-ով (4.4 մլրդ դրամով), իսկ ժամկետային ավանդները՝ 1.1%-ով (965 մլն դրամով):

Հատկանշական է, որ դրամի փոխարժեքի ներկայիս արժեքավորման պայմաններում և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց ինչպես ցպահանջ (ներառյալ դրանց բանկային հաշիվները), այնպես և ժամկետային ավանդների կազմում նվազել են արտարժութային և աճել դրամային ավանդների ծավալները. իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդներում (ցպահանջ և ժամկետային միջոցների) արտարժութային միջոցները նվազել են 6.6%-ով (11.7 մլրդ դրամով), իսկ դրամային միջոցներն ավելացել են 12.8%-ով (6.3 մլրդ դրամով): Արդյունքում՝ 31.03.2005թ. դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 221.6 մլրդ դրամ, որի 25.1%-ը կազմել են դրամային ավանդները (եռամսյակի սկզբում՝ 21.7%): Ընդ որում, ֆիզիկական անձինք, ի տարբերություն իրավաբանական անձանց, ավելի հակված են խնայողություններ կատարել արտարժութային միջոցների տեսքով. ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում ՀՀ դրամով տեղաբաշխված միջոցների կշիռը կազմել է ընդամենը 11.5%, որը զիջում է իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում դրամային պարտավորությունների՝ 36.6% տեսակարար կշռին:

Դիտարկվող ժամանակաշրջանում բանկերի լորո թղթակցային հաշիվները նվազել են 28.5%-ով (1.7 մլրդ դրամով), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 17.5%-ով (1.1 մլրդ դրամով), իսկ բանկերի նկատմամբ այլ պարտավորությունները (ներառյալ ԿԲ նկատմամբ) և ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորություններն աճել են համապատասխանաբար 8.3%-ով (1.9 մլրդ դրամով) և 14.2%-ով (1.9 մլրդ դրամով):

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Եռամսյակի ընթացքում ընդհանուր պարտավորությունների կազմում տեսակարար կշիռների խոշոր փոփոխություններ չեն արձանագրվել: Մասամբ փոփոխվել են ցպահանջ ավանդների տեսակարար կշիռները. եռամսյակի ընթացքում 1.6 տոկոսային կետով նվազել է ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդների և 0.9 տոկոսային կետով ավելացել է իրավաբանական անձանց ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2005թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 0.1%-ով (253 մլն դրամով) և 31.03.05թ. դրությամբ կազմել 363.8 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվներն աճել են 10 և նվազել՝ 11 բանկերում:


Զգալի նվազել են բանկերում նոստրո թղթակցային հաշիվները՝ 27.7%-ով (24.4 մլրդ դրամով) և օտարերկրյա արժեթղթերում ներդրումները՝ 81.9%-ով (3.2 մլրդ դրամով): Նկատելի ավելացել են կանխիկ

դրամական միջոցների՝ 16.6%-ով (4.1 մլրդ դրամով), ԿԲ-ում թղթակցային հաշիվների և այլ պահանջների՝ 10.9%-ով (3.0 մլրդ դրամով), պետական արժեթղթերում ներդրումների՝ 23.9%-ով (8.7 մլրդ դրամով) և տնտեսությանը տրամադրված վարկերի՝ 6.2%-ով (8.2 մլրդ դրամով) ծավալները:

Տնտեսությանը տրված վարկերի աճը հիմնականում պայմանավորվել է ոչ ռեզիդենտների վարկավորումների աճով:

Տնտեսությանը տրամադրված վարկերի կազմում ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 8.1%-ով (4.0 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 4.3%-ով (3.4 մլն դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 22.1%-ով (816 մլն դրամով):

Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկ.
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխ.
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ


Հաշվետու եռամսյակում վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ընդհանուր աճել են 7.1%-ով (11.0 մլրդ դրամով) և 31.03.2005թ. դրությամբ կազմել 166.7 մլրդ դրամ: Վարկերի և դեբիտորական պարտքերի աճը գերազանցապես պայմանավորվել է ոչ ռեզիդենտների արտարժութային վարկերի և դեբիտորական պարտքերի աճով: Այսպես. եռամսյակի ընթացքում դրամով վարկային ներդրումները նվազել են 4.5%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումներն ավելացել են 11.9%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 2.8 տոկոսային կետով և կազմել 26.4%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 64.6%-ով (10.3 մլրդ դրամով), իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.5%-ով (726 մլն դրամով):

Ռեզիդենտների վարկային ներդրումներում ավելացել են սպառողական վարկերը՝ 6.4%-ով (2.5 մլրդ դրամով), գյուղատնտեսության վարկերը՝ 16.7%-ով (1.4 մլրդ դրամով), հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտների վարկերը՝ 22.2%-ով (1.2 մլրդ դրամով), տրանսպորտի և կապի վարկերը՝ 87.8%-ով (1.0 մլրդ դրամով) և շինարարության վարկերը՝ 11.3%-ով (597 մլն դրամով): Դիտարկվող ժամանակաշրջանում նվազել են արդյունաբերության վարկերը՝ 11.2%-ով (4.0 մլրդ դրամով), առևտրի վարկերը՝ 1.6%-ով (511 մլն դրամով), ֆինանսական հատվածի վարկերը՝ 2.4%-ով (216 մլն դրամով) և այլ ճյուղերի վարկերը՝ 28.1%-ով (1.3 մլրդ դրամով):

Արդյունաբերության ճյուղի վարկավորման նվազման հիմնական պատճառը հանքագործության, էներգետիկայի և սննդի արդյունաբերություններում վարկային ներդրումների նվազումն է, ընդ որում՝ հանքագործության վարկերը նվազել են 74.9%-ով (3.0 մլրդ դրամով), էներգետիկային տրամադրված վարկերը՝ 15.0%-ով (984 մլն դրամով), իսկ սննդի արդյունաբերության վարկերը՝ 5.6%-ով (790 մլն դրամով):

Բանկային համակարգի վարկային ներդրումները՝ ըստ տնտեսության ճյուղերի (31.03.05թ. դրությամբ)



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Այլ ճյուղեր

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի դասակարգված ակտիվների տեսակարար կշիռն ավելացել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 2.0%-ը: 31.03.2005թ. դրությամբ վարկային պորտֆելն ունեցել է հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են 98.0%, «հսկվող» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.3%, «ոչ ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.3%, «կասկածելի» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.3%:

Բանկային համակարգի ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռն աճել է 3.3 տոկոսային կետով և կազմել 41.8%:

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի Ն2[1] ընդհանուր իրացվելիության գործակիցը նվազել է 0.4 տոկոսային կետով, իսկ Ն2[2] ընթացիկ իրացվելիության գործակիցն ավելացել է 11.2 տոկոսային կետով և 31.03.2005թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են 46.7% և 109.8%: Իրացվելիության փաստացի ցուցանիշները Ն2[1] նորմատիվի 20% և Ն2[2] նորմատիվի 80% սահմանաչափերից շարունակում են զգալի բարձր մնալ: Ն2[2] ընթացիկ իրացվելիության գործակցի նման աճը պայմանավորվել է ցպահանջ պարտավորությունների զգալի նվազմամբ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Բանկային համակարգի 2005 թ. առաջին եռամսյակի զուտ շահույթը կազմել է 2.6 մլրդ դրամ, որը 30.4%-ով գերազանցել է 2004 թ. նույն ժամանակահատվածի շահույթի մեծությունը: Եռամսյակի ընթացքում շահույթով են աշխատել 16 բանկեր, որոնց զուտ շահույթը կազմել է 3.0 մլրդ դրամ, իսկ վնասով են աշխատել 5 բանկեր, որոնց վնասը կազմել է 392 մլն դրամ:

2005 թ. առաջին երեք ամիսների ընթացքում բանկային համակարգը ստացել է 15.4 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 12.1 մլրդ դրամի չափով ծախսեր: Արդյունքում՝ բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 3.3 մլրդ դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 46.5%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 26.3% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 27.2%: Տնտեսության վարկերից ստացված եկամուտներին բաժին է ընկել տոկոսային եկամուտների 80.0%-ը, իսկ ստացված միջնորդավճարներին՝ ոչ տոկոսային եկամուտների 41.2%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը դարձյալ բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որոնք կազմել են 41.8%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված հատկացումներին բաժին են ընկել համապատասխանաբար 19.0% և 39.2% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը բաժին է ընկել բանկային աշխատողների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին՝ ոչ տոկոսային ծախսերի 40.9%-ը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տոկոսային ծախսերում զգալի՝ 58.2% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

31.03.05 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 9 վարկային կազմակերպություններ՝ երկու մասնաճյուղերով:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը նվազել է 1.7%-ով և կազմել 5.5 մլրդ դրամ, որը բանկային համակարգի ակտիվների ծավալի ընդամենը 1.5%-ն է:

Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը երեք ամիսների ընթացքում ավելացել է 15.1%-ով (360 մլն դրամով)՝ գրեթե ամբողջությամբ ի հաշիվ ֆիզիկական անձանց տրված վարկերի աճի: 31.03.2005 թ. դրությամբ իրավաբանական անձանց վարկերը կազմել են 709 մլն դրամ, ֆիզիկական անձանց վարկերը՝ 1.9 մլրդ դրամ: Լիզինգի ընդհանուր ծավալն առաջին եռամսյակում աճել է 25.8%-ով և կազմել 1.1 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն աճել է 15.6%-ով (587 մլն դրամով) և կազմել 4.3 մլրդ դրամ: Տնտեսության բոլոր ճյուղերում վարկային կազմակերպությունների կողմից իրականացված վարկային ներդրումների աճ է արձանագրվել, ընդ որում՝ վարկային ներդրումների ընդհանուր աճի 47.7%-ը ապահովել են սպառողական վարկերը: Սպառողական վարկերի կայուն աճի միտումները շարունակվել են. վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել սպառողական վարկերին՝ 33.4%: Արդյունաբերության ճյուղի վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 24.5%, գյուղատնտեսությանը՝ 10.4%, առևտրի ոլորտինը՝ 6.1%, իսկ մնացյալ 25.6%-ը՝ այլ ճյուղերինը:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ավելացել է 3.7 տոկոսային կետով և կազմել 93.0%:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 4.2%-ով (137 մլն դրամով) և եռամսյակի վերջին կազմել 3.4 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը նվազել է 9.8%-ով (234 մլն դրամով)՝ ի հաշիվ ֆիզիկական անձ մասնակիցներից ներգրաված փոխառությունների նվազման և կազմել է 2.1 մլրդ դրամ:

2005թ. առաջին երեք ամիսներին 5 վարկային կազմակերպություններ աշխատել են վնասով (ընդհանուր վնասը՝ 130 մլն դրամ) և 4 վարկային կազմակերպություններ՝ շահույթով (ընդհանուր շահույթը՝ 73 մլն դրամ): Արդյունքում՝ եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր վնասը կազմել է 57 մլն դրամ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2005թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի կարգավորման դաշտում իրականացվել են հետևյալ փոփոխությունները.

1. Փոխանակման կետերի վերահսկողությունը խստացնելու, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջները բավարարելու և փոխանակման կետերի կողմից տրամադրվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով մշակվել է «Փոխանակման կետերի վերստուգման ձեռնարկը»:

2. 2005 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ են մտել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները և լրացումները, ըստ որոնց, մասնավորապես արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնող անձինք պետք է տեղադրեն հսկիչ-դրամարկղային մեքենաներ կամ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները բավարարող համակարգչային ծրագիր: Հաշվի առնելով վերոնշյալը՝ կատարվել են համապատասխան փոփոխություններ «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում:

3. Կենտրոնական բանկի կողմից պարբերաբար վերանայվում և թարմացվում են բանկերի ղեկավարների որակավորման հարցաշարերը՝ պայմանավորված օրենսդրական և ենթաօրենսդրական նոր փոփոխություններին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Վերջին վերանայման արդյունքում հարցաշարերը համաձայնեցվել են օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխություններին, ինչպես նաև ընդլայնվել են՝ ներառելով նոր օրենքների և ԿԲ կողմից սահմանված նոր կարգերի պահանջները («Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենք, «Բանկերի ներքին հսկողության նվազագույն պայմանները հաստատելու մասին» ԿԲ խորհրդի որոշում և այլն):

4. Քանի որ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի փոփոխությունները պետք է ուժի մեջ մտնեին ապրիլի 1-ից, ուստի անհրաժեշտություն առաջացավ և վերանայվեց «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը՝ Կանոնակարգ 2-ի փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:

5. Հաստատվել է «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը՝ նոր խմբագրությամբ: Կանոնակարգը վերանայվել է Կանոնակարգ 14-ին համաձայնեցնելու և հաշվետվական ձևերը պարզեցնելու նպատակով: Կանոնակարգի հետ միասին հաստատվել է «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների կազմման» ուղեցույցը:

2005 թ. առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման աշխատանքները: Մասնավորապես՝ ՀՀ վճարահաշվարկային բնագավառը, ինչպես նաև վճարային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կանոնակարգման, ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի թողարկման հետ կապված համապատասխան իրավական դաշտի մշակման և Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում փոփոխությունների կատարման աշխատանքներ: Մշակվել է նաև համապատասխան տեխնոլոգիական և ծրագրային ապահովում՝ արտարժույթի փոխանակման կետերում տեղադրելու նպատակով: Տվյալ համակարգը հնարավորություն կընձեռի ավելի թափանցիկ դարձնելու մասնակիցների գործառնությունները ֆինանսական շուկայում:


ՀՀ տարածքում իրականացված անկանխիկ վճարումների ծավալը առաջին եռամսյակում կազմել է 938164 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 391277), այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը՝ 601453 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 163790: 2004թ. չորրորդ եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումների ծավալը նվազել է 0.9 անգամ՝ պայմանավորված յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ դիտարկվող տնտեսական պասիվությամբ: 2004թ. առաջին եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումներն ավելացել են՝ ծավալը 1.25 անգամ (187387 մլն ՀՀ դրամով), քանակը՝ 1.17 անգամ, որը կազմել է 57480:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումները 2004թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են՝ ծավալը 1.44 անգամ (184091 մլն ՀՀ դրամով), քանակը՝ 1.18 անգամ, որը կազմել է 25461:

Վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 9.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 2559: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, դրամական փոխանցումների միջին օրական ծավալն ավելացել է 2.8 մլրդ ՀՀ դրամով (քանակը՝ 398-ով):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 46.17%-ը, քանակի 46.8%-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս իրականացրած փոխանցումների ընդհանուր ծավալն աճել է 90%-ով, իսկ քանակը՝ 13%-ով:

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը



Եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 16149 մլն ՀՀ դրամի 433566 գործառնություն: Այդ թվում՝ կոմունալ ծառայությունների դիմաց անկանխիկ վճարումների և համացանցով (ինտերնետ) կատարված առևտրի համար վճարումների ծավալը միասին կազմել է մոտ 97 մլն ՀՀ դրամ: Քարտային գործառնությունների ծավալը 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2.2 մլն ՀՀ դրամով, իսկ գործառնությունների քանակն ավելացել է 1.3 անգամ, որը կազմել է 104389 գործառնություն:

2005թ. հունվարի 17-ից ուժի մեջ մտած՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման համաձայն՝ ՀՀ տարածքում սահմանափակվել է ԱԳՄ-ների միջոցով կանխիկ արտարժույթի տրամադրումը: Նպատակը միջազգային պլաստիկ քարտերով կանխիկացման գործառնությունների ժամանակ առաջացող ռիսկերի նվազեցումն է:

Շրջանառության մեջ գտնվող ընդհանուր քարտերի քանակը (118046 քարտ) եռամսյակի ընթացքում ավելացել է 1.1 անգամ (9181 քարտով): Այդ թվում՝ VISA միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 1.09 անգամ (4382 քարտով), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերինը՝ 1.19 անգամ (588 քարտով):

Էլեկտրոնային վճարումների համակարգ


2005թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը մնացել է անփոփոխ, որը կազմել է 158, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 21 առևտրային բանկեր՝ 86 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք.Մոսկվա):

Վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 71.4%-ը, քանակի 97%-ը՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ տեսակարար կշիռը նվազել է համապատասխանաբար՝ 4.9% և 0.6%-ով: 2004թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել են առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները վերջիններիս ընդհանուր վճարումների կառուցվածքում. վճարումների ծավալային կառուցվածքում՝ 8%-ով՝ կազմելով մոտ 91.5%, իսկ քանակային կառուցվածքում պահպանվել է նույն մակարդակը՝ մոտ 99.17%:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 372-ով՝ կազմելով մոտ 2471, իսկ ծավալը՝ 1734 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 6713 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, նախորդ տարվա համեմատ, աճել է մոտ 345 հազ. ՀՀ դրամով և կազմել 2717 հազ. ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են նախաձեռնած վճարումների քանակի 0.03%-ը և ծավալի 0.09%-ը (43 փոխանցում՝ 415 մլն ՀՀ դրամ ծավալով): Ընդ որում, անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.02%-ը, ծավալի 0.09%-ը (29 փոխանցում՝ 414 մլն ՀՀ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները 2001 - 2004 թթ. և 2005 թ. առաջին եռամսյակի ընթացքում



Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումներն ըստ հաղորդագրության տեսակների

Հաղորդագրության տեսակը	2001	2002	2003	2004	I եռ. 2004	II եռ. 2004	III եռ. 2004	IV եռ. 2004	I եռ. 2005
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)									
Գումար (մլն ՀՀ դրամ)	478783	590026	864149	948923	193252	248739	234994	271937	260677
Քանակ	216563	251794	386469	362700	72665	90525	91129	108381	86643
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)									
Գումար (մլն ՀՀ դրամ)	118767	156358	229550	156463	32713	36508	38888	48354	38942
Քանակ	364041	424288	545427	188449	44355	41547	45191	57356	50365
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)									
Գումար (մլն ՀՀ դրամ)	14	1	0	0	0	0	0	0	0
Քանակ	27	4	0	0	0	0	0	0	0
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)									
Գումար (մլն ՀՀ դրամ)	4047	5128	5197	18	0.01	0.01	16	1.83	1
Քանակ	112721	127122	106593	94	1	1	12	80	15
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)									
Գումար (մլն ՀՀ դրամ)	412	534	360	732	94	304	59	275	269
Քանակ	526	324	361	1331	317	488	139	387	344
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)									
Գումար (մլն ՀՀ դրամ)	13194	610	27	7	2	0.08	0.0	5	354
Քանակ	749	327	344	6	2	1	0.0	3	13
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)									
Գումար (մլն ՀՀ դրամ)	150299	196161	278981	521051	92587	118688	148229	161547	129412
Քանակ	19430	24506	37262	85220	17000	20296	25635	22289	20751
Ընդամենը									
Գումար (մլն ՀՀ դրամ)	765515	948818	1378264	1627194	318649	404239	422186	485120	429654
Քանակ	714057	828365	1076456	637800	134340	152858	162106	188496	158131

Համախառն թղթային վճարումներ

2005թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 6.5%-ը (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 7.5 տոկոսով) և քանակի 0.5%-ը (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 0.3 տոկոսով):

Թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 81 փոխանցում՝ 2004թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 24-ով, իսկ ծավալն ավելացել է 1060 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 2356 մլն ՀՀ դրամ: Մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2004թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 6.2 մլն ՀՀ դրամով և կազմել է 29 մլն ՀՀ դրամ: Թղթային եղանակով փոխանցումների աճը հիմնականում պայմանավորվել է ավանդային և վարկային գործառնությունների ավելացմամբ: 2005թ. առաջին եռամսյակում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 4204 մլն ՀՀ դրամ ծավալով 22 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը	
	էլեկտրոնային		Թղթային				ԿԲ միջոցով	
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2003								
Ընդամենը 2003թ .	1378264	1076456	287671	14835	80349	1873	1746284	1093164
Բանկերը 2004թ. համեմատ էական աճ են ակնկալում հանքագործական արդյունաբերության, էներգետիկայի, գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում: Որպես «Այլ» վարկավորման ոլորտ՝ բանկերի գերակշիռ մասը նշել է սպառողական վարկերը: Վարկավորման ծավալների նվազում կանխատեսել է միայն մեկ բանկ՝ հանքագործական արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում:

Աղյուսակ 20. 2004 թ. ընթացքում բանկերի կողմից տրամադրված վարկերի օգտագործման հիմնական ուղղությունները

Օգտագործման ուղղությունները	Բանկերի քանակը
Շրջանառու միջոցների համալրում	19
Հիմնական միջոցների ձեռքբերում	7
Նոր բիզնեսի նախաձեռնում	--
Սպառողական ծախսերի կատարում	11
Հիփոթեքային վարկեր	2
Այլ նպատակներ	--

Եթե 2003 թ. ընթացքում նոր բիզնեսի նախաձեռնումը որպես վարկավորման օգտագործման հիմնական ուղղություն էր նշել մեկ բանկ, ապա 2004 թ. համար նշված ուղղությանը ոչ մի բանկ էական տեղ չէր հատկացրել:

Աղյուսակ 21. 2005 թ. ընթացքում կանոնադրական կապիտալի աճի վերաբերյալ բանկերի գնահատումները

Կանոնադրական կապիտալ, մլրդ դրամ	10.8
Ռեզիդենտների հաշվին	1.6
Ոչ ռեզիդենտների հաշվին	9.2

2005թ. ընթացքում բանկերն ակնկալում են կանոնադրական կապիտալի աճ՝ 10.8 մլրդ դրամի չափով: Կանոնադրական կապիտալի աճ կանխատեսել է 12 բանկ, ընդ որում՝ 4 բանկ կանխատեսել է կանոնադրական կապիտալի աճ և՛ ռեզիդենտների և՛ ոչ ռեզիդենտների, 8 բանկ՝ միայն ոչ ռեզիդենտների և 4 բանկ՝ միայն ռեզիդենտների հաշվին:

Աղյուսակ 22. 2004թ. ընթացքում ճյուղերում զբաղված հաճախորդների ֆինանսական վիճակի փոփոխության վերաբերյալ բանկերի գնահատումները

Ճյուղեր	Հաճախորդների ֆինանսական վիճակի փոփոխությունը		
	Բարելավվել է	Վատթարացել է	Չի փոփոխվել
	Բանկերի քանակը		
Արդյունաբերություն, այդ թվում՝	15	0	2
էներգետիկա	4	0	3
Հանքագործական	6	0	3
Մշակող	11	0	3
Գյուղատնտեսություն	5	2	5
Շինարարություն	10	0	5
Առևտուր	12	0	7
Տրանսպորտ և կապ	2	1	8
Այլ	7	0	4

Բանկերի պատասխանները հաճախորդների ֆինանսական վիճակի վերաբերյալ ընդհանուր առմամբ դրական են:


Հաճախորդների ֆինանսական վիճակի վերաբերյալ քանակական գնահատականը ըստ ճյուղերի տալու նպատակով հաշվարկվել է բանկերի պատասխանների դիֆուզիոն ինդեքս: Այն իրենից ներկայացնում է դրական և բացասական պատասխանների հաշվեկշիռ (դրական և բացասական պատասխանների տեսակարար կշիռների տարբերություն): Ինդեքսի արժեքը տատանվում է -100-ից +100 միջակայքում: Նվազագույն արժեքը (-100) ցույց է տալիս, որ հարցման բոլոր մասնակիցները նշել են ֆինանսական վիճակի վատթարացում, իսկ առավելագույն արժեքը (+100)՝ բարելավում:

Ըստ գործունեության ոլորտների 2002-2004թթ. համար դիֆուզիոն ինդեքսի արժեքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 23. Դիֆուզիոն ինդեքս

Ճյուղեր	Դիֆուզիոն ինդեքս, 2002	Դիֆուզիոն ինդեքս, 2003	Դիֆուզիոն ինդեքս, 2004
Արդյունաբերություն, այդ թվում՝	77.3	55.0	88.2
էներգետիկա	35.7	33.3	57.1
Հանքագործական	36.4	66.7	66.7
Մշակող	66.7	64.3	78.6
Գյուղատնտեսություն	42.9	18.2	25.0
Շինարարություն	57.9	94.1	66.7
Առևտուր	52.6	72.2	63.2
Տրանսպորտ և կապ	28.6	25.0	9.1
Այլ	22.2	57.1	63.6

Գծապատկեր 2. Բանկերի պատասխանների դիֆուզիոն ինդեքսը՝ ըստ տնտեսության ճյուղերի



Համաձայն բանկերի գնահատումների՝ էներգետիկայի, մշակող արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում զբաղված իրենց հաճախորդների ֆինանսական վիճակը 2003թ. վատթարացել, իսկ 2004թ. ընթացքում կրկին բարելավվել է: Միևնույն ժամանակ, շինարարության և առևտրի ոլորտներում նկատվում է հակադարձ միտում. 2003թ. ֆինանսական վիճակը բարելավվել է, ինչը 2004թ. ընթացքում կրկին վատթարացել է: 2004թ. ընթացքում բարելավում է գրանցվել միայն հանքագործական արդյունաբերության և այլ ճյուղերում:

*Աղյուսակ 24. Ճյուղերում զբաղված հաճախորդների գործունեության շահութաբերության միջին մակարդակի վերաբերյալ բանկերի գնահատումները **

Ճյուղեր	Կապիտալի շահութաբերություն	Իրացման շահութաբերություն
Արդյունաբերություն	19.4	16.1
Շինարարություն	41.7	8.5
Ծառայություններ	30.3	29.3

** Պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր վարկային ներդրումներում բանկերի տեսակարար կշիռներով:*

Համաձայն բանկերի գնահատումների՝ Հայաստանում կապիտալի ամենաբարձր շահութաբերությամբ են գործում շինարարության ոլորտում զբաղված, իսկ իրացման շահութաբերությամբ՝ ծառայությունների ոլորտում զբաղված կազմակերպությունները:

Աղյուսակ 25. ՀՀ կենտրոնական բանկի խնդիրների իրականացման արդյունավետության վերաբերյալ բանկերի գնահատումները

Հիմնական խնդրի՝ ՀՀ-ում գների կայունության ապահովումը

Լիովին բավարարված եմ	9
Մասամբ բավարարված եմ	11
Ընդհանրապես բավարարված չեմ	--

Այլ խնդիրներ

Լիովին բավարարված եմ	6
Մասամբ բավարարված եմ	14
Ընդհանրապես բավարարված չեմ	--

Պարզվում է, որ ինչպես 2004 թ. հուլիսին իրականացված հարցման, այնպես էլ այս հարցումների ժամանակ բանկերի գերակշիռ մասը մասամբ է բավարար համարում ՀՀ ԿԲ հիմնական և ՀՀ ԿԲ մասին ՀՀ օրենքով ամրագրված այլ խնդիրների իրականացման արդյունավետությունը: Այս առումով բանկերի հիմնական փաստարկը գների և փոխարժեքի կայունությունն է, ինչը ՀՀ ԿԲ-ին ոչ միշտ է հաջողվում ապահովել: Մեկ բանկ դժգոհել է ՀՀ ԿԲ կողմից իր համար հաշվարկված ՔԱՄԵԼՍ գնահատականից:

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱԼԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

2004 թ. ձեռնարկություններում իրականացված հարցումների արդյունքների հիման վրա[*]

Ա. Գրիգորյան, Կ. Պողոսյան, Գ. Աղաջանյան, Հ. Զորյան
Վիճակագրության վարչություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2003 – 2004 թթ. ընթացքում ձեռնարկություններում իրականացվել է երկու փորձնական հարցում՝ հիմնականում պայմանավորված տնտեսության իրավիճակի և միտումների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքագրման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, 2004 թ. իրականացված հարցման հիմնական նպատակներն են եղել.

1. ձեռնարկությունների թողարկման ծավալների և արտադրանքի գների փոփոխությունների վերաբերյալ սպասումների հիման վրա ճյուղերի իրական աճերի և գների ինդեքսների գնահատումը,
2. տնտեսական գործընթացների վերաբերյալ որակական տեղեկատվության հիման վրա տնտեսական միջավայրը և միտումները բնութագրող որակական բաղադրյալ ինդեքսների կառուցումը:

Հետազոտվել է Երևանի և Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Տավուշի, Լոռու, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի արդյունաբերության, շինարարության և ծառայությունների[1] ոլորտներում գործող 209 ձեռնարկություն: Ձեռնարկությունների քանակական բաշխումն ըստ նշված ճյուղերի իրականացվել է ավելացված արժեքներում դրանց տեսակարար կշիռների հիման վրա:

Աղյուսակ 1. Հարցման ընտրանքում ընդգրկված ձեռնարկությունների բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի

Ճյուղ	Ընտրված ձեռնարկությունների քանակ	Հետազոտված ձեռնարկությունների քանակ
Արդյունաբերություն	84-112	111
Ծառայություններ	45-60	73
Շինարարություն	21-28	25
Ընդամենը	**150-200**	**209**

Հարցումները հնարավորություն ընձեռեցին գնահատելու պարբերաբար իրականացվող հետազոտությունների ժամանակ ԿԲ հետ համագործակցելու հարցում տնտեսավարող սուբյեկտների պատրաստակամությունը, ինչպես նաև որոշ տնտեսական ցուցանիշներ:

Նշենք, որ այսուհետև ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրականացվեն ձեռնարկությունների եռամսյակային, կիսամյակային և տարեկան հետազոտություններ, որոնց նպատակն է.

1. առանձին ձեռնարկությունների գործունեության ծրագրային ցուցանիշների հիման վրա տնտեսության զարգացման սպասվող միտումների բացահայտումը,
2. տնտեսության ճյուղերի և ձեռնարկությունների հետազոտությունների հիման վրա տնտեսական երևույթների միջև առկա պատճառահետևանքային կապերի բացահայտումը,
3. ֆինանսական կայունության ցուցանիշների համակարգի որոշ ցուցանիշների (պաշտոնական վիճակագրությամբ չտրամադրվող) գնահատումը:

[*] *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*
[1] *Ծառայությունների ոլորտից հիմնականում հետազոտվել են բնակչությանը վճարովի ծառայություններ մատուցող և ծրագրավորմամբ զբաղվող ձեռնարկությունները, արդյունաբերությունից՝ մշակող և մի քանի հանքագործական արդյունաբերության ձեռնարկություններ:*

Կենտրոնական բանկի կողմից ձեռնարկություններում և տնային տնտեսություններում իրականացվող հարցումների արդյունքում պարբերաբար կհաշվարկվեն և կհրապարակվեն հետևյալ ինդեքսները.

- գործարար միջավայրի ինդեքս,
- տնտեսական ակտիվության ինդեքս,
- սպառողների վստահության ինդեքս,
- առաջնորդող և համընկնող տնտեսական ինդիկատորներ:

Նյութում ներկայացված են միայն առաջին երկու ինդեքսները: Սպառողների վստահության ինդեքսը ՀՀ ԿԲ կողմից կհաշվարկվի և կհրապարակվի 2005թ. տնային տնտեսություններում կատարված հետազոտությունների հիման վրա: Առաջնորդող և համընկնող տնտեսական ինդիկատորները ՀՀ ԿԲ համար հանդիսանում են միջինժամկետ ծրագիր և կհաշվարկվեն անհրաժեշտ տնտեսական ցուցանիշների վերաբերյալ ժամանակային շարքերի ձևավորումից հետո:

Նյութը բաղկացած է չորս հիմնական մասերից: Առաջին մասում ներկայացված են ձեռնարկությունների հարցման արդյունքների հիման վրա հաշվարկված ամփոփ տնտեսական ինդեքսները: Երկրորդ մասում ներկայացված է ձեռնարկությունների տնտեսական գործունեության ինտեգրալ (ամփոփ) ցուցանիշի բաշխվածությունը, երրորդ մասում՝ ձեռնարկությունների կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունը, չորրորդ մասում՝ ընդհանուր եզրակացությունները:

1. ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐ

Բաղադրյալ տնտեսական ինդեքսները քաղաքականություն իրականացնողներին հնարավորություն են տալիս տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերի և սպասվող միտումների վերաբերյալ ստանալու առավել օպերատիվ տեղեկատվություն: Ինդեքսների վերաբերյալ համապատասխան ժամանակային շարքերի ձևավորումը նպաստում է նաև տնտեսական գործընթացների կանխատեսումների որակի բարձրացմանը:

1.1. *Գործարար միջավայրի ինդեքսը* իրենից ներկայացնում է տնտեսական միջավայրը բնութագրող ընդհանրական ինդեքս: Ինդեքսի հաշվարկման և հրապարակման հիմնական նպատակը ընդհանուր տնտեսական վիճակի և սպասվող միտումների կանխատեսման համար տեղեկատվություն ստանալն է:

Կենտրոնական բանկը ինդեքսը հաշվարկել է 2004թ. ընթացում իրականացված տնտեսական գործունեության հետ կապված ռիսկերի և 2005թ. ընթացքում ռիսկերի և ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ ձեռնարկությունների գնահատումների հիման վրա: Յուրաքանչյուր հարցի համար հաշվարկվել են ձեռնարկությունների պատասխանների դիֆուզիոն ինդեքսներ[2], որոնց միջինացման արդյունքում ստացվել է գործարար միջավայրի ինդեքսը: Վերջինս կարող է տատանվել 0 - 100 միջակայքում: Ինդեքսի «0» արժեքը նշանակում է, որ բոլոր ձեռնարկությունների գնահատումներով՝ տնտեսությունում ավելացել են տնտեսական գործունեության հետ կապված ռիսկերը, նույն միտումները կշարունակվեն հաջորդ տարվա ընթացքում, իսկ ընդհանուր տնտեսական վիճակը վատթարացել է: Ինդեքսի «100» արժեքը նշանակում է, որ տնտեսությունում տեղի են ունեցել ճիշտ հակառակ գործընթացներ: Ինդեքսի «50» արժեքը ենթադրում է կայուն, անփոփոխ իրավիճակ:

Համաձայն ձեռնարկությունների գնահատումների՝ 2005թ. գործարար միջավայրի ամփոփ գնահատականը կազմում է 55.0[3]: Դա նշանակում է, որ ՀՀ տնտեսության գործարար միջավայրում սպասվում է ռիսկերի փոքր-ինչ նվազում և ընդհանուր տնտեսական վիճակի որոշակի բարելավում:

1.2. *Տնտեսական ակտիվության ինդեքսը* իրենից ներկայացնում է արդյունաբերության ճյուղում թողարկման, պատվերների և պաշարների շարժի ընդհանուր, ամփոփ գնահատական:

Ինդեքսը հաշվարկվել է 2004թ. և 2005թ. ընթացքում թողարկման ծավալների և 2005թ. ընթացքում արտադրության պատվերների և պաշարների վերաբերյալ ձեռնարկությունների սպասումների հիման վրա: Հաշվի առնելով շինարարության և ծառայությունների ոլորտներում պաշարների և պատվերների գնահատման հետ կապված դժվարությունները և ՀՆԱ հետ ճյուղերի կոռելյացիաների գործակիցների մեծությունները՝ ինդեքսը հաշվարկվել է միայն արդյունաբերության ճյուղի ցուցանիշների հիման վրա:

---

[2] Այստեղ դիֆուզիոն ինդեքսները հաշվարկվել են որպես դրական պատասխանների տեսակարար կշռի (արտահայտված տոկոսով) և չեզոք պատասխանների տեսակարար կշռի կեսի գումար:

[3] Սույն նյութում ներկայացված գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ամփոփ գնահատականները հաշվարկվում են առաջին անգամ, որոնք բազա կհանդիսանան հետագայում հաշվարկվող ինդեքսների համար: Ինդեքսները (բազիսայինի նկատմամբ փոփոխությունները) կհաշվարկվեն և կհրապարակվեն հաջորդ ժամանակաշրջանի վերաբերյալ ամփոփ գնահատականների առկայության դեպքում:

Տնտեսական ակտիվության ինդեքսը նույնպես դիֆուզիոն ինդեքս է և կարող է տատանվել 0 - 100 միջակայքում: Ինդեքսի «0» արժեքը նշանակում է, որ բոլոր ձեռնարկությունների գնահատումներով՝ տնտեսական ակտիվությունը նվազել է: Ինդեքսի «100» արժեքը նշանակում է, որ բոլոր ձեռնարկությունների գնահատումներով՝ նկատվում է տնտեսական ակտիվության աճ, իսկ «50» արժեքի դեպքում՝ սպասվում է կայուն, անփոփոխ իրավիճակ:

Համաձայն արդյունաբերական ձեռնարկությունների գնահատումների՝ 2005թ. ընթացքում արդյունաբերության ոլորտի տնտեսական ակտիվության ամփոփ գնահատականը կազմում է 75.04: Դա նշանակում է, որ 2005թ. ընթացքում սպասվում է զգալի տնտեսական ակտիվություն:

2. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱԼԱՅԻՆ (ԱՄՓՈՓ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ձեռնարկությունների տնտեսական գործունեության ինտեգրալ ցուցանիշը տարբեր ցուցանիշների միջինացված մեծություն է, ընդ որում՝ այդ ցուցանիշի հաշվարկն առաջարկում ենք իրականացնել վիճակագրության տեսության մեջ հայտնի գլխավոր բաղադրատարրերի եղանակի օգնությամբ:

Համառոտ ներկայացնենք գլխավոր բաղադրատարրերի մեթոդի էությունը: Գլխավոր բաղադրատարրերը «անտեսանելի» փոփոխականներ են, որոնք հաշվարկվում են նախնական փոփոխականների հիման վրա: Նախ հաշվարկվում է նախնական փոփոխականների կոռելյացիոն մատրիցը, այնուհետև՝ նշված մատրիցի սեփական արմատներն ու սեփական վեկտորները: Հիմնվելով նախնական փոփոխականների ստանդարտացված մեծությունների և կոռելյացիոն մատրիցի սեփական արմատների վրա՝ հաշվարկվում են գլխավոր բաղադրատարրերը: Նշված գործողությունները մաթեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. $F = A^{-1}Z^T$, որտեղ՝ F - գլխավոր բաղադրատարրերի ստանդարտացված մեծություններն են, A^{-1} – սեփական վեկտորների մատրիցը (կամ կշիռների մատրիցը), Z^T – նախնական փոփոխականների ստանդարտացված մեծություններն են: Հարկ է նշել, որ A մատրիցի անդամները հանդիսանում են նախնական փոփոխականների և գլխավոր բաղադրատարրերի միջև կոռելյացիոն գործակիցներ:

Գործնականում գլխավոր բաղադրատարրերի քանակը համընկնում է նախնական փոփոխականների քանակին: Գոյություն ունեն գլխավոր բաղադրատարրերի եղանակով ինտեգրալ ցուցանիշի հաշվարկման երկու տարածված մոտեցումներ: Համաձայն առաջին մոտեցման՝ որպես ինտեգրալ ցուցանիշ ընդունվում է առաջին գլխավոր բաղադրատարրը, քանզի այն ունի ամենամեծ տեսակարար կշիռը նախնական փոփոխականների ընդհանուր դիսպերսիայի մեջ: Համաձայն երկրորդ մոտեցման՝ ինտեգրալ ցուցանիշը հաշվարկվում է որպես գլխավոր բաղադրատարրերի կշռված միջին: Աշխատանքում կիրառվել է առաջին մոտեցումը:

Հաշվարկման համար որպես նախնական փոփոխականներ կիրառվել են 2004թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից ձեռնարկություններում իրականացված հարցման արդյունքները: Բոլոր նախնական փոփոխականները վերաբերում են 2005թ. համար ձեռնարկությունների սպասումներին: Ինտեգրալ ցուցանիշները հաշվարկվել են արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ոլորտների ձեռնարկությունների համար: Նշենք, որ մինչև ձեռնարկությունների տնտեսական գործունեության ինտեգրալ ցուցանիշների հաշվարկը, նախնական փոփոխականները կշռվել են ձեռնարկությունների թողարկման ծավալներով: Մասնավորապես, արդյունաբերության ցուցանիշները կշռվել են արդյունաբերական թողարկման ծավալում ձեռնարկությունների տեսակարար կշիռներով, շինարարության ոլորտի ցուցանիշները՝ կապալային աշխատանքների ծավալներով, իսկ ծառայությունների ոլորտի ցուցանիշները՝ մատուցված ծառայությունների ծավալներով: Այնուհետև յուրաքանչյուր ցուցանիշի համար հաշվարկվել են կշռված միջին թվաբանական և կշռված ստանդարտ շեղման մեծությունները, որոնց հիման վրա նախնական փոփոխականների մեծությունները ստանդարտացվել են հետևյալ բանաձևի օգնությամբ. $X^*_{ij} = \frac{X_{ij} - X^*_j}{\sigma_j}$, որտեղ՝ X^*_{ij}–ն՝ i - րդ ձեռնարկության j - րդ ցուցանիշի ստանդարտացված մակարդակն է, X_{ij} -ն՝ i - րդ ձեռնարկության j - րդ ցուցանիշի նախնական փոփոխականի մակարդակն է, X^*_j - j - րդ ցուցանիշի կշռված միջին թվաբանական մեծությունն է, σ_j - j - րդ ցուցանիշի կշռված ստանդարտ շեղման մեծությունն է:

Ստորև ներկայացված են նախնական փոփոխականներն ըստ ոլորտների:

Արդյունաբերություն.

- թողարկման ծավալների փոփոխություն,
- արտադրանքի գների փոփոխություն,
- միջին աշխատավարձի փոփոխություն,
- աշխատողների թվաքանակի փոփոխություն,
- արտադրական հզորությունների օգտագործման մակարդակի փոփոխություն,
- արտադրանքի նկատմամբ պատվերների փոփոխություն:

Շինարարություն.

- կապալային աշխատանքների ծավալի փոփոխություն,
- շինարարական աշխատանքների գների փոփոխություն,
- աշխատողների թվաքանակի փոփոխություն,
- միջին աշխատավարձի փոփոխություն,
- շինարարական աշխատանքների պատվերների փոփոխություն:

Ծառայություններ.


- մատուցված ծառայությունների ծավալի փոփոխություն,
- մատուցված ծառայությունների գների փոփոխություն,
- աշխատողների թվաքանակի փոփոխություն,
- միջին աշխատավարձի փոփոխություն:

Ըստ վերոնշյալ երեք ճյուղերի.


- թողարկման ծավալներ,
- գների փոփոխություն,
- միջին աշխատավարձի փոփոխություն,
- աշխատողների թվաքանակի փոփոխություն:

Յուրաքանչյուր ճյուղի ձեռնարկությունների համար հաշվարկած ինտեգրալ ցուցանիշների մեծությունները ներկայացված են գծանկարներ 1-3-ում:


Գծանկար 1. Արդյունաբերական ձեռնարկություններ (53 ձեռնարկություն)



Գծանկար 2. Շինարարական ձեռնարկություններ (14 ձեռնարկություն)




Գծանկար 3. Ծառայությունների ոլորտի ձեռնարկություններ (69 ձեռնարկություն)



Ինչպես տեսնում ենք գծանկարներից, արդյունաբերական ձեռնարկությունների գերակշիռ մասը՝ 69.8 %-ը, գտնվում է զրոյական մակարդակից (միջին մակարդակից) ցածր, շինարարության ոլորտում նշված ցուցանիշը կազմում է մոտ 71.4 %, ծառայությունների ոլորտում՝ 63.8%:

Ճյուղերի ինտեգրալ ցուցանիշները համադրելի դաշտում միմյանց հետ համեմատելու նպատակով վերջիններիս հաշվարկը իրականացվել է նաև ամբողջ տնտեսության համար (արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ոլորտներում գործող կազմակերպությունների ցուցանիշների՝ որպես մեկ ամբողջության հիման վրա):

Գծանկար 4. Արդյունաբերություն, շինարարություն, ծառայություններ. տնտեսական գործունեության ինտեգրալ ցուցանիշի բաշխվածությունը (136 ձեռնարկություն)



Գծանկար 4-ում ներկայացված է նշված երեք ճյուղերում գործող կազմակերպությունների համեմատական բաշխվածությունը ըստ ինտեգրալ ցուցանիշի մեծության: Եթե բոլոր ճյուղերի համար հաշվարկվում է միասնական ինտեգրալ ցուցանիշ, ապա արդյունաբերական ձեռնարկությունների 62.3 %-ը, շինարարության ոլորտի 64.3%-ը և ծառայությունների 66.7 %-ը գտնվում է զրոյական մակարդակից (միջին մակարդակից) ցածր, այսինքն՝ արդյունքները նախորդ գծանկարներում ներկայացված ցուցանիշներից էականորեն չեն տարբերվում:

Այսպիսով, կիրառելով վերոնշյալ մեթոդաբանությունը՝ կարելի է յուրաքանչյուր ձեռնարկության համար հաշվարկել տնտեսական գործունեության ինտեգրալային ցուցանիշ, որի օգնությամբ հնարավոր է տեսնել ձեռնարկության տեղը տվյալ ճյուղի ձեռնարկությունների համակարգում, ինչպես նաև համեմատել տնտեսության մյուս ճյուղերի ձեռնարկությունների հետ:

3. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խմբերը փոխելու առումով հետազոտված ձեռնարկությունների ճկունության վերլուծությունն իրականացվել է երկու ուղղություններով. նախ դիտարկվել են ձեռնարկություններում աշխատողների արտադրողականության աճի հնարավորությունները, այնուհետև ստուգվել է թողարկման ծավալների աճի վրա ձեռնարկությունների չափի (ըստ աշխատողների թվաքանակի) փոփոխման ազդեցության վարկածը: Առաջինի համար կիրառվել է լայն տարածում գտած՝ փոփոխությունների Մարկովյան մոդելը, իսկ երկրորդը ստուգվել է խաչաձև աղյուսակների եղանակով:

Վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվական բազան ընդգրկում է 2004թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից ձեռնարկություններում իրականացված հարցումների արդյունքները: Կիրառված հիմնական փոփոխականները ձեռնարկությունների գնահատումներն են 2004-2005թթ. ընթացքում իրենց թողարկման ծավալների, թողարկման ծավալների աճի և ներգրավված աշխատողների վերաբերյալ:

Մարկովյան մոդելի էությունն ու առանձնահատկությունները

Սահմանափակ թվով փորձերի հաջորդականությունը, որտեղ յուրաքանչյուր փորձի արդյունք ինչ-որ չափով ներառում է պատահականության տարր, իրենից ներկայացնում է ստոխաստիկ գործընթաց: Այստեղ յուրաքանչյուր փորձ ունի սահմանափակ քանակությամբ արդյունքների հնարավորություն:

Ենթադրենք՝ փորձի յուրաքանչյուր արդյունք ունի $O_1, O_2, ..., O_n$ տարբերակները, որտեղ $n<\infty$, և O_j արդյունքի ի հայտ գալու հավանականությունը ինչ-որ չափով կախված է նախորդող՝ (j-1)-րդ փորձի արդյունքից: Ենթադրենք նաև, որ ունենք որոշակի P_{ij} թվերի ամբողջություն, որոնք իրենցից ներկայացնում են O_j արդյունքի ի հայտ գալու հավանականությունը՝ ենթադրելով, որ նախորդ փորձի արդյունքը եղել է O_i: Տրված $O_1, O_2, ..., O_n$ արդյունքների ամբողջությունը կոչվում է «վիճակներ», իսկ P_{ij} հավանականությունները՝ վիճակների միջև անցումային հավանականություններ:

Այժմ ենթադրենք՝ ունենք մեկը մյուսին հաջորդող, հավասարաչափ բաշխված ժամանակահատվածներ: Եթե n ժամանակահատվածում համակարգը գտնվում էր O_i վիճակում, ապա P_{ij}-ն այստեղ n+1 ժամանակահատվածում O_j վիճակին անցնելու հավանականությունն է: Նման համակարգը կոչվում է «պարզ Մարկովյան գործընթաց» (Մարկովյան շղթաներ): P_{ij} անցումային հավանականությունները ներկայացվում են քառակուսային մատրիցի տեսքով, և յուրաքանչյուր P_{ij} տարրի համար ճիշտ է, որ $P_{ij}>0$ և ցանկացած i-ի համար՝ $\sum_j p_{ij} = 1$:

Մարկովյան շղթաները հնարավորություն են տալիս լուծելու հետևյալ հիմնական խնդիրները.

ա) t ժամանակ հետո օբյեկտների հնարավոր բաշխվածության կանխատեսում,

բ) օբյեկտի i դիրքից j դիրք տեղափոխվելու միջին տևողության (ժամանակի) հաշվարկ,

գ) ժամանակի սահմանված տևողության պայմաններում i դիրքից j դիրք տեղափոխվելու հավանականությունների հաշվարկ,

դ) օբյեկտի՝ i դիրքում գտնվելու միջին տևողության հաշվարկ:

Սույն նյութում Մարկովյան շղթաներ կառուցելու համար 2004 – 2005 թթ. համար հաշվարկվել է աշխատողների արտադրողականությունը (թողարկման ծավալների և աշխատողների թվաքանակի հարաբերություն): Արտադրողականության ցուցանիշների հիման վրա ձեռնարկությունները դասակարգվել են 4

հավասարաչափ խմբերի՝ փոքր, միջին, խոշոր և գերխոշոր (բաշխվել են ըստ կվարտիլների): Դասակարգումն իրականացվել է նախ 2004թ., այնուհետև՝ 2005թ. արտադրողականության հիման վրա[4]: Այնուհետև հաշվարկվել է մեկ խմբից մյուսն անցնելու հավանականային մատրից՝ կիրառելով Մարկովյան գործընթացների տեխնիկան:

Աղյուսակ 2. Ըստ 2004-2005թթ. արտադրողականության՝ ձեռնարկությունների խմբերում հավանականային բաշխման մատրից

		2005 թ. ձեռնարկությունների արտադրողականությունը				Ընդամենը
		1	2	3	4	
2004 թ. ձեռնարկությունների արտադրողականությունը	1	87.2%	10.6%	2.1%		100.0%
	2	12.8%	74.5%	10.6%	2.1%	100.0%
	3		14.9%	80.9%	4.3%	100.0%
	4			6.4%	93.6%	100.0%
Ընդամենը		25.0%	25.0%	25.0%	25.0%	100.0%

Այստեղ i, j դիրքերը ձեռնարկությունների կվարտիլային խմբերն են: Վերջիններիս 2004թ. և 2005թ. բաշխվածության հիման վրա հաշվարկվել է անցումային հավանականությունների մատրիցը:

Ինչպես երևում է աղյուսակից, ցուցանիշները հիմնականում սփռված են մատրիցի գլխավոր անկյունագծի երկայնքով: Գլխավոր անկյունագծին կից երկու երկրորդական անկյունագծերում էլ ստացված հավանականությունները բավականին փոքր են, ինչը վկայում է, որ ձեռնարկություններում չի սպասվում արտադրողականության էական աճ, ինչը կարող էր առաջացնել կառուցվածքային տեղաշարժեր: Այսպես, հավանականությունը, որ մեկ տարվա ընթացքում աշխատողների արտադրողականությունն այնքան կաճի, որ առաջին խմբի ձեռնարկությունները կանցնեն երկրորդ խումբ, կազմում է 10.6%:

Անցման նախնական մատրիցի հիման վրա հաշվարկվել են նաև երկու և չորս տարի հետո խմբերի միջև անցումային հավանականությունները՝ ենթադրելով, որ ձեռնարկությունների շարժը խմբերի միջև ժամանակի ընթացքում համեմատաբար կայուն է: Արդյունքները ցույց են տալիս, որ անգամ չորս տարի հետո էական կառուցվածքային տեղաշարժեր (արտադրողականության մասով) ձեռնարկություններում չի սպասվում:

Աղյուսակ 3. Խմբերի միջև անցումային հավանականությունները երկու տարի հետո

	1	2	3	4
1	77.5%	17.5%	4.7%	0.3%
2	20.6%	58.4%	16.9%	4.0%
3	1.9%	23.1%	67.2%	7.7%
4	0.0%	1.0%	11.1%	87.9%

Աղյուսակ 4. Խմբերի միջև անցումային հավանականությունները չորս տարի հետո

	1	2	3	4
1	63.7%	24.9%	9.8%	1.6%
2	28.4%	41.7%	22.7%	7.3%
3	7.5%	29.5%	50.1%	12.9%
4	0.4%	4.0%	17.4%	78.2%

Մարկովյան շղթաների տեխնիկան կիրառվել է նաև 2004 - 2005թթ. ընթացքում՝ ըստ աշխատողների թվաքանակի սահմանված խմբերում ձեռնարկությունների անցումային հավանականությունների մատրից հաշվարկելու համար:

[4] 2005թ. վերաբերյալ ցուցանիշները ձեռնարկությունների գնահատումներն են: Վերլուծության իրականացման համար ենթադրվել է, որ վերջիններս իրականանալու բավականին մեծ հավանականություն ունեն:

Աղյուսակ 5. 2004 – 2005 թթ. ընթացքում ձեռնարկությունների հավանականային բաշխման մատրիցը՝ ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի

		2005 թ. ընթացքում ձեռնարկությունների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի				Ընդամենը
		1.00	2.00	3.00	4.00	
2004 թ. ընթացքում ձեռնարկությունների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակի	1.00	94.0%	6.0%			100.0%
	2.00	6.0%	82.0%	12.0%		100.0%
	3.00		12.0%	84.0%	4.0%	100.0%
	4.00			3.9%	96.1%	100.0%
Ընդամենը		24.9%	24.9%	24.9%	25.4%	100.0%

Ինչպես երևում է աղյուսակից, արդյունքները գրեթե նույնն են: Ամենամեծ հավանականությունները գրանցվել են մատրիցի գլխավոր անկյունագծի երկայնքով, ինչը ցույց է տալիս, որ ձեռնարկություններում էական ճկունություն չի նկատվում: Այլ կերպ ասած՝ ձեռնարկությունները իրենց տնտեսական գործունեությունում կտրուկ տեղաշարժեր չեն ակնկալում, որոնք կարող էին հանգեցնել կառուցվածքային փոփոխությունների:

Այսպիսով, կիրառելով Մարկովյան շղթաների գաղափարը ձեռնարկությունների հարցումների արդյունքների վրա՝ պարզվում է, որ հարցման ընտրանքում ընդգրկված ձեռնարկությունները ցուցաբերում են զարգացման չափավոր տեմպ: Արտադրողականության և աշխատողների թվաքանակի փոփոխման նման ցածր տեմպը կարող է հիմնականում պայմանավորված լինել ձեռնարկություններում նոր տեխնոլոգիաների ներդրման համեմատաբար դանդաղ տեմպերով և պահանջարկի ու արտադրական ներուժի օգտագործման ցածր մակարդակով:

Ձեռնարկությունների թողարկման ածի կախվածությունը դրանց չափերից

Հաշվի առնելով ձեռնարկությունների ճկունության մակարդակը արտադրողականության և աշխատողների թվաքանակով որոշվող չափերի տեսանկյունից՝ կատարվել է նաև վերլուծություն՝ ստուգելու համար, թե ձեռնարկությունների չափերի և նրանց թողարկման ծավալների ածի տեմպի միջև որևէ կապ գոյություն ունի, թե՝ ոչ: Վարկածի էությունն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում համեմատաբար խոշոր ձեռնարկությունների թողարկումն աճում է ավելի արագ և կայուն տեմպերով, քան փոքր ձեռնարկությունների թողարկումը: Վարկածի հիմքում այն ենթադրությունն է, որ համեմատաբար խոշոր ձեռնարկությունները լրացուցիչ կապիտալ ներդրումների և նոր շուկաների ներգրավման, հետևաբար՝ թողարկման ծավալների ածի ավելի մեծ հնարավորություն ունեն, քան փոքր ձեռնարկությունները:

Հետազոտված ձեռնարկությունների համար որպես չափը բնորոշող փոփոխական կիրառվել է աշխատողների թվաքանակը, իսկ ածը բնորոշող փոփոխական՝ թողարկման ծավալների ածը: Վերլուծությունն իրականացվել է արդյունաբերության, շինարարության և ծառայությունների 201 ձեռնարկությունների հարցման արդյունքների հիման վրա:

Նախ իրականացվել է թողարկման ծավալների և աշխատողների թվաքանակի հիման վրա ձեռնարկությունների կվարտիլային բաշխում: Այնուհետև նշված երկու չափանիշներով կառուցվել է կվարտիլների խաչաձև աղյուսակ:

Աղյուսակ 6. Ձեռնարկությունների կվարտիլային բաշխվածության խաչաձև աղյուսակ

		Ձեռնարկությունների կվարտիլային բաշխվածությունն ըստ աշխատողների թվաքանակի				Ընդամենը
		1.00	2.00	3.00	4.00	
Ձեռնարկությունների կվարտիլային բաշխվածությունն ըստ աշխատողների թվաքանակի	1.00	26.0%	30.0%	24.0%	20.0%	100.0%
	2.00	32.0%	24.0%	24.0%	20.0%	100.0%
	3.00	22.0%	24.0%	20.0%	34.0%	100.0%
	4.00	19.6%	21.6%	31.4%	27.5%	100.0%
Ընդամենը		24.9%	24.9%	24.9%	25.4%	100.0%

Հաշվարկային $\chi^2 = 6.629$

Ազատության աստիճան՝ 9

Հաշվարկային նշանակալիության աստիճան՝ 0.676


95% նշանակալիության աստիճանի պայմաններում աղյուսակային $\chi^2_{table} = 16.92$ *:*

Աղյուսակ իրենից ներկայացնում է անցումային հավանականությունների մատրից: Ինչպես երևում է, մատրիցի տարրերը բավականաչափ ցրված են գլխավոր անկյունագծի նկատմամբ: Այստեղ զրոյական վարկածն իրենից ներկայացնում է երկու փոփոխականների միջև վիճակագրական անկախությունը, իսկ մրցակցողը ենթադրում է, որ երկու փոփոխականները փոխկախվածության մեջ են:

Զրոյական վարկածի ստուգման համար որպես չափանիշ կիրառվում է վիճակագրության տեսության մեջ հայտնի Պիրսոնի χ^2 չափանիշը: Եթե χ^2 չափանիշի փաստացի արժեքը տրված նշանակալության աստիճանի պայմաններում ավելի մեծ է, քան վերջինիս աղյուսակային (կրիտիկական) արժեքը՝ χ^2_{table}, ապա զրոյական վարկածը հերքվում է, հակառակ դեպքում՝ ընդունվում է:

Այսպիսով, դիտարկելով խաչաձև աղյուսակը և համապատասխան χ^2 վիճակագիրը, պարզվում է, որ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հետազոտված ձեռնարկություններում թողարկման ծավալների աճի վրա ձեռնարկությունների չափերն էական ազդեցություն չունեն: Նման կապի բացակայությունն առավել ակնառու երևում է ստորև ներկայացված գծանկարում:

Գծանկար 6. Ձեռնարկության չափերի և թողարկման ծավալների փոխկապվածությունը



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2004թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ձեռնարկություններում անցկացված հարցումների արդյունքների հիման վրա: Նյութում ներկայացվում է ձեռնարկությունների գործունեությունը երեք հիմնական տեսանկյուններից. տնտեսական ինդեքսներ, որոնք ցույց են տալիս ընդհանուր տնտեսական վիճակը, տնտեսական ինտեգրալ ցուցանիշ, ինչը բնութագրում է երեք ճյուղերում տնտեսական գործունեությունը և ձեռնարկությունների ճկունությունը:

Տնտեսությունում ընդհանուր տնտեսական վիճակը կարելի է գնահատել դրական: Գործարար միջավայրի ինդեքսը, որն իրենից ներկայացնում է տնտեսական միջավայրը բնութագրող ընդհանրական ինդեքս, կազմում է 55.0, ինչը վկայում է, որ տնտեսությունում ընդհանուր տնտեսական միջավայրը բավականին կայուն է: Միևնույն ժամանակ, արդյունաբերությունում տնտեսական ակտիվության ինդեքսը կազմում է 75.0, ինչը վկայում է, որ արդյունաբերությունում առկա է բավականին բարձր ակտիվություն:

Մյուս կողմից, գլխավոր բաղադրատարրերի եղանակով հաշվարկված տնտեսական գործունեության ինտեգրալ ցուցանիշը ցույց է տալիս, որ տնտեսության բոլոր ճյուղերում ձեռնարկությունների

գերակշիռ մասի տնտեսական գործունեությունը գնահատվում է միջին մակարդակից ցածր, ինչը հիմնականում վերաբերում է պատվերներին և թողարկման ծավալներին (առաջին գլխավոր բաղադրատարրն իրենից ներկայացնում է թողարկման և պատվերների ծավալների վերաբերյալ ձեռնարկությունների սպասումները):

Ինչ վերաբերում է ձեռնարկությունների ճկունությանը, ապա կիրառելով Մարկովյան շղթաների տեխնիկան և ստուգելով ձեռնարկությունների չափի և թողարկման ծավալների աճի միջև կախվածության վերաբերյալ վարկածը՝ պարզվում է, որ ՀՀ ձեռնարկություններում կառուցվածքային տեղաշարժեր չեն սպասվում: Վերլուծության արդյունքում պարզվեց նաև, որ ձեռնարկություններում թողարկման ծավալների աճի տեմպը կախված չէ ձեռնարկությունների չափերից (դասակարգված ըստ աշխատողների թվաքանակի):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. David Duffy, James Williams: Constructing a Consumer Sentiment Index for Ireland, ESRI, April, 2002.
2. FDI Confidence Index: Global Business Policy Council, September 2003, Volume 6
3. Business Tendency Surveys, Proceedings of the First Joint OECD – ADB Workshop, Manila, CCNM/STD(2000)3, November 1999.
4. Main Economic Indicators: Sources & Definitions, OECD, Statistics Directorate, 2000.
5. Ronny Nilsson, Confidence Indicators and Composite Indicators, OECD (Paper for presentation at the CIRET Conference in Paris, 10-14 October 2000).
6. Business Climate Indicator for the Euro Area, EC, Directorate General Economic and financial affairs, 2000.
7. The Joint Harmonised EU Programme of Business and Consumer Surveys, User Guide, EC, Directorate General Economic and financial affairs, 2003.
8. Àéâàçÿí Ñ.À., Ìõèòàðÿí Â.Ñ. Ïðèêëàäíàÿ ñòàòèñòèêà è îñíîâû ýêîíîìåòðèêè. Ì., ÞÍÈÒÈ, 1998.
9. Ãëèíñêèé Â.Â., Èîíèí Â.Ã. Ñòàòèñòè÷åñêèé àíàëèç. Ì., Ôèëèí, 1998.
10. Ñîøíèêîâà Ë., Òàìàøåâè÷ Â., Óåáå Ã., Øåôåð Ì. Ìíîãîìåðíûé ñòàòèñòè÷åñêèé àíàëèç â ýêîíîìèêå. Ì., ÞÍÈÒÈ, 1999.

ՀՀ-ՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՈԼԱՐԱՅՆԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

Լ. Հայրապետյան, Փ. Մարգարյանց, Վ. Նիկողոսյան, Ա. Շաբոյան, Հ. Զորյան
Վիճակագրության վարչություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սովորաբար երկրների դոլարայնացման ցուցանիշը գնահատում են՝ արտարժույթով ավանդները հարաբերելով ընդհանուր ավանդներին կամ փողի զանգվածին: Սակայն, ՀՀ-ում շրջանառության մեջ գտնվող կանխիկ արտարժույթը հաճախ վճարման միջոցի գործառույթ է կատարում՝ էական մասնակցություն ունենալով հանրապետությունում ստեղծվող ՀՆԱ-ի սպասարկման գործում: Չնայած արտարժույթի՝ իբրև վճարման միջոցի դերը վերջին տարիներին որոշակիորեն նվազել է, այն դեռևս զգալի բաժին ունի ռեզիդենտների միջև կատարվող գործարքներում:

Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունը ճշտորեն հաշվարկում է շրջանառությունում գտնվող կանխիկ ՀՀ դրամի քանակը և արտարժութային ավանդների ծավալը: Ինչ վերաբերում է կանխիկ արտարժույթի ապա դրա քանակությունը ոչ միայն դժվար է հաշվարկել, այլ նույնիսկ գնահատել անուղղակի մեթոդներով: ՀՀ-ում շրջանառության մեջ գտնվող կանխիկ արտարժույթի քանակի գնահատումը թույլ կտա բարձրացնել ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության հավաստիությունը և առավել ճշգրիտ գնահատել փողի ագրեգատների ազդեցությունը գնաճի վրա:

Շրջանառությունում արտարժույթի ծավալի գնահատման նպատակով ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից 2003թ. սեպտեմբեր-հոկտեմբեր և 2004թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հարցումներ են իրականացվել ՀՀ տնային տնտեսություններում և արտարժույթի փոխանակման կետերում: Հարցումը նպատակ է հետապնդել նաև բացահայտել հանրապետության բնակչության սպասումները և վարքագիծը տնտեսական ու ֆինանսական միջավայրի որոշակի փոփոխությունների պայմաններում:

2004թ. հարցման հիմնական օբյեկտներ են հանդիսացել ՀՀ տնային տնտեսությունները և արտարժույթի փոխանակման կետերը (ընտրանքային հարցում, որն անցկացվել է ՀՀ արժութային դիլերների միության կողմից): Հաշվի առնելով ձեռնարկությունների կողմից արտարժույթի օգտագործման նկատմամբ առկա օրենսդրական սահմանափակումները, վերջիններիս շրջանում հարցման իրականացումը նպատակահարմար չի համարվել: Նման հարցումների արդյունավետությունը բավականին ցածր կլիներ, քանի որ ձեռնարկությունների մեծ մասը կխուսափեր նշել կանխիկ արտարժույթի առկայության մասին: Տվյալ հարցման ընթացքում ձեռնարկությունների սեփականատերերը, որոնք հանդես են եկել իբրև տնային տնտեսություններ, իրենց ձեռնարկությունների կանխիկը գնահատել են իբրև անձնական դրամական միջոցներ:

Հարցումը կազմակերպվել է ժամանակավորապես ներգրավված 20 հարցազրուցավարների միջոցով, որոնք հարցազրույցներ են անցկացրել հանրապետության տարբեր բնակավայրերում:

Հաշվի առնելով, որ Երևանում է կենտրոնացած Հանրապետության գործարար ներուժի հիմնական մասը, և մայրաքաղաքում բնակչության կենսամակարդակն ավելի բարձր է, հարցման ընթացքում հիմնական ուշադրությունը, ինչպես և նախատեսվում էր, կենտրոնացվել է Երևանի վրա (հարցվողների շուրջ 72%-ը): Հայաստանի մյուս քաղաքներում անցկացվել է հարցումների շուրջ 22%-ը, իսկ գյուղական բնակավայրերում՝ 6%-ը: Հարցման ընտրանքում վերջիններիս ցածր բաժինը պայմանավորված է եղել գյուղական բնակավայրերում արտարժույթի սահմանափակ կիրառման ենթադրությամբ:

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

2. ՀԱՐՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

2.1. Հարցման շրջանակներում ուսումնասիրված տնային տնտեսությունների ընտրության սկզբունքները

Տնային տնտեսությունների ընտրանքը հիմնականում իրականացվել է հետևյալ փուլերով: Նախ, որոշվել է հետազոտության օբյեկտների ընտրանքում ընդգրկվելիք ընտանիքների քանակը, որը հնարավորինս պետք է ապահովի հետազոտության ներկայացուցչականությունը, այնուհետև իրականացվել է ՀՀ մարզերի ընտրությունը, որից հետո տնային տնտեսությունները բաշխվել են ըստ ընտրված մարզերի: Հետագայում, հարցման իրականացման ընթացքում, կախված հարցվողների արձագանքման աստիճանից, ինչպես նաև լրացված հարցաթերթիկների որակից, իրականացվել են ընտրված տնային տնտեսությունների որոշակի ճշգրտումներ՝ նախապես կազմված պահուստային ցանկից: Ընդ որում, ճշգրտումները կատարվել են այնպես, որ պահպանվի ընտրանքի բաշխվածությունն ըստ համապատասխան բնակավայրերի և ներկայացուցչականությունը:

Ընտրանքի նախնական չափը որոշելու համար անհրաժեշտ է ունենալ գլխավոր համակցության օբյեկտների ընդհանուր քանակը և ուսումնասիրվող ցուցանիշի ստանդարտ շեղումը գլխավոր համակցությունում: Հարկ է նշել, որ ՀՀ-ում տնային տնտեսությունների ընդհանուր քանակը հայտնի է[1] (քանի որ նման հարցում իրականացվում է երկրորդ անգամ): Հարցման համար ընտրանքը ձևավորվել է այնպես, որ դրանում տնային տնտեսություններն ըստ բնակավայրերի բավարար ներկայացուցչություն ունենան (աղյուսակ 1): Այսպիսով, ընտրանքը ձևավորելիս կատարվել է ենթադրություն, որ գլխավոր համակցության համապատասխան ցուցանիշի (տեսակարար կշիռ) վարիացիայի գործակիցը կլինի 40%: Այս գործակիցը բավականաչափ մեծ է ընտրվել՝ հաշվի առնելով բնակչության հարստության խիստ անհավասարաչափ բաշխումը: Բնականաբար, վարիացիայի գործակցի մեծ արժեքը հնարավորություն պետք է տար ապահովելու ընտրանքում հարստության խմբերից յուրաքանչյուրի ներկայացուցչականությունը: Ընտրանքի մեծությունը հաշվարկվել է՝ կիրառելով մաթեմատիկական վիճակագրության մեջ հայտնի հետևյալ բանաձևը.

$$n = \frac{Nv^2t^2}{(N-1)\Delta_x^2 + v^2t^2}, \quad (1)$$

որտեղ՝ v - գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշի վարիացիայի գործակիցն է, %,
t - ընտրված t չափանիշի մեծությունը,
Δ_x - գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշի սխալի հարաբերական մեծությունն է (սխալի մեծությունը հարաբերած գլխավոր համակցության միջինին), %

Այսպիսով, կիրառելով վերոհիշյալ բանաձևը՝ որոշվել է ընտրանքի ընդհանուր նախնական չափն այնպես, որ ընտրանքի և գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշների միջև սխալը 95% հավանականությամբ չգերազանցի 5% սահմանը: Հարցման համար ընտրվել է տվյալ սահմանը, քանի որ հարստության խմբերի միջև հետազոտվող ցուցանիշները բավականին տարբեր կլինեն, որի պատճառով անհրաժեշտ է, որ ընտրանքի սխալը լինի հնարավորինս փոքր: Կիրառելով բանաձև (1)-ը՝ ընտրանքի անհրաժեշտ չափը ստացվել է 661 տնային տնտեսություն: Չնայած դրան՝ փաստացի հարցման է ենթարկվել շուրջ 900 տնային տնտեսություն, իսկ գլխավոր համակցությունը բնութագրող ընտրանքի հիմնական ցուցանիշների վարիացիայի գործակիցները կազմել են շուրջ 52%, որը նախորդ տարվա հարցման արդյունքերով 60% էր: Վարիացիայի ավելի փոքր գործակիցները հնարավորություն են տալիս ունենալու գնահատվող ցուցանիշների վստահության համեմատաբար փոքր միջակայքեր:

Ներկայացուցչականությունն ապահովող ընտրանքի չափը որոշելուց հետո իրականացվել է համապատասխան մարզերի ընտրությունը: Ընտրանքի ձևավորումը կատարվել է այնպես, որ հնարավորինս ապահովվեն գլխավոր համակցության (ՀՀ բնակչության) տեղաբաշխման համամասնությունները՝ միաժամանակ հաշվի առնելով նաև տնտեսական ակտիվության ցուցանիշներն ըստ մարզերի: Այս սկզբունքով ըստ բնակավայրերի ընտրանքը ձևավորելուց հետո, հարցվողների ընտրությունն իրականացվել է պատահական:

Հարցմանը մասնակցած 900 տնային տնտեսություններն ըստ հանրապետության ընտրված մարզերի ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

---

[1] *ՀՀ ԱՎԾ հետազոտությունների տվյալների հիման վրա տնային տնտեսությունների քանակը մոտավորապես գնահատված է 779.000:*

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումն ըստ ՀՀ մարզերի

Մարզեր	Հարցված տնային տնտ. քանակը	Տեսակարար կշիռ, %	Այդ թվում՝ գյուղական բնակավայրեր
Երևան	647	71.9	-
Շիրակ	46	3.8	15
Լոռի	46	4.7	10
Արմավիր	34	5.1	6
Կոտայք	55	5.1	6
Գեղարքունիք	42	2.8	8
Արարատ	25	6.1	7
Սյունիք	5	0.6	-
Ընդամենը	900	100	52

Մարզերում ընտրանքներն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի ձևավորելիս հաշվի է առնվել նախ յուրաքանչյուր մարզում քաղաքային և գյուղական բնակչության համամասնությունը և ապա այն հանգամանքը, որ գյուղական բնակավայրերում մեծ է ապրանքափոխանակությունը և արտարժույթի կիրառման շրջանակները սահմանափակ են: Հաշվի առնելով այս գործոնի ազդեցությունը՝ մարզերի քաղաքներում ընտրանքներն ավելի մեծ են վերցվել, քան գյուղերում՝ կազմելով համապատասխանաբար 79% և 21%:

Այսպիսով, չնայած ընդհանուր առմամբ բոլոր 7 մարզերում քաղաքային և գյուղական բնակչությունը մոտավորապես հավասար է, ըստ առանձին մարզերի տարբերությունները բավականին մեծ են: Հարցումներն իրականացնելիս փորձ է արվել հնարավորության սահմաններում պահպանել մարզերում բնակչության փաստացի տեղաբաշխման համամասնությունները:

2.2. Հարցման իրականացման մեթոդաբանությունը

Հարցման հիմնական նպատակը ՀՀ-ում արտարժույթի օգտագործման շրջանակների ուսումնասիրությունն է: Ընդ որում, շրջանառվող կանխիկ արտարժույթի (հիմնականում ԱՄՆ դոլար և եվրո) ծավալների գնահատման նպատակով օգտագործվել է բնակչության մոտ առկա կանխիկի արտարժույթ/դրամ համամասնությունը: Քանի որ շրջանառությունում գտնվող կանխիկ ՀՀ դրամի ծավալը հայտնի է, նշված համամասնության հիման վրա գնահատվել է կանխիկ արտարժույթը: Հետազոտությունն իրականացվել է հետևյալ քայլերով.

1. տնային տնտեսությունների բաշխում՝ ըստ հարստության տարբեր խմբերի,
2. կանխիկ արտարժույթի համամասնության գնահատում յուրաքանչյուր խմբի համար,
3. ընդհանուր կանխիկ արտարժույթի գնահատում:

Բնականաբար, տարբեր եկամուտներ (կարողություն) ունեցող խավերի դրամական միջոցների արտարժույթ/դրամ համամասնությունը տարբեր է, այդ իսկ պատճառով հարցման արդյունքներն ամփոփելու նպատակով տնային տնտեսությունները բաժանվել են չորս խմբի[2].

- Շատ աղքատներ, որոնց ամսական եկամուտը պակաս է նվազագույն պարենային զամբյուղից:
- Աղքատներ, որոնց ամսական եկամուտը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը, սակայն ավելի պակաս է, քան նվազագույն սպառողական զամբյուղը:
- Միջին խավ, որոնց ամսական եկամուտը գերազանցում է նվազագույն սպառողական զամբյուղը:
- Ապահովված խավ:

Չնայած հետազոտության արդյունքների վերլուծությունը կատարվել է ըստ նշված խմբերի, ամբողջ հանրապետության համար ընտրանքի ձևավորումը, ինչպես արդեն նշվել է, հիմնականում իրականացվել է համամասնական տեղաբաշխման (ըստ բնակչության թվաքանակի) սկզբունքով: Թիվ 2 աղյուսակում ներկայացված են հարցման արդյունքներով ստացված՝ տնային տնտեսությունների կշիռներն ըստ հարստության խմբերի և յուրաքանչյուր խմբի սպառման կշիռն ընդհանուր սպառողական ծախսերում:

---

[2] Նման բաժանման համար հիմք են ընդունվել Համաշխարհային բանկի տեխնիկական և ֆինանսական օժանդակությամբ ՀՀ ԱՎԾ-ի 2001թ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների արդյունքները և «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի պատրաստած «Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում» վերլուծությունը: Նշված հետազոտություններում գնահատվել է Ջինիի գործակիցը և կառուցվել է Լորենցի կորը Հայաստանի համար, որոնք էլ հիմք են ծառայել տնային տնտեսություններն ըստ հարստության խմբերի բաժանելու համար:

Աղյուսակ 2. Սպառողական ծախսերի բաշխումը ՀՀ-ում

Խմբեր	Բաժինն ընդհանուր սպառման մեջ[1], %	Տնային տնտ. տես. կշիռը՝ ըստ հարցման արդյունքների (2004), %
Շատ աղքատ	2.5	12.6
Աղքատ	16.0	35.1
Միջին	36.5	48.2
Ապահովված	45.0	4.1

[1] ՀՀ ԿԲ գնահատում՝ համաշխարհային բանկի օժանդակությամբ ՀՀ ԱԿԾ-ի 2001թ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների արդյունքների և «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի պատրաստած «Տնտեսական աճն արդարացի բաշխման պայմաններում» վերլուծության հիման վրա:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալը, հարցման արդյունքների ամփոփման նպատակով հանրապետությունում սպառողական ծախսերի բաշխումն ըստ հարստության խմբերի (աղյուսակ 2) դիտարկվել է որպես կանխիկ փողի բաշխվածության մոտարկում: Այնուհետև, յուրաքանչյուր խմբի կողմից տնօրինվող կանխիկ փողի արտարժույթ/դրամ հարաբերակցությունը գնահատելուց հետո, ամբողջ բնակչության միջին արտարժույթ/դրամ համամասնությունը որոշելու համար այդ հարաբերակցությունները կշռվել են նշված բաշխվածության կշիռներով:

2.3. Հետազոտության հարցաթերթիկի կառուցվածքը և լրացման առանձնահատկությունները

Հետազոտությունն իրականացվել է նախապես մշակված հարցաթերթիկի օգնությամբ: Հարցադրումը կատարվել է ոչ թե առանձին տնային տնտեսությունների կանխիկ արտարժույթի չափը պարզելու, այլ կանխիկ արտարժույթ/դրամ համամասնությունը պարզելու նպատակով: Տնային տնտեսությունների հարստության խումբը որոշելու համար հարցաթերթիկում ընդգրկվել են նաև հարցեր տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ, ինչպես նաև հարցեր փոխարժեքի վերաբերյալ տնային տնտեսությունների սպասումները գնահատելու, տարբեր արժույթների նկատմամբ նրանց հակվածության աստիճանը պարզելու, բանկային համակարգի նկատմամբ վստահության աստիճանը գնահատելու, հայ ընտանիքներում արտերկրից ստացվող եկամուտների կշիռը որոշելու և այլն նպատակներով:

3. ՀԱՐՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցերին հրաժարվել են պատասխանել բոլոր հարցվածների շուրջ 29%-ը: Հրաժարվողների տեսակարար կշիռը ըստ բնակավայրերի (non-response rate) բավականին տարբեր է: Այսպես, Երևանում հրաժարվողների կշիռը համեմատաբար բարձր է՝ շուրջ 34% (2003թ. կազմել է 39%), այդ թվում՝ Կենտրոն համայնքում ամենաբարձրն է՝ 46% (2003թ՝ 44%):

Այլ է պատկերը ՀՀ մարզերում, որտեղ հարցվողների շուրջ 85%-ը (2003թ.՝ 93%) պատրաստակամ է եղել պատասխանելու հարցազրուցավարների հարցերին, և միայն բնակչության 15%-ն է մերժել՝ հիմնականում պայմանավորված վերջիններիս զբաղվածությամբ:

Բացի վերը նշված խնդիրներից, ինչպես և նախորդ տարվա հարցման ընթացքում, ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնցից հիմնականներն են.

- Բնակչության անապահով խավը («աղքատ» և «շատ աղքատ» ընտանիքներ) սիրով և ակեղծ էր պատասխանում իր սոցիալական վիճակին վերաբերող հարցերին: Պատասխանները իրական պատկերացում են տալիս տվյալ ընտանիքի հարստության խմբի մասին: Այնուհանդերձ, հարցազրույցների ընթացքում պարզվեց, որ այդպիսի ընտանիքներում գոյություն ունի այնպիսի մտայնություն, որ արտարժույթ/դրամ համամասնության բարձր մակարդակը հակասում է նրանց աղքատության պատկերին, որը ներկայացվում էր նախորդ հարցերի պատասխաններում: Անապահով ընտանիքների կողմից հիմնական հարցերին տրված պատասխանները իրարից քիչ էին տարբերվում: Խաչաձև հարցերի միջոցով բացահայտվում էր պատասխանների անկեղծությունը: Հաճախ հարցվողները նշում էին, որ հիմնականում առևտուրը կատարում են արտարժույթով, սակայն մյուս հարցերին պատասխանելիս հերքում էին արտարժույթի առկայությունը:

- Ապահովված ընտանիքների արձագանքման աստիճանը (response rate) բավականին ցածր էր: Բնականաբար վերջիններիս արձագանքման աստիճանը ճշտորեն դժվար է որոշել, քանի որ մերժող ընտանիքի հարստության խումբը հստակ որոշել հնարավոր չէ: Այնուհանդերձ, մեր գնահատումներով՝ կազմել է շուրջ 40-50%: Սակայն այն ապահովված ընտանիքները, որոնք համաձայնվում էին պատասխանել, որպես կանոն բավականին անկեղծ պատասխաններ էին տալիս:
- Միջին խավի ընտանիքները հիմնականում մոտավոր էին նշում իրենց միջոցների արտարժույթ/դրամ համամասնությունը: Միջին խավի պատասխանները հիմնականում բավականին անկեղծ էին:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ինչպես 2004թ., այնպես էլ 2003թ. հարցման արդյունքներով բնակչության հարստության տարբեր խմբերի համար ստացված տվյալները.

Աղյուսակ 3. Կանխիկ փողի ծավալում արտարժույթի բաժինը

Հարստության խումբը	Արտարժույթի միջին բաժինը յուրաքանչյուր խմբում (CSI [3])	
	2003թ.	2004 թ.
Ապահովված խավ	95.1	98.2
Միջին խավ	79.7	82.4
Աղքատ	42.5	58.4
Շատ աղքատ	11.1	15.3
Ընդամենը[4]	79.0	84.0

Ըստ հարցման արդյունքների՝ արտարժույթի ամենաբարձր գործակիցն ունի «ապահովված խավը»: «Ապահովված խավը» հիմնականում գործարարներն են, որոնք դրամն օգտագործում են ոչ միայն առօրյա ծախսերի, այլ նաև սեփական բիզնեսի ծախսերը հոգալու համար: Գործարարների մի մասը իրենց գնումները հիմնականում կատարում է դրամով: Չնայած այս խմբում դրամի ծավալը բավականին բարձր է, քան այլ խմբերում, միևնույն է վերջիններիս փողային ակտիվները մեծամասամբ պահվում են արտարժույթով:

«Միջին խավի» կանխիկ փողի ծավալում ևս համեմատաբար մեծ է արտարժույթի տեսակարար կշիռը: Արտարժույթի տեսակարար կշիռն ամենացածրն է «շատ աղքատ» խմբում: Փաստորեն, ըստ հարցման արդյունքների, կանխիկ արտարժույթ/դրամ համամասնությունն ուղիղ համեմատական է տնային տնտեսության հարստության մակարդակին՝ որքան շատ միջոցներ ունի տնային տնտեսությունը, այնքան կանխիկ ԱՄՆ դոլարի նախընտրելիությունը բարձր է: Դա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ «աղքատ» և «շատ աղքատ» խավերի եկամուտները բավարարում են միայն ընթացիկ ծախսերը հոգալու համար: Իսկ «ապահովված» և «միջին խավի» դրամական միջոցներում արտարժույթի մեծ տեսակարար կշիռը բացատրվում է նրանով, որ եկամուտների էական մասը ստացվում է արտարժույթով, ինչպես նաև խնայողությունները նույնպես կուտակվում են արտարժույթով:

Այսպիսով, ըստ արդյունքների՝ կանխիկ արժույթի փոխարինման գործակիցը (CSI) Հայաստանում կազմում է շուրջ 84.0%: Եթե նշված գործակիցը փորձենք ներկայացնել վստահության միջակայքով[5], ապա այն կազմում է 82.3%-ից 85.7%: Այսինքն, ըստ համապատասխան ընտրանքի վրա հիմնված հարցման արդյունքների, ՀՀ-ում կանխիկ արտարժույթ/դրամ համամասնությունը 95% հավանականությամբ գտնվում է վերը նշված միջակայքում: Վստահության միջակայքերը ըստ հարստության խմբերի ներկայացված են թիվ 4 աղյուսակում:

---

[3] *Կանխիկի փոխարինման գործակից (Currency Substitution Index):*

[4] *Հաշվարկված է աղյուսակ 2-ում բերված կշիռների հիման վրա:*

[5] *Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.* $t = \frac{(\bar{x} - a)\sqrt{n}}{\sigma}$, *որտեղ՝ t-ընտրված t - չափանիշի մեծությունը, x - հարցման արդյունքը, a - միջակայքի ստորին և վերին սահմանների հեռավորությունը x-ից, n՝ընտրանքի մեծությունը, σ - հարցման արդյունքների ստանդարտ շեղումը: Բանաձևի միջոցով գտնվում է a-ն:*

Աղյուսակ 4. Հարստության խմբերի վստահության միջակայքերը (%)

Խումբը	2003			2004		
	Ստորին սահման	Միջին	Վերին սահման	Ստորին սահման	Միջին	Վերին սահման
Ապահովված խավ	92.9	95.1	97.4	97.4	98.2	99.0
Միջին խավ	77.8	79.7	81.5	80.6	82.4	84.1
Աղքատ	38.3	42.5	46.6	54.8	58.4	62.1
Շատ աղքատ	6.1	11.1	16.1	9.7	15.3	21.0
Ընդամենը	76.6	79.0	81.5	82.3	84.0	85.7

Մինչև կանխիկ արտարժույթի վերջնական գնահատական հաշվարկելը անհրաժեշտ է հաշվի առնել նաև արտարժույթի փոխանակման կետերում և բանկերի դրամարկղերում առկա կանխիկ արտարժույթի ծավալները: Բանկերի դրամարկղերում կանխիկ արտարժույթը հայտնի է: Փոխանակման կետերում արտարժույթի ծավալները որոշելու նպատակով փոքր հարցում է իրականացվել ՀՀ արժութային դիլերների միության օգնությամբ: Ուսումնասիրված փոխանակման կետերը նշել են տվյալ պահին իրենց ունեցած կանխիկ փողի ծավալներն ըստ առանձին արժույթների: Գործող 321 փոխանակման կետերից հարցմանը մասնակցել է 25-ը (7.8%), որոնց մոտ, ըստ ՀՀ արժութային դիլերների միության տվյալների, առկա է ՀՀ տարածքում գործող բոլոր փոխանակման կետերի ընդհանուր դրամական միջոցների 10%-ը: Հարցման արդյունքների համաձայն՝ փոխանակման կետերում առկա գումարներից 1.5 մլն դրամը կազմում են ԱՄՆ դոլարով միջոցները, 286 մլն-ը՝ ՀՀ դրամով և 86 հազարը՝ եվրոյով միջոցները: Հարցման արդյունքների համաձայն՝ արտարժույթի փոխանակման կետերում դրամ/դոլար համամասնությունը կազմում է 72.3% (նախորդ տարի՝ 61.3%):

Հարցման ընթացքում, այսինքն՝ նոյեմբերի 6-ից դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում, շրջանառությունում գտնվող կանխիկ ՀՀ դրամի միջին ծավալը կազմել է շուրջ 88 մլրդ դրամ: Հիմք ընդունելով ՀՀ դրամի նշված ծավալը, ինչպես նաև հաշվի առնելով արտարժույթի փոխանակման կետերում գտնվող կանխիկ ՀՀ դրամի մոտավոր քանակը, կարող ենք որոշել կանխիկ արտարժույթը շրջանառությունում, որը ստացվում է շուրջ 459 մլրդ դրամ կամ 913.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտարժույթ: Դրա 95.4%-ը կազմում է ԱՄՆ դոլարը (871.1 մլն), 3.7%-ը՝ եվրոն (25.9 մլն) և 0.9%-ը (250.5 մլն)՝ ռուսական ռուբլին: Ընդ որում՝ նշված ցուցանիշի վստահության միջակայքը կազմում է 807.7 մլն ԱՄՆ դոլարից մինչև 1044.8 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտարժույթ: Այսինքն, ըստ համապատասխան ընտրանքի վրա հիմնված հարցման արդյունքների՝ ՀՀ-ում կանխիկ արտարժույթի ծավալները 95% հավանականությամբ գտնվում են վերը նշված միջակայքում: Հարկ է նշել, որ ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների դրամարկղերում առկա արտարժույթի ծավալները կազմում են շուրջ 32.5 մլն ԱՄՆ դոլար (տվյալները բերված են 2004թ. սեպտեմբերի վերջի դրությամբ). 28.5 մլն՝ դոլարով և 4 մլն՝ ԱՄՆ դոլարին համարժեք եվրոյով: Եթե ավելացնենք նաև փոխանակման կետերի կանխիկ արտարժույթը, ՀՀ-ում շրջանառվող կանխիկ արտարժույթի ծավալը կկազմի շուրջ 946 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտարժույթ:

4. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎԱԾ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

4.1. Բնակչության ֆինանսական միջոցների կառուցվածքը

Բնակչության զգալի մասն իր խնայողությունների ավելի մեծ մասը գերադասում է պահել տարբեր արժույթներով՝ շուրջ 55.9%-ը՝ ԱՄՆ դոլարով, իսկ 45.1%-ը՝ այլ արժույթներով, որից հիմնական մասը՝ 19.9%՝ եվրոյով: Այսպիսով, ՀՀ-ում, բացի ԱՄՆ դոլարից, շրջանառվում է նաև որոշ քանակությամբ եվրո:

Աղյուսակ 5. Բնակչության նախընտրած կանխիկի կառուցվածքը

Խումբը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	Այլ պատասխան
Ապահովված խավ	0%	76%	14%	3%	8%
Միջին խավ	7%	67%	21%	1%	5%
Աղքատ	21%	50%	22%	0%	6%
Շատ աղքատ	49%	24%	12%	2%	13%
Ընդամենը	17%	56%	20%	1%	6%

Շատ ընտանիքներ իրենց դրամական միջոցները պահում են կանխիկ փողի տեսքով՝ չվստահելով բանկային համակարգին, ինչը հաստատում են նաև հարցման արդյունքները (աղյուսակ 6):

Deleted: Գ
Գ

Աղյուսակ 6. Բնակչության դրամական միջոցների կանխիկ/ընդհանուր փող համամասնությունը

Խումբը	Կանխիկ/ընդհանուր փող
Ապահովված խավ	76.7 %
Միջին խավ	94.2 %
Աղքատ	98.2 %
Շատ աղքատ	99.1 %
Ընդամենը	87.1 %

4.2. Արտերկրից ստացվող գումարները

Բնակչության եկամուտների մեջ զգալի կշիռ են կազմում արտերկրից ստացվող գումարները (26%), որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոխվել (25.7%):

Աղյուսակ 7. Սեզոնային և մշտական բնակություն ունեցող բարեկամներից ստացվող եկամուտների տեսակարար կշիռը տնային տնտեսության տարեկան բյուջեում (%-ով)

Խումբը	Գործոնային եկամուտ/ ընդհանուր եկամուտ	Տրանսֆերտներ / ընդհանուր եկամուտ	Արտերկրից ստացվող եկամուտներ/ ընդհանուր եկամուտ
Ապահովված խավ	11	14	25
Միջին խավ	13	15	28
Աղքատ	9	20	29
Շատ աղքատ	2	6	8
Ընդամենը	11.1	14.9	26

Նշենք նաև, որ հարցվողներից 240-ը (ընդհանուր հարցվողների 26.3%-ը) դրամական միջոցներ են ստանում մշտական բնակություն ունեցող բարեկամներից, իսկ 113-ը (ընդհանուր հարցվողների 12.6%-ը)՝ սեզոնային աշխատանքի դիմաց վարձատրությունից: Նրանց 53.4%-ը այդ գումարները ստանում է բանկերի միջոցով, 13.8%-ը՝ կազմակերպությունների, 32.8%-ը՝ այլ միջոցներով: Այսպիսով, արտերկրից եկամուտների 42.7%-ը ստացվում է գործոնային եկամուտների տեսքով, իսկ 57.3%-ը՝ տրանսֆերտների: Այս համամասնությունները մոտավորապես համընկնում են ԱՎԾ-ի գնահատումներին:

4.3. Ծախսերի արժութային կառուցվածքը

Ըստ հարցման արդյունքների՝ բացի սննդի և կենցաղային ծառայությունների դիմաց վճարումներից, կանխիկ վճարումները տնային տնտեսությունների 39.2%-ը ավելի շատ կատարում է դոլարով, քան դրամով, 37.2%-ը՝ ավելի շատ դրամով, քան դոլարով և 23.6%-ը՝ միայն դրամով (աղյուսակ 8): Դոլարով վճարումների հիմնական մասը կատարվում է ապահովված և միջին խավի կողմից, որը պայմանավորված է նրանց կանխիկում դոլարի մեծ տեսակարար կշռով, իսկ դրամով վճարումների հիմնական մասը՝ միջին և աղքատ խավի կողմից:

Աղյուսակ 8. Բնակչության ծախսերի արժութային կառուցվածքը (բացառությամբ սննդի և կենցաղային ծառայությունների)

Խումբը	Հիմնականում դրամով	Հիմնականում դոլարով	Միայն դրամով
Ապահովված խավ	**11%**	89%	0%
Միջին խավ	37%	54%	9%
Աղքատ	48%	25%	28%
Շատ աղքատ	18%	5%	77%
Ընդամենը	37%	39%	24%

4.4. Կանխիկ դոլարայնացման դրդապատճառները

Հարցման մասնակիցների հիմնական մասը կանխիկ դոլար պահելու հիմնական պատճառ է համարել դոլարային եկամուտների մեծ կշիռը ընդհանուր եկամուտներում, ինչպես նաև դոլարի կամ եվրոյի կայունության հանգամանքը:

Deleted: :

Ի տարբերություն նախորդ հարցման, բնակչության մի մասն այն կարծիքին է, որ եկամուտների ավելացման դեպքում կարող է աճել նաև իրենց ֆինանսական ակտիվներում եվրոյի բաժինը (մոտ 20%-ը):

Հետազոտության արդյունքներով՝ մեկ տարվա ընթացքում բնակչության 71%-ի դրամական միջոցների կանխիկ դոլար/դրամ համամասնությունը գրեթե չի փոփոխվել, իսկ դոլարի և եվրոյի բաժինը աճել է մոտավորապես նույն չափով՝ համապատասխանաբար 15% և 14 %-ով:

Աղյուսակ 9. Վերջին մեկ տարվա ընթացքում բնակչության դրամական միջոցների կանխիկ դոլար/դրամ համամասնության փոփոխությունը

Խումբը	Դոլարի բաժինը աճել է	Դրամի բաժինը աճել է	Մնացել է անփոփոխ
Ապահովված խավ	24%	5%	70%
Միջին խավ	21%	15%	64%
Աղքատ	10%	15%	75%
Շատ աղքատ	3%	9%	88%
Ընդամենը	15%	14%	71%

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով 2004 թ. հարցման հիմնական արդյունքները և ավելացնելով նաև 2003 թ. հարցման արդյունքները՝ ստանում ենք կանխիկ արտարժույթի հետևյալ գնահատումները.

Աղյուսակ 10. Կանխիկ արտարժույթի գնահատումները

Ցուցանիշ	2004թ.	2003թ.
Շրջանառութ. կանխիկ արտարժույթ (ՇԿԱ)	913.5 մլն դոլարին համարժեք արտարժ.	571.9 մլն դոլարին համարժեք արտարժ.
ՇԿԱ մեկ շնչի հաշվով	304 դոլար	190 դոլար
Շրջանառութ. կանխիկ դոլար (ՇԿԴ)	871 մլն դոլար	560 մլն դոլար
ՇԿԴ մեկ շնչի հաշվով	290 դոլար	186 դոլար

Հետագայում ակնկալվում է գնահատել Հայաստանի Հանրապետություն կանխիկ արտարժույթի զուտ ներհոսքի ծավալները: Հիմնվելով դրանց ու վերջին հարցման արդյունքներով կանխիկ արտարժույթի առկա ծավալների վերաբերյալ ստացված գնահատումների վրա՝ Կենտրոնական բանկի կողմից հաջորդ տարիների ընթացքում պարբերաբար կգնահատվեն ՀՀ-ում առկա կանխիկ արտարժույթի ծավալները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Alesina A., Barro R. J. Dollarization, *Harvard University*, 2000.
2. Beddies C. H., Havrylyshyn O. Dollarization in the Former Soviet Union: From Hysteria to Hysteresis, Washington: International Monetary Fund, 2003.
3. Calvo G. A., Vegh C. A. Currency Substitution in Developing Countries - An Introduction, *IMF Working Paper No. 92/40*, Washington: International Monetary Fund, 1992.
4. Catao L., Terrones M. Determinants of Dollarization: The Banking Side, *IMF Working Paper No. 00/146*, Washington: International Monetary Fund, 2000.

5. Doyle B. M. Here, Dollars, Dollars..., Estimating Currency Demand and Worldwide Currency Substitution, International Finance Discussion Paper No. 657, Board of Governors of the Federal Reserve System, Washington, DC, 2000.
6. Feige E. The Dynamics of Currency Substitution, Asset Substitution and De facto Dollarization and Euroization in Transition Countries, Presented at the 8th Dubrovnik Economic Conference “Monetary Policy and Currency Substitution in the Emerging Markets” organized by the Croatian National Bank.
7. Krueger R., Ha J. Measurement of Co-circulation of Currencies, *IMF Working Paper No. 95/34*, Washington: International Monetary Fund, 1995.
8. Ize A., Yeyati E. L. Dollarization of Financial Intermediation: Causes and Policy Implications, *IMF Working Paper No. 98/28*, Washington: International Monetary Fund, 1998.
9. Mourmouras A., Russel S. H. Smuggling, Currency Substitution and Unofficial Dollarization: A Crime-Theoretic Approach, *IMF Working Paper No. 00/176*, Washington: International Monetary Fund, 2000.
10. Oomes Nienke, Network Externalities and Dollarization Hysteresis: The Case of Russia, IMF Working Paper, Washington, International Monetary Fund.
11. Porter E., Judson R. The Location of U.S. Currency: How Much is Abroad? (Federal Reserve Bulletin, 1996).
12. Sahay R., Vegh C. A. Dollarization in Transition Economies: Evidence and Policy Implications, *IMF Working Paper No. 95/96*, Washington: International Monetary Fund, 1995.
13. Sturzenegger, F., Yeyati, E. L. *Dollarization: Debates and Policy Alternatives*, The MIT Press, Cambridge, Massachusetts, 2003.
14. Åëèñååâà È. È., Þçáàøåâ Ì. Ì. Îáùàÿ òåîðèÿ ñòàòèñòèêè. Ì., Ôèíàíñû è ñòàòèñòèêà, 2004.

ՀՀ ԳՆԱՃԻ ՄՈԴԵԼ *

Ա. Ստեփանյան, Ա. Մկրտչյան
Դրամավարկային քաղաքականության վարչություն

*Աշխատանքի նպատակն է ՀՀ տնտեսության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կառուցել սպառողական գների վարքագիծը ներկայացնող մոդել, որը կիրառելի կլինի դրամավարկային քաղաքականության ծրագրի կազմման գործընթացում: Սպառողական գների վարքագիծն առավել մանրամասն դիտարկելու նպատակով կիրառվել է տարանջատման սկզբունքը, որի արդյունքում սպառողական գների զամբյուղում ընդգրկված ապրանքները բաժանվել են առանձին ապրանքախմբերի՝ ելնելով այդ ապրանքախմբերի վարքագծի, ինչպես նաև դրանց վրա արտածին գործոնների ազդեցության առանձնահատկություններից**:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անցումային տնտեսություն ունեցող երկրների համար կարևորվում է մակրոտնտեսական կայունության ձեռքբերումը: Մակրոտնտեսական կայունության կարևոր նախապայման է գների կայունությունը:

Այնպիսի երկրներում, ինչպիսին Հայաստանն է, անկախության ձեռք բերումից հետո տնտեսությունում նկատվեց եկամուտների անկում, գների կտրուկ աճ և մնացած մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացում: Նման երկրների կենտրոնական բանկերի համար հրատապ խնդիր է դառնում գնաճի արդյունավետ կառավարումը: Գնաճի վերաբերյալ կան շատ վերլուծություններ, որոնք կատարվել են անցումային տնտեսությունների օրինակով՝ ինչպես տարբեր երկրների տվյալների խմբավորված վերլուծությամբ, այնպես էլ առանձին երկրների տնտեսության վերլուծությամբ: Կատարված վերլուծությունների արդյունքներից ելնելով՝ ձևավորվել են տարբեր տեսակետներ.

1. գնաճի կարգավորման առումով կարևոր են հարկաբյուջետային կարգավորումը, փոխարժեքի կառավարումը և կառուցվածքային բարեփոխումները,
2. գնաճն ունի մոնետար հիմք,
3. գնաճը գնագոյացման գործընթացի արդյունք է:

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*
*** Հեղինակները շնորհակալություն են հայտնում ՀՀ ԿԲ խորհրդի անդամ Վ. Գաբրիելյանին՝ արժեքավոր դիտողությունների համար: Մոդելի արդյունքների հիման վրա կատարված դատողություններում ու կանխատեսումներում արտահայտվել են հեղինակների տեսակետները:*

Ըստ գնաճի վերլուծության առաջարկվող մոտեցման՝ սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների գները տարանջատվում են առանձին ապրանքախմբերի և առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերվում յուրաքանչյուր ապրանքախմբին: Կախված տվյալ ապրանքախմբի յուրահատկություններից՝ այդ ապրանքախմբի գները բացատրելիս դիտարկվել են պահանջարկը, առաջարկը, գնագոյացումը, հարաբերական գները բնութագրող գործոններ կամ դրանց որոշակի համախումբ:

Աշխատանքում նախ ներկայացված են մոդելի կառուցման տրամաբանությունը և գնահատված հավասարումները, ապա՝ մոդելում օգտագործված տվյալները, այնուհետև՝ մոդելի արդյունքների հիման վրա կատարված դատողությունները և կանխատեսումները: Հավելվածներում ներկայացված են մոդելի կառուցման և բարելավման համար կատարված էկոնոմետրիկ թեստերի արդյունքները:

1. ՄՈԴԵԼԸ

1.1. Մոդելի կառուցման տրամաբանությունը և գնահատված հավասարումները

Սույն վերլուծության մեջ գների վարքագիծը բացատրվում է.

1. ներքին պահանջարկի,
2. ներքին առաջարկի,
3. ձեռնարկություններում գնագոյացման գործընթացի ազդեցության,
4. ներմուծման գները ներքին մրցակցող գների համար որպես սահմանափակում դիտարկելու միջոցով:

Մոդելի կառուցման համար օգտագործվել է տարանջատման սկզբունքը, ըստ որի՝ սպառողական զամբյուղի ապրանքները բաժանվել են առանձին ապրանքախմբերի: Բաժանման հիմքում այն տրամաբանությունն է, որ վերը նշված բացատրող փոփոխականները առանձնահատուկ ազդեցություն են ունենում ապրանքների գների ձևավորման վրա՝ պայմանավորված ապրանքների հետևյալ հատկանիշներով.


- արտահանելի և ոչ արտահանելի,
- ներմուծվող և ներքին արտադրության,
- մրցակցային և ոչ մրցակցային,
- խիստ սեզոնային,
- ապրանքներ, որոնց գները կախված են միջազգային բորսաներում ձևավորվող գներից,
- պետության կողմից կարգավորվող գին ունեցող:

Համաձայն այս դատողությունների՝ սպառողական զամբյուղը խմբավորվել է ըստ հետևյալ ապրանքների.

1. ներքին արտադրության ապրանքներ, որոնք մրցակցում են ներմուծված ապրանքների հետ,
2. ներքին արտադրության ապրանքներ, որոնք չեն մրցակցում ներմուծված ապրանքների հետ,
3. ներմուծված ապրանքներ,
4. ծառայություններ,
5. գյուղատնտեսական արտադրության ապրանքներ,
6. բենզին,
7. հացամթերք,
8. պետության կողմից կարգավորվող ծառայություններ:


1.2. Պատմական ակնարկ ՀՀ գնաճի վերաբերյալ

ՀՀ անկախության ձեռք բերումից հետո տնտեսական անկումը, գների ազատականացումը և ազգային արժույթի ներդրումը հանգեցրին գերգնաճի:




Կարելի է տարանջատել երկու ժամանակահատված՝ 1993-95 թթ., երբ գնաճը անկառավարելի էր և 1995թ-ից հետո, երբ գնաճն արդեն որոշ չափով կառավարելի էր, և ՀՀ ԿԲ հակագնաճային քաղաքականությունը որոշակի ազդեցություն էր ունեցել:

Քանի որ մոդելի կառուցման հիմքում դրվել է տարանջատման սկզբունքը, ապա նպատակահարմար է ներկայացնել նաև առանձին ապրանքախմբերի գների վարքագիծը:



Ինչպես երևում է գրաֆիկից, ներքին մրցակցող, ներքին չմրցակցող և ներմուծված ապրանքների գները 1997 թվականից կտրուկ փոփոխությունների չեն ենթարկվել, և գնաճը ձևավորվել է գյուղմթերքների և ծառայությունների գների հաշվին: Այստեղից հետևում է, որ Հայաստանում գնաճին նպաստողը ոչ արտահանելի ոլորտն է:

Ուշագրավ է նաև Հայաստանում բենզինի գնի վարքագիծը և կապը բենզինի միջազգային գնի հետ:



Գրաֆիկից երևում է, որ Հայաստանում բենզինի գինը զգայուն արձագանքելով միջազգային գնի աճին՝ կոշտություն է դրսևորում բենզինի միջազգային գնի նվազման դեպքում:

1.3. Ներքին պահանջարկի գործոններ

Որպես ներքին պահանջարկի գործոններ են դիտարկվել փողի անվանական առաջարկը, բյուջեի պակասուրդը և մասնավոր տրանսֆերտները:

Փողի անվանական առաջարկը հավասարումներում դիտարկվել է երկու տեսանկյունից: Փողի առաջարկը մեկ լագով օգտագործվել է որպես համախառն պահանջարկի կարճաժամկետ տատանումները բնութագրող փոփոխական և չորրորդ լագով՝ որպես երկարաժամկետ հատվածում ներքին պահանջարկը բնութագրող ցուցանիշ:

Պահանջարկի գործոն է նաև բյուջեի պակասուրդը: Սակայն պակասուրդի ֆինանսավորումը հիմնականում առաջացրել է դրամի առաջարկի աճ և մուլտիկոլինեարությունից խուսափելու համար օգտագործել ենք միայն փողի առաջարկը: Այսպիսով, փողի առաջարկը ներառում է և՛ դրամավարկային, և՛ հարկաբյուջետային քաղաքականության զարգացումները:

Համախառն պահանջարկը բնութագրող մյուս գործոնը մասնավոր տրանսֆերտներն են, որոնք բնակչության համար ուղղակի եկամուտ են: Մասնավոր տրանսֆերտները չեն ազդում դրամային զանգվածի վրա, քանի որ, երկրում դոլարայնացման բարձր մակարդակով պայմանավորված, բնակչությունը կարողանում է կատարել դոլարային ծախսեր: Այդ պատճառով այս ցուցանիշը ներառվել է հավասարումներում: Մասնավոր տրանսֆերտները վերցվել են դրամային արտահայտությամբ՝ անուղղակիորեն ներառելով փոխարժեքի տատանումները գների վարքագծի բացատրություններում: Մասնավորապես, փոխարժեքի արժեքավորման պայմաններում, մասնավոր տրանսֆերտները դրամային արտահայտությամբ նվազում են՝ զսպող ազդեցություն ունենալով գների աճի վրա:

Որպես փողի պահանջարկի տատանումները բնութագրող ցուցանիշ՝ հավասարումներում օգտագործվել է իրական ՀՆԱ-ն: Այս մոտեցումը փոխառվել է Մոշին Խանի «Կայունացնող ծրագրեր զարգացող երկրների համար» աշխատությունից, որտեղ գները դիտարկվում են դրական կախվածության մեջ փողի ավելցուկ առաջարկից:

$$\Delta \log p_t = \gamma_1 \left[\log m_{t-1} - \log m_t^d \right] - \gamma_2 \left[\log p_{t-1} - \log(\varepsilon_{t-1} * p_{f_{t-1}}) - \beta_0 \right] + \gamma_3 \Delta \log(\varepsilon_t * p_{f_t}) + \lambda_1$$

$$\log m_t^d = \beta_1 + \gamma_4 \log y_t - \gamma_5 \prod_t$$

$$\Delta \log p_t = (\gamma_2 \beta_0 - \gamma_1 \beta_1) + \gamma_1 \left[\log m_{t-1} - \gamma_4 \log y_t + \gamma_5 \prod_t\right] - \gamma_2 \left[\log p_{t-1} - \log(\varepsilon_{t-1} * p_{f_{t-1}}) - \beta_0\right]$$
$$+ \gamma_3 \Delta \log(\varepsilon_t * p_{f_t}) + \lambda_1$$

որտեղ՝

p-ն ներքին գների մակարդակն է,
p_f-ն՝արտաքին գների մակարդակը,
ε-ն՝ փոխարժեքը,
m-ը՝ փողի առաջարկը,
m^d –ն՝ փողի պահանջարկը,
y-ը՝ իրական ՀՆԱ-ն:

1.4. Ներքին առաջարկի գործոններ

Քանի որ մոդելում համախառն պահանջարկը դիտարկվել է ըստ դրա վրա ազդող առանձին գործոնների, ապա ՀՆԱ-ն հավասարումներում ներառվել է որպես առաջարկի գործոն, այն առումով, որ ապրանքների առաջարկի աճը տրված պահանջարկի պայմաններում պետք է հանգեցնի գների նվազման: Այս մոտեցման հիմքում ընկած են հետևյալ երկու նախապայմանները: Նախ՝ ՀՀ-ում ապրանքների առաջարկը խիստ սեզոնային է, մասնավորապես՝ երրորդ եռամսյակում աճում է ինչպես ներքին արտադրության ապրանքների առաջարկը, այնպես էլ դրանց տեսակարար կշիռը սպառողական զամբյուղում (հակառակ երևույթն է նկատվում առաջին եռամսյակներում), որի հետևանքով երրորդ եռամսյակներում մշտապես արձանագրվում է գնանկում: Երկրորդ՝ տարիների ընթացքում տեղի է ունենում արտադրողականության աճ, որը նույնպես նպաստում է ապրանքների առաջարկի աճին (պոտենցիալ ՀՆԱ-ի ընդլայնում):

ՀՆԱ-ն հավասարումներում դիտվել է որպես առանձին ճյուղերի արտադրության ծավալների մոտարկում: Միայն գյուղատնտեսության համար է օգտագործվել գյուղմթերքների արտադրության իրական ծավալը, քանի որ նախ՝ այս ցուցանիշի վերաբերյալ առկա է բավարար վիճակագրություն և երկրորդ՝ գյուղմթերքների գների սեզոնայնությունը առավել խիստ է արտահայտված:

1.5. Ձեռնարկություններում գնագոյացման գործընթացը բնութագրող գործոններ

Ընդհանրապես տեսությունը առանձնացնում է ձեռնարկություններում գնագոյացման գործընթացը բնութագրող հետևյալ հիմնական գործոնները՝ հումքի գներ, էլեկտրաէներգիայի գին, հիմնական միջոցների վարձավճար և աշխատավարձ:

Հումքի գների վերաբերյալ վիճակագրական տվյալներն այժմ հավաքագրվում և ուսումնասիրվում են և հետագայում, հարկ եղած դեպքում, այդ տեղեկատվությունը կներառվի հավասարումներում:

Քանի որ էլեկտրաէներգիայի գինը վերջին տարիներին փոփոխության չի ենթարկվել, ուստի այդ ցուցանիշը հավասարումներում չի օգտագործվել:

Հիմնական միջոցների վարձավճարների վերաբերյալ վիճակագրական տվյալներ չկան, այդ պատճառով այս գործոնի ազդեցությունը դիտարկված չէ:

Գնագոյացման տարրերից մոդելում ընդգրկվել է աշխատավարձը: Մեր կողմից տարանջատած ապրանքախմբերից առանձնացրել ենք այնպիսիք, որոնք, ըստ մեզ, համարվում են առաջատար և դրանց հավասարումներում աշխատավարձը ընդգրկել ենք ընթացիկ լագով: Մյուս խմբերի համար, որտեղ աշխատավարձերը արձագանքում են առաջատար ճյուղերում դրսևորված փոփոխություններին, աշխատավարձերը ընդգրկել ենք երկրորդ լագով:

Ինչ վերաբերում է աշխատավարձի վարքագիծը բնութագրող հավասարմանը, ապա այս առումով կարևորվում է աշխատուժի շուկայի և ՀՆԱ ճեղքվածքի վերաբերյալ վիճակագրությունը, որոնցից էապես կախված է աշխատավարձի վարքագիծը: Այստեղ առկա են որոշակի խնդիրներ, քանի որ մի շարք ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, իսկ եղած որոշ ցուցանիշներ արժանահավատ չեն:

Նշված սահմանափակումների պարագայում աշխատավարձի հավասարումը կազմելիս առաջնորդվել ենք հետևյալ դատողություններով:

Ամբողջական պահանջարկի շարունակական աճի պայմաններում, տնտեսավարող սուբյեկտները, գների աճին զուգընթաց, սկսում են ավելացնել նաև արտադրության ծավալները: Այս իրավիճակում նոր աշխատողների ներգրավման անհրաժեշտություն է առաջանում, որի արդյունքում կրճատվում է ՀՆԱ ճեղքվածքը: Քանի որ գործազրկությունը մոտենում է իր բնականոն մակարդակին, ուստի, պահանջարկի գործոններից աշխատավարձի առաձգականությունը աճում է: Այդ երևույթն ավելի ճիշտ արտացոլելու համար նպատակահարմար է աշխատավարձի հավասարման համար ընտրել էքսպոնենցիալ ֆունկցիոնալ ձևը: Համախառն պահանջարկից աշխատավարձի կախվածությունը բնութագրելու համար հավասարման մեջ ներառել ենք մասնավոր տրանսֆերտները և փողի առաջարկը:

Գների հավասարումներում գործազրկության մակարդակը ուղղակի ներառված չէ, ինչպես ենթադրվում է Ֆիլիպսի կորով (գործազրկության վերաբերյալ վիճակագրության անարժանահավատ լինելու պատճառով), այլ որպես գնագոյացման տարր օգտագործել ենք աշխատավարձը:

1.6. Ներմուծման գներ

Ներմուծման գները ներքին մրցակցող ապրանքների գների համար դիտարկել ենք որպես սահմանափակում, քանի որ, ներքին արտադրության ծավալների համեմատ, ներմուծումն անսահմանափակ է, և ներքին մրցակցող ապրանքների գների աճի դեպքում անսահմանափակ քանակությամբ ապրանքներ կարող են ներմուծվել, ինչը կզսպի գների աճը: Հիմք ընդունելով այս դատողությունները, ներքին մրցակցող ապրանքների գների համար որպես բացատրող փոփոխական վերցրել ենք ներմուծվող ապրանքների գները:

1.7. Մոդելի կառուցման հիմքը և գնահատման արդյունքները

Այժմ դիտարկենք առանձին ապրանքախմբերի և աշխատավարձերի համար հավասարումների կազմման հիմնավորումները:

Մեր վերլուծության նպատակն է կառուցել մի մոդել, որը հնարավորություն կտա գնաճի վերաբերյալ կանխատեսումներ կատարել: Կանխատեսումներ կատարելու համար անհրաժեշտ է ունենալ մոդելում ընդգրկված բոլոր արտածին փոփոխականների սպասվող մակարդակները: Քանի որ աշխատավարձը օգտագործվել է գրեթե բոլոր ապրանքախմբերի գները բացատրելու համար, ապա անհրաժեշտություն է առաջանում կազմել նաև աշխատավարձի հավասարումը: Այդ հավասարման միջոցով կկարողանանք հաշվարկել աշխատավարձի սպասվող մակարդակը՝ հնարավորություն ստանալով այդ ցուցանիշը կիրառել գների կանխատեսման համար:

Ինչպես նշել էինք, աշխատավարձի հավասարման համար ընտրվել է էքսպոնենցիալ ֆունկցիոնալ տեսք:

$$w = e^{a*MS+b*TREX} * w(-1)$$ որտեղ՝

w-ն աշխատավարձն է,

MS-ը՝ փողի առաջարկը,
TREX-ը՝ մասնավոր տրանսֆերտները՝ դրամական արտահայտությամբ,
a,b-ն՝ զրոյից մեծ գործակիցները:

Այս հավասարումը լոգարիթմելով՝ ստանում ենք հետևյալ հավասարումը, որը և օգտագործել ենք մեր մոդելում.

$$\log(w) = a * MS + b * TREX + \log(w(-1))$$

Գնահատված հավասարումն ունի հետևյալ տեսքը.

Dependent Variable: LW				
Method: Least Squares				
Sample(adjusted): 1998:2 2004:2				
Included observations: 25 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
MS(-1)	1.53E-06	4.61E-07	3.306232	0.0035
C	1.914780	0.352180	5.436932	0.0000
TREX(-1)	2.06E-06	6.90E-07	2.987462	0.0073
LW(-1)	0.799174	0.037915	21.07817	0.0000
D1	-0.114069	0.008386	-13.60283	0.0000
R-squared	0.996709	Mean dependent var		10.07255
Adjusted R-squared	0.996050	S.D. dependent var		0.269079
S.E. of regression	0.016910	Akaike info criterion		-5.144915
Sum squared resid	0.005719	Schwarz criterion		-4.901139
Log likelihood	69.31143	F-statistic		1514.150
Durbin-Watson stat.	2.672157	Prob(F-statistic)		0.000000

որտեղ՝
LW-ն աշխատավարձն է՝ լոգարիթմական արտահայտությամբ,
D1-ը՝ կեղծ փոփոխական՝ առաջին եռամսյակների սեզոնայնությունը չեզոքացնելու համար:

Հավասարման պահանջարկի կողմը բնութագրող փոփոխականները՝ փողի առաջարկը և մասնավոր տրանսֆերտները, ներառված են մեկ լագով և ունեն դրական ազդեցություն աշխատավարձերի մակարդակի վրա: Պահանջարկի գործոնների մակարդակների աճին զուգահեռ, աճում է նաև աշխատավարձի վրա դրանց ազդեցության չափը՝ պայմանավորված աշխատավարձի հավասարման ֆունկցիոնալ ձևով: Այս պնդման տրամաբանությունն այն է, որ պահանջարկի շարունակական աճը հանգեցնում է տնտեսությունում զբաղվածության մակարդակի աճի, և արդեն լրիվ զբաղվածության մոտենալու պայմաններում, պահանջարկի աճը ամբողջությամբ անդրադառնում է աշխատավարձերի մակարդակի վրա:

Ինչպես երևում է հավասարումից, տրանսֆերտների ազդեցության չափը ավելի մեծ է, քան փողի առաջարկինը: Դա բացատրվում է նրանով, որ, ի տարբերություն փողի առաջարկի, տրանսֆերտները հանդիսանում են ուղղակի եկամուտ:

Աշխատավարձի լագը, պահանջարկի գործոններից բացի, ներառում է բոլոր այն փոփոխականները, որոնք ազդում են աշխատավարձերի վրա:

Աշխատավարձերի առաջին եռամսյակների սեզոնայնությունը չեզոքացնելու համար օգտագործել ենք մեկ կեղծ փոփոխական:

Ներքին մրցակցող ապրանքներ

Քանի որ ներմուծված ապրանքների գները, ինչպես նշել ենք, ներքին մրցակցող ապրանքների գների համար սահմանափակող բնույթ ունեն, այդ պատճառով դրանք ուղղակի ներառել ենք ներքին մրցակցող ապրանքների գների հավասարման մեջ:

Այս ոլորտը համարել ենք առաջատար և աշխատավարձը այստեղ ներառել ենք ընթացիկ լագով՝ որպես գնագոյացման անմիջական գործոն:

Իրական ՀՆԱ-ն հավասարման մեջ ընդգրկված է որպես առաջարկի կողմ և ունի բացասական ազդեցություն գների մակարդակի վրա:

Հավասարման մեջ ներառված է նաև ներքին մրցակցող ապրանքների գների լագը և մեկ կեղծ փոփոխական՝ 2003 թվականի երրորդ եռամսյակի գների կտրուկ աճը չեզոքացնելու համար:

Ներքին մրցակցող ապրանքների գների հավասարումն ունի հետևյալ տեսքը.

Dependent Variable: LCPIDOMX				
Method: Least Squares				
Sample(adjusted): 1999:1 2004:3				
Included observations: 23 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	-0.621540	0.480515	-1.293488	0.2131
LCPIIMPORT	0.878279	0.134414	6.534140	0.0000
LW	0.134089	0.030842	4.347585	0.0004
LRGDP	-0.136126	0.046110	-2.952205	0.0089
LCPIDOMX(-1)	0.338260	0.083553	4.048435	0.0008
D2	-0.024343	0.007448	-3.268348	0.0045
R-squared	0.963929	Mean dependent var		4.557676
Adjusted R-squared	0.953320	S.D. dependent var		0.036111
S.E. of regression	0.007802	Akaike info criterion		-6.649428
Sum squared resid	0.001035	Schwarz criterion		-6.353212
Log likelihood	82.46842	F-statistic		90.85955
Durbin-Watson stat.	1.793772	Prob(F-statistic)		0.000000

որտեղ՝

LCPIDOMX-ը սպառողական զամբյուղում ներքին արտադրության ապրանքների գներն են (լոգարիթմական արտահայտությամբ), որոնք մրցակցում են ներմուծված ապրանքների հետ,

LCPIIMPORT-ը՝ սպառողական զամբյուղում ներմուծված ապրանքների գները՝ լոգարիթմական արտահայտությամբ,

LRGDP-ը՝ իրական ՀՆԱ-ն՝ լոգարիթմական արտահայտությամբ,
D2-ը՝ կեղծ փոփոխական՝ 2003 թվականի երրորդ եռամսյակի արտաքին շոկի հետևանքով առաջացած գների կտրուկ աճը չեզոքացնելու համար:

Ինչպես երևում է ստացված արդյունքներից, մեր կողմից արված ենթադրությունները հաստատվում են: Մասնավորապես՝ ամենամեծ ազդեցության գործակիցն ունեն ներմուծված ապրանքների գները, ՀՆԱ-ն ունի բացասական գործակից և ընթացիկ լագով աշխատավարձն ունի նշանակալի ազդեցություն:

<u>Ներքին չմրցակցող ապրանքներ</u>

Ներքին չմրցակցող ապրանքների գների հավասարումը կազմելիս աշխատավարձը ներառել ենք ընթացիկ լագով՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ այս ոլորտը նույնպես առաջատար է: Ի տարբերություն ներքին մրցակցող գների, որտեղ անսահմանափակ ներմուծման հնարավորության պատճառով պահանջարկի գործոններ ներառված չեն (այսինքն՝ առաջարկի կորն ունի հորիզոնական դիրք), ներքին չմրցակցող ապրանքների գների վրա պահանջարկն ունենում է էական ազդեցություն: Այդ պատճառով այս հավասարման մեջ ներառել ենք նաև փողի առաջարկը և մասնավոր տրանսֆերտները:

Մեր գնահատած հավասարումն ունի հետևյալ տեսքը.

Dependent Variable: LCPIDOM				
Method: Least Squares				
Sample(adjusted): 2000:1 2004:3				
Included observations: 19 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
LMS(-4)	0.056158	0.022629	2.481699	0.0275
LW	0.124493	0.032288	3.855666	0.0020
LRGDP	-0.257380	0.038343	-6.712510	0.0000
C	5.430761	0.265350	20.46644	0.0000
LTREX	0.036957	0.009384	3.938479	0.0017
LTREX(-1)	0.012362	0.006063	2.038952	0.0623
R-squared	0.971512	Mean dependent var		4.581445
Adjusted R-squared	0.960555	S.D. dependent var		0.022471
S.E. of regression	0.004463	Akaike info criterion		-7.733933
Sum squared resid	0.000259	Schwarz criterion		-7.435689
Log likelihood	79.47237	F-statistic		88.66699
Durbin-Watson stat	1.378353	Prob(F-statistic)		0.000000

որտեղ՝

LCPIDOM-ը՝ ներքին չմրցակցող ապրանքների գներն են՝ լոգարիթմական արտահայտությամբ,
LMS-ը՝ փողի առաջարկը՝ լոգարիթմական արտահայտությամբ,
LTREX-ը՝ դրամական արտահայտությամբ մասնավոր տրանսֆերտները՝ լոգարիթմած:

Հավասարման արդյունքներից երևում է, որ և՛ ներքին մրցակցող, և՛ ներքին չմրցակցող գների վրա աշխատավարձը ազդում է նույն չափով, որը լրացուցիչ հիմնավորում է մեր այն մոտեցումը, որ այս երկու ճյուղերն էլ առաջատար են, և աշխատավարձը՝ որպես գնագոյացման տարր, ունի էական նշանակություն:

Այս հավասարման մեջ ՀՆԱ ազդեցության գործակիցն ավելի մեծ է, քան ներքին մրցակցող ապրանքների գների հավասարման մեջ, որը տրամաբանական է, քանի որ ներքին չմրցակցող ապրանքների գներն ավելի շատ են պայմանավորվում ՀՆԱ տատանումներով:

Այստեղ նաև պահանջարկի գործոններն ունեն նշանակալի ազդեցություն, և մասնավոր տրանսֆերտների կուտակային ազդեցությունը մոտավորապես հավասար է փողի առաջարկի ազդեցության գործակցին:

Ներմուծված ապրանքներ

Ներմուծված ապրանքների գները կախվածության մեջ ենք դրել ներմուծման միավոր արժեքից՝ բազմապատկած փոխարժեքով, աշխատավարձից և ՀՆԱ-ից:

Dependent Variable: LCPIIMPORT				
Method: Least Squares				
Sample(adjusted): 2000:1 2004:3				
Included observations: 19 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
LEXIUV(-1)	0.107868	0.040687	2.651158	0.0181
LW(-2)	0.065649	0.018873	3.478538	0.0034
C	3.701358	0.134391	27.54178	0.0000
LRGDP	-0.039343	0.026016	-1.512241	0.1513
R-squared	0.945813	Mean dependent var		4.548944
Adjusted R-squared	0.934975	S.D. dependent var		0.021174
S.E. of regression	0.005399	Akaike info criterion		-7.420425
Sum squared resid	0.000437	Schwarz criterion		-7.221596
Log likelihood	74.49404	F-statistic		87.27238
Durbin-Watson stat.	1.840140	Prob(F-statistic)		0.000000

Այս հավասարման համար առաջադրված կանխավարկածն այն մասին, որ այս ոլորտում աշխատավարձերը արձագանքում են առաջատար ճյուղերում ձևավորված աշխատավարձերին, հաստատվեց փաստացի գնահատականներով: Հավասարման մեջ ընդգրկված աշխատավարձի լագերից միայն երկրորդ լագն ունի նշանակալի ազդեցություն:

Գյուղատնտեսական ապրանքներ

Գյուղատնտեսական ապրանքների գների հավասարման համար որպես բացատրող փոփոխականներ ենք դիտարկել գյուղատնտեսական ապրանքների արտադրության ծավալը, աշխատավարձը և փողի առաջարկը:

Dependent Variable: LCPIAGR				
Method: Least Squares				
Sample(adjusted): 2000:1 2004:3				
Included observations: 19 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.

LQAGR	-1.265993	0.162410	-7.795058	0.0000
LW(-2)	0.922746	0.198523	4.648054	0.0004
LMS(-1)	0.296281	0.126909	2.334597	0.0350
C	6.238282	1.238855	5.035521	0.0002
DA	0.150715	0.039055	3.859064	0.0017
R-squared	0.932946	Mean dependent var		4.588126
Adjusted R-squared	0.913788	S.D. dependent var		0.179765
S.E. of regression	0.052782	Akaike info criterion		-2.824342
Sum squared resid	0.039004	Schwarz criterion		-2.575806
Log likelihood	31.83125	F-statistic		48.69691
Durbin-Watson stat	2.203501	Prob(F-statistic)		0.000000

որտեղ՝

LCPIAGR-ը գյուղատնտեսական ապրանքների գներն են՝ լոգարիթմական արտահայտությամբ,

LQAGR-ը՝ գյուղատնտեսական ապրանքների արտադրության ծավալը՝ լոգարիթմական արտահայտությամբ,

DA-ն՝ կեղծ փոփոխական, որն օգտագործել ենք 2002 թվականին վեգետացիոն շրջանի ուշացմամբ պայմանավորված գների աճը չեզոքացնելու համար:

Գյուղմթերքների գների վրա ամենամեծ ազդեցությունն ունի գյուղատնտեսական արտադրության ծավալը, որը, որպես առաջարկ, բացասական ազդեցություն է ունենում գների մակարդակի վրա:

Ենթադրել ենք, որ այս ոլորտի աշխատավարձերը արծագանքում են առաջատար ճյուղերի աշխատավարձերին և այդ պատճառով այստեղ աշխատավարձերը ներառել ենք երկրորդ լագով:

Գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված՝ հավասարման մեջ ներառել ենք փողի առաջարկի առաջին լագը՝ որպես պահանջարկի կարճաժամկետ տատանումները բնութագրող գործոն:

Ծառայությունների գներ

Ծառայությունների գները հիմնականում կախված են իրենց լագից և փողի առաջարկից:

Dependent Variable: LCPISERV				
Method: Least Squares				
Sample(adjusted): 1999:1 2004:3				
Included observations: 23 after adjusting endpoints				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	1.369270	0.226630	6.041868	0.0000
LCPISERV(-1)	0.663402	0.061940	10.71033	0.0000
LMS(-1)	0.020673	0.007444	2.777244	0.0116
R-squared	0.969185	Mean dependent var		4.746401
Adjusted R-squared	0.966104	S.D. dependent var		0.032315
S.E. of regression	0.005949	Akaike info criterion		-7.289937
Sum squared resid	0.000708	Schwarz criterion		-7.141829
Log likelihood	86.83428	F-statistic		314.5203
Durbin-Watson stat.	1.900907	Prob(F-statistic)		0.000000

Բենզինի գներ

Բենզինի գների համար որպես բացատրող փոփոխական վերցրել ենք բենզինի միջազգային գինը և փոխարժեքը:

Dependent Variable: B				
Method: Least Squares				
Sample(adjusted): 1999:1 2004:1				
Included observations: 21 after adjusting endpoints				
Convergence achieved after 64 iterations				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
BI	0.521435	0.071838	7.258525	0.0000
EXR	0.781817	0.349539	2.236706	0.0399
C	-2.499307	2.020380	-1.237048	0.2339
AR(1)	1.426789	0.149539	9.541238	0.0000
AR(2)	-0.759707	0.151445	-5.016387	0.0001
R-squared	0.990940	Mean dependent var		5.042742
Adjusted R-squared	0.988675	S.D. dependent var		0.130184
S.E. of regression	0.013854	Akaike info criterion		-5.516244
Sum squared resid	0.003071	Schwarz criterion		-5.267549
Log likelihood	62.92057	F-statistic		437.5083
Durbin-Watson stat.	1.685886	Prob(F-statistic)		0.000000

որտեղ՝

B-ն բենզինի ներքին գինն է,

BI-ը՝ բենզինի միջազգային գները,

EXRը՝-դոլար/դրամ փոխարժեքն է:

2. ՄՈԴԵԼՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մոդելում օգտագործված շարքերը հարթեցված չեն և վերցված են եռամսյակային կտրվածքով:

Գնային ցուցանիշները կուտակային են և հաշվարկվել են՝ որպես բազիս ընդունելով 1997 թվականի չորրորդ եռամսյակը:

Որպես փոխարժեք վերցվել է եռամսյակի վերջին ամսվա միջին փոխարժեքը:

Հավասարումներում օգտագործված դրամային զանգվածը հաշվարկվել է որպես տվյալ եռամսյակի ամիսների միջին:

Որպես աշխատավարձի ցուցանիշ վերցվել է ԱՎԾ կողմից հրապարակված՝ տնտեսության միջին աշխատավարձը:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Մոդելի գնահատված հավասարումների գործակիցներից կառուցել ենք աղյուսակ, որտեղ ներկայացված են ներծին փոփոխականների վրա արտածին փոփոխականների ազդեցության գործակիցները:

Արտածին \ Ներծին	Աշխատավարձ (լոգարիթմական արտահայտությամբ)	Ներքին մրցակցող ապրանքների գներ (լոգարիթմական արտահայտությամբ)	Ներմուծված ապրանքների գներ (լոգարիթմական արտահայտությամբ)	Ներքին չմրցակցող ապրանքների գներ (լոգարիթմական արտահայտությամբ)	Ծառայությունների գներ լոգարիթմական արտահայտությամբ	Գյուղմթերքների գներ (լոգարիթմական արտահայտությամբ)	Բենզինի գներ
Դրամային զանգված՝ մեկ լագով	0.00000153	-	-	-	-	-	-
Դրամային զանգված՝ մեկ լագով, լոգարիթմական արտահայտությամբ	-	-	-	-	0.02	0.296	-
Դրամային զանգված՝ չորրորդ լագով, լոգարիթմական արտահայտությամբ	-	-	-	0.056	-	-	-
Աշխատավարձ՝ լոգարիթմական արտահայտությամբ	-	0.134	-	0.124	-	-	-
Աշխատավարձ՝ մեկ լագով, լոգարիթմական արտահայտությամբ	0.799	-	-	-	-	-	-
Աշխատավարձ՝ երկրորդ լագով, լոգարիթմական արտահայտությամբ	-	-	0.065	-	-	0.922	-
Մասնավոր տրանսֆերտներ՝ մեկ լագով	0.00000206	-	-	-	-	-	-
Մասնավոր տրանսֆերտներ՝ լոգարիթմական արտահայտությամբ	-	-	-	0.036	-	-	-
Մասնավոր տրանսֆերտներ՝ մեկ լագով, լոգարիթմական արտահայտությամբ	-	-	-	0.012	-	-	-
Ներմուծված ապրանքների գներ՝ լոգարիթմական արտահայտությամբ	-	0.878	-	-	-	-	-
Իրական ՀՆԱ՝ լոգարիթմական արտահայտությամբ	-	-0.136	-0.039	-0.257	-	-	-
Ներքին մրցակցող ապրանքների գներ՝ մեկ լագով, լոգարիթմական արտահայտությամբ	-	0.338	-	-	-	-	-
Ներմուծման միավոր արժեք (արտահայտած դրամով)՝ մեկ լագով, լոգարիթմական արտահայտությամբ	-	-	0.107	-	-	-	-
Ծառայությունների գներ՝ մեկ լագով, լոգարիթմական արտահայտությամբ	-	-	-	-	0.663	-	-
Գյուղատնտեսական արտադրության իրական ծավալ՝ լոգարիթմական արտահայտությամբ	-	-	-	-	-	-1.265	-
Բենզինի միջազգային գին	-	-	-	-	-	-	0.521
Փոխարժեք	-	-	-	-	-	-	0.781

Ինչպես երևում է աղյուսակից, փողի առաջարկը կարճաժամկետ հատվածում ուղղակի ազդում է ծառայությունների և գյուղմթերքների գների վրա, իսկ երկարաժամկետ հատվածում՝ ներքին չմրցակցող ապրանքների գների վրա: Մնացած ապրանքախմբերի գների վրա փողի առաջարկի ազդեցությունը դրսևորվում է աշխատավարձի միջոցով՝ միջնորդավորված ձևով:

Աշխատավարձը առաջատար համարվող ոլորտներում ընդգրկել ենք ընթացիկ լագով, ընդ որում՝ ազդեցության գործակիցները մոտավորապես նույնն են: Իսկ մյուս ոլորտները, որտեղ աշխատավարձերը հետևում են առաջատար ոլորտների աշխատավարձերին, այդ ցուցանիշը վերցրել ենք երկրորդ լագով:

Փոխարժեքը ուղղակի ներառված է միայն բենզինի գնի հավասարման մեջ, բայց իր ազդեցությունը դրսևորում է ինչպես ներմուծման միավոր արժեքի, այնպես էլ մասնավոր տրանսֆերտների միջոցով:

Մոդելի արդյունքների համաձայն՝ արտածին փոփոխականների կուտակային ազդեցություններն են:

Փողի առաջարկի 10 տոկոս աճը հանգեցնում է ընդհանուր գնաճի մեկ տոկոսային կետով ավելացմանը:

Փոխարժեքի 10 տոկոս աճը ավելացնում է ընդհանուր գնաճը 0.7 տոկոսային կետով:

Մասնավոր տրանսֆերտների 10 տոկոս աճը հանգեցնում է գնաճի 0.3 տոկոսային կետով ավելացմանը:

Իրական ՀՆԱ-ի աճի փոփոխությունը 10 տոկոսային կետով՝ փոփոխում է ընդհանուր գնաճը 0.8 տոկոսային կետով:

2005 թվականի համար ընտրել ենք մոդելի արտածին փոփոխականների հետևյալ սցենարը:

Եռամսյակ	Փողի առաջարկի աճի տեմպ (%)	Մասնավոր տրանսֆերտների աճի տեմպ (%)	Փոխարժեք	Ներմուծման միավոր արժեքի աճի տեմպ (%)	Բենզինի միջազգային գին	Իրական ՀՆԱ-ի աճի տեմպ
2005						
I եռ.	16	20.0	460	6.8	50.0	8.00
II եռ.	16	20.0	440	8.2	50.0	8.00
III եռ.	19	20.0	430	8.6	50.0	8.00
IV եռ.	22	20.0	420	6.8	50.0	8.00

Այս պարագայում ներծին փոփոխականների համար ստանում ենք հետևյալ կանխատեսումները:

Աճը հաշվարկված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

Եռամսյակ	ՍԳԻ-ում գյուղ-մթերքների գների աճի տեմպ	ՍԳԻ-ում ծառայությունների աճի տեմպ	ՍԳԻ-ում ներքին չմրցակցող ապրանքների գների աճի տեմպ	ՍԳԻ-ում ներքին մրցակցող ապրանքների գների աճի տեմպ	ՍԳԻ-ում ներմուծված ապրանքների գների աճի տեմպ	ՍԳԻ-ում հացի գնի աճի տեմպ	ՍԳԻ-ում բենզինի գնի աճի տեմպ	ՍԳԻ աճի տեմպ
2005								
I եռ.	22.36	-1.97	5.22	1.61	-0.21	-5.93	3.07	3.62
II եռ.	14.03	-0.82	2.26	0.82	-0.36	-5.32	-5.77	2.16
III եռ.	15.37	0.51	0.49	2.75	0.11	-2.95	-4.53	2.85
IV եռ.	12.84	1.70	0.47	2.00	0.04	-0.80	-7.36	3.02

Ամփոփելով՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները:

Մոդելի կառուցման համար առաջադրվել էին որոշակի ենթադրություններ, որոնցից կախված՝ ձևավորվել էր մոդելի վարքագծային հավասարումների կառուցվածքը, որը կիրառական հաստատման անհրաժեշտություն ուներ: Հիմնական ենթադրություններից մեկն այն էր, որ գները բացատրվում են պահանջարկը, առաջարկը, գնագոյացումը և հարաբերական գները բնութագրող գործոնների կամ դրանց որոշակի համախմբի միջոցով՝ կախված յուրաքանչյուր ապրանքախմբի առանձնահատկությունից: Հավասարումների գնահատման արդյունքները վկայում են, որ մեր այս ենթադրությունը տեղին է, քանի որ վերը

նշված փոփոխականներով հնարավոր եղավ գնահատել մոդելի վարքագծային հավասարումները՝ ստանալով էական արդյունքներ:

Քանի որ ՀՆԱ ճեղքվածքի և աշխատանքի արտադրողականության վերաբերյալ մեր ունեցած վիճակագրական տվյալները այնքան էլ հավաստի չեն, ուստի ենթադրել էինք, որ կարճաժամկետ հատվածում արտադրողականությունը դանդաղ է աճում, և պահանջարկի աճը հանգեցնում է ՀՆԱ ճեղքվածքի կրճատման: Նման իրավիճակում, պահանջարկի վրա ազդող արտածին գործոնների յուրաքանչյուր լրացուցիչ աճ հանգեցնում է աշխատավարձերի ավելի մեծ աճի: Նշված կախվածությունը բնութագրելու համար ընտրել էինք աշխատավարձի հավասարման էքսպոնենցիալ ֆունկցիոնալ ձև: Այս ենթադրությամբ կառուցված հավասարումը գնահատել էինք փաստացի տվյալների հիման վրա և ստացել նշանակալի արդյունքներ:

Մեր կողմից դասակարգված ապրանքախմբերից առանձնացրել էինք այնպիսիք, որոնք, ըստ մեզ, առաջատար են և դրանց հավասարումներում աշխատավարձը ընդգրկել էինք ընթացիկ լագով: Մյուս խմբերի համար, որտեղ աշխատավարձերը արձագանքում են առաջատար ճյուղերում դրսևորված փոփոխություններին, դրանք ընդգրկել էինք երկու լագով:

Այս մոտեցումը հիմնավորվում է գնահատման արդյունքներով: Քանի որ և՛ ներքին մրցակցող, և՛ ներքին չմրցակցող ապրանքների գների վրա աշխատավարձը ազդում է ընթացիկ լագով և նույն չափով, ապա կարելի է ասել, որ այս երկու ճյուղերն էլ առաջատար են, և աշխատավարձը՝ որպես գնագոյացման տարր, ունի էական նշանակություն: Իսկ մյուս ապրանքախմբերի հավասարումներում աշխատավարձերի երկրորդ լագն է նշանակալի:

Ներմուծման գները ներքին մրցակցող ապրանքների գների համար որպես սահմանափակում դիտարկելու ենթադրությունը նույնպես հաստատվում է, որովհետև ներքին մրցակցող ապրանքների հավասարման մեջ ներմուծված ապրանքների գնի ազդեցության գործակիցը մեծ է:

Այսպիսով կարելի է ասել, որ մոդելի կառուցման ժամանակ մեր կատարած տեսական ենթադրությունները հաստատվել են նաև փաստացի ժամանակային շարքերի վերլուծությամբ:

Այս մոդելը կիրառվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվող ֆինանսական և դրամավարկային քաղաքականության ծրագրավորման աշխատանքներում:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ԲԱՇԽՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

Ա. Նախշիկյան, Վ. Մելիք-Փարսադանյան

Դրամավարկային քաղաքականության վարչություն


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզանում տարածված է այն տեսակետը, որ եկամուտների հավասարաչափ բաշխումը նպաստում է տնտեսական աճին: Սակայն, թե՛ գիտական աշխարհում և թե՛ փորձագիտական վերլուծությունների արդյունքում չի ձևավորվել միանշանակ կարծիք այն մասին, թե եկամուտների բաշխումը ինչպիսի ազդեցություն ունի տնտեսական աճի վրա: Մասնավորապես, ըստ դասականների, եկամուտների անհավասար բաշխումը դրական է ազդում տնտեսական աճի վրա, իսկ ըստ Քեյնսի՝ այն ունի բացասական ազդեցություն:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ եկամուտների անհավասարությունը էական ազդեցություն ունի ամբողջական պահանջարկի կառուցվածքի վրա: Եվ անհավասարության ազդեցությունը տնտեսական աճի վրա դիտարկվում է միջնորդավորված՝ սպառման և ներդրումների ցուցանիշներով: Այսինքն՝ նախ դիտարկվում է անհավասարության ազդեցությունը սպառման և ներդրումների վրա, ապա՝ դրանց ազդեցությունը տնտեսության հետագա զարգացումների վրա:

ՀՀ ԿԲ կողմից իրականացվող ֆինանսական ծրագրավորման շրջանակներում տնտեսության իրական մասնավոր սպառումը և իրական մասնավոր ներդրումները կանխատեսվում են՝ դրանք կախվածության մեջ դիտարկելով իրական ՀՆԱ-ի կանխատեսված մակարդակից: Կանխատեսումներն իրականացվում են ADL (Autoregressive Distributed Lags) ռեգրեսիոն մոդելի միջոցով: ՀՆԱ-ն իր հերթին կանխատեսվում է ըստ տնտեսության առանձին ճյուղերի: Յուրաքանչյուր ճյուղի համար կանխատեսվում է տվյալ ճյուղի ավելացված արժեքը, այնուհետև հաշվարկվում է ՀՆԱ-ն:

Վերոնշյալ գործընթացը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Նկատենք, որ նշված մեթոդում չի կարևորվում եկամուտների բաշխումը: Այսինքն՝ չի դիտարկվում, թե ՀՆԱ-ն ինչպես է բաշխվում ռեսուրսների սեփականատերերի միջև: Մինչդեռ, քանի որ եկամուտների բաշխումը ճյուղերի միջև էապես տարբերվում է՝ կախված այն հանգամանքից, թե տնտեսական աճը ըստ ճյուղերի ինչպես է բաշխվում, կարող են փոփոխվել մասնավոր սպառման և ներդրումների ծավալները:


Դիտարկենք տնտեսության եկամտի սկզբնական բաշխումը, այսինքն՝ եկամտի բաշխումը սեփականատերերի և վարձու աշխատողների միջև: Ենթադրվում է, որ սեփականատերերի, որոնք շահույթ են ստանում, և վարձու աշխատողների, որոնց եկամտի մեծ մասը կազմում է աշխատավարձը, խնայողության նորմերը տարբեր են, ինչը նշանակում է, որ տնտեսավարողների այս երկու խմբերն իրենց եկամուտները տարբեր համամասնություններով են ուղղում սպառմանը և ներդրումներին: Հետևաբար սպառման և ներդրումների համամասնությունները կարող են տարբերվել՝ կախված այն հանգամանքից, թե տնտեսության յուրաքանչյուր ճյուղում ինչ համամասնությամբ է իրականացվում եկամտի բաշխումը շահույթի ու աշխատավարձի, և որ ճյուղը ինչ չափով է մասնակցում տնտեսական աճին:

Ուստի մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների կանխատեսման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել եկամուտների բաշխումը և՛ մակրո, և՛ միկրո մակարդակներում, այսինքն՝ և՛ տնտեսական աճին ճյուղերի մասնակցությունը, և՛ ճյուղերում եկամուտների բաշխումը շահույթի և աշխատավարձի:

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

Ասվածը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Սույն աշխատանքի նպատակն է հետազոտել և գնահատել ՀՀ տնտեսությունում եկամուտների բաշխման նշանակությունը ամբողջական պահանջարկի՝ սպառման և ներդրումների տեսանկյունից և արդյունքներն օգտագործել ֆինանսական ծրագրավորման շրջանակներում:

Աշխատանքում, հիմնվելով տնտեսության ճյուղերում եկամուտների բաշխման հետազոտության վրա, առաջադրվել է հիպոթեզ, ըստ որի՝ *մասնավոր սպառման և ներդրումների մեծությունները կախված են տնտեսության ճյուղային զարգացումների համամասնություններից*: Հիպոթեզի ստուգման նպատակով իրականացվել է մասնավոր սպառման արժեքների կանխատեսում՝ ըստ եկամուտների բաշխման:

Սպասվող արդյունքները հնարավորություն կտան քաղաքականության մշակման ժամանակ կիրառվող մասնավոր սպառման կանխատեսման մեթոդին զուգահեռ օգտագործել նաև այս աշխատանքում առաջարկվող մեթոդը, որը, ի տարբերություն նախորդի, մասնավոր սպառումը մեկնաբանում է ըստ ճյուղային զարգացումների և եկամուտների բաշխման:

ԱՃԻ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսագիտության առաջավոր դպրոցների կողմից եկամուտների բաշխմանը՝ որպես տնտեսական աճ և ընդհանրապես տնտեսական զարգացում պայմանավորող կատեգորիայի, տարբեր գնահատականներ են տրվում: Քանի որ այս աշխատանքի միջոցով փորձել ենք ներկայացնել եկամուտների բաշխման կարևորությունը տնտեսական զարգացման համամասնությունների տեսանկյունից, ապա ամփոփ դիտարկենք գիտական աշխարհում քննարկվող հիմնական առանցքային ուղղություններն այս հարցի վերաբերյալ:

Ըստ դասականների (Սմիթ, Ռիկարդո, Մարքս և այլոք)՝ տնտեսական աճը խնայողություններով ուղղորդվող գործընթաց է: Այսինքն՝ ներդրումներն իրականացվում են կապիտալի կուտակման շնորհիվ, որն իր հերթին պայմանավորված է սեփականատերերի կողմից ստացված շահույթի մակարդակով: Ներդրումների մակարդակն, այս պարագայում, որոշվում է միայն խնայողության նորմով: Ուստի եկամուտների ավելի հավասարաչափ բաշխումը պետք է հանգեցնի ազգային խնայողությունների չափերի նվազման և տնտեսական աճի ավելի ցածր տեմպերի: *Հետևաբար, ըստ դասականների, եկամուտների անհավասար բաշխումը նպաստում է տնտեսական աճին և երկընտրանքը (trade-off) տնտեսական աճի և եկամուտների բաշխման միջև անխուսափելի է:*

Դասականների այս դիրքորոշումը առաջինը քննադատել է Քեյնսը: Ըստ Քեյնսի՝ ժամանակակից տնտեսությունների երկու հիմնական խնդիրներն են գործազրկությունը և եկամուտների անհավասար բաշխումը: Նա նշում էր, որ «...անհավասարությունն առաջանում է այն սխալ համոզմունքից, որ կապիտալի աճը կախված է խնայելու ուժեղ մղումից և ավելցուկային միջոցների (շահաբաժինների) վերաներդրումից»[1]: Քեյնսի կարծիքով եկամուտների վերաբաշխմանն ուղղված այն միջոցառումներն, որոնք կմեծացնեն սպառման հակվածությունը, կարող են նպաստել կապիտալի աճին, հետևաբար նաև՝ տնտեսական աճին: *Այսինքն, ըստ Քեյնսի, եկամուտների անհավասար բաշխումը զսպում է տնտեսական աճը:*

Սոլոուն իր հայտնի տնտեսական աճի մոդելը կառուցել է համաձայն դասականների հիմնական դրույթների: Այն է՝ տնտեսական աճը խնայողություններով ուղղորդվող գործընթաց է: Տնտեսությունը գործում է կատարյալ մրցակցության և լրիվ զբաղվածության պայմաններում: Ենթադրվում է նաև հաստատուն հատույց, սակայն եկամուտների բաշխումը մոդելում որպես գործոն չի դիտարկվում[2]: Գործոնների գները որոշվում են դրանց սահմանային արտադրողականությամբ: Այսինքն՝ կապիտալի և աշխատուժի

---

[1] *...the (wrong) belief that the growth of capital depends upon the strength of the motive towords individual saving and that for a large proportion of this growth we are dependent on the savings of the rich out of their superfluity. [տե՛ս Քեյնս՝ General Theory; էջ 307]:*

[2] *Չնայած Սոլոուն չի օգտագործել ամբողջական պահանջարկի և ոչ մի ֆունկցիա, այնուամենայնիվ 1988 թվականին նա՝ իր Նոբելյան մրցանակի ճառի ժամանակ նշեց, որ ցանկություն ունի շարունակելու իր աշխատանքները՝ հիմնվելով ամբողջական պահանջարկի ֆունկցիայի վրա: Այս դեպքում, արդեն կարող է հնարավոր լինի տնտեսական աճի վրա եկամուտների անհավասար բաշխման ազդեցությունը դիտարկելը:*

մասնաբաժիններն ազգային եկամտում կախված են և՛ կապիտալի ու արտադրանքի հարաբերությունից, և՛ դրանց սահմանային արտադրողականությունից: Սա միկրոտնտեսագիտական բացատրություն է, ըստ որի՝ յուրաքանչյուր գործոնի համար վճարվում է օբյեկտիվ պայմաններից ելնելով, այսինքն՝ թելադրվում է շուկայի կողմից: Աշխատողների և սեփականատերերի խնայողության նորմերը հավասար են, այսինքն՝ խնայողության ընդհանուր կամ ագրեգացված նորմը անկախ է եկամուտների բաշխվածությունից: Այսքանից կարելի է եզրակացնել, որ Սոլոուի մոդելում եկամուտների բաշխումը ուղղակիորեն չի ազդում տնտեսական աճի վրա:

Դասականների գաղափարներն այլ ուղղությամբ զարգացրել է Կալդորը: Կալդորն առաջադրել է մի մոդել, որտեղ լրիվ զբաղվածության և մրցակցության պայմաններում ենթադրվում են տարբեր խնայողության նորմեր վարձու աշխատողների և սեփականատերերի համար: Ըստ նրա՝ աշխատավարձն ամբողջությամբ ուղղվում է սպառմանը, և միայն շահույթից են ձևավորվում խնայողություններ: Համաձայն այդ մոդելի՝ անհավասարությունը հանգեցնում է խնայողությունների և ներդրումների աճի, հետևաբար՝ տնտեսական աճի:

Լուի Պասինետին այս երևույթը մեկնաբանում է սպառման ֆունկցիայի տեսանկյունից, ըստ որի՝ աղքատներն ունեն սպառման սահմանային ավելի մեծ հակվածություն, քան հարուստները, ուստի անհավասարության խորացումը կհանգեցնի խնայողությունների և տնտեսական աճի: Կալդոր-Պասինետիի մեխանիզմը հիմնված է Քեյնսի ագրեգացված սպառողական ֆունկցիայի վրա, ըստ որի՝ մարդիկ իրենց եկամուտների մի մասը սպառում են, իսկ մյուս մասը՝ խնայում: Այս դեպքում հարուստների և աղքատների համար ենթադրվում են սպառման սահմանային տարբեր հակումներ, մինչդեռ Քեյնսի ֆունկցիայում խնայողության սահմանային նորմը նույնն է բոլորի համար: Միևնույն ժամանակ, ըստ Միլտոն Ֆրիդմանի, վերոնշյալ սպառման ֆունկցիան ընդհանուր եկամուտ և մշտական (պերմանենտ) եկամուտ հասկացությունները շփոթելու արդյունք է: Ֆրիդմանի սպառման տեսության համաձայն՝ անկախ ընթացիկ եկամտից, մարդիկ իրենց կյանքի ընթացքում ձգտում են ընտրել սպառման համամնման մակարդակներ: Սպառման համամնման մակարդակներն ապահովվում են ընթացիկ եկամտի մի հաստատուն մասով՝ մշտական (պերմանենտ) եկամտով: Ֆրիդմանը ցույց տվեց[3], որ եթե սպառման ֆունկցիայից տարանջատվի եկամտի ժամանակային գործոնը, ապա խնայողությունները համամասնական են մշտական եկամտին: Այսինքն՝ հաստատուն սպառման սահմանային հակման դեպքում եկամուտների բաշխվածությունը խնայողությունների վրա ազդեցություն չունի: Ստացվեց, որ ըստ Ֆրիդմանի, Կալդորի մեխանիզմը չի աշխատում: Մյուս կողմից, Կոտլիկովը և Սամերը պնդում են, որ հարստությունը և սպառումը կախված են ոչ թե կյանքի պարբերաշրջանի խնայողություններից, ինչպես ենթադրում է Ֆրիդմանը, այլ ժառանգությունից: Նշվում է նաև, որ կյանքի ընթացքում ստացված եկամտի մեջ ժառանգությունն ունի ոչ գծային տեսք: Այսինքն՝ սա չի հակասում անհավասարության բարձր մակարդակի առկայությանը, որը կարող է ավելի բարձր լինել, քան կյանքի պարբերաշրջանի տեսության դեպքում: Ուստի ոչ գծային խնայողության ֆունկցիայի պայմաններում, անհավասարության բարձր մակարդակները կհանգեցնեն խնայողությունների աճի:

Սակայն, նույն հիսունականներին, Սոլոուին զուգահեռ Արթուր Լյուիսի և Սայմոն Կուզնեցի աշխատանքների հիման վրա սկսում է զարգանալ աճի տեսության մեկ այլ ուղղություն, որում արդեն բաշխմանը հատկացվում է կարևոր դեր: Լյուիսի աճի մոդելում, որը ենթադրում է «աշխատուժի անսահմանափակ առաջարկ» և հիմնովին տարբերվում է Կալդորի և Սոլոուի մոդելներից, տնտեսական աճը պայմանավորված է արտադրական գործոնի՝ աշխատուժի տեղաշարժով տնտեսության ցածր արտադրողականությամբ ոլորտից դեպի բարձր արտադրողականություն ունեցող ոլորտ:

Սայմոն Կուզնեցն, ուսումնասիրելով երեք երկրների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի վիճակագրական տվյալները՝ հանգել է այն եզրակացության, որ տնտեսության զարգացման վաղ շրջանում եկամուտների անհավասարությունը մեծանում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճին զուգահեռ: Այնուհետև հասնելով մի մակարդակի՝ այդ կապը փոխում է իր բնույթը: Այսինքն՝ եկամուտների անհավասարությունը սկսում է նվազել մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճին զուգահեռ (Կուզնեցի Ո-աձև կորը): Կուզնեցն իր վերլուծության արդյունքը բացատրում է՝ հիմնվելով այն նույն ենթադրության վրա, որ տնտեսության մեջ տեղի է ունենում աշխատանքային ռեսուրսների վերաբաշխում ցածր արտադրողականությամբ ոլորտից դեպի ավելի բարձր արտադրողականություն ունեցող ոլորտ: Եթե անհավասարությունն այդ երկու ոլորտների միջև ավելի մեծ է, քան նրանցից յուրաքանչյուրում, ապա աշխատանքային ռեսուրսների տեղաշարժին զուգահեռ անհավասարության մակարդակը նախ կբարձրանա ամբողջ տնտե-

[3] *Տե՛ս Joseph E. Stiglitz, INCOME INEQUALITY: ISSUES AND POLICY OPTIONS,1998 Jason Furman, էջ 227:*

սությունում, այնուհետև կնվազի սկսած այն պահից, երբ աշխատանքային ռեսուրսների տեղաշարժը կհանգեցնի ոլորտներում աշխատավարձերի հավասարեցմանը[4]:

Կուզնեցի հիպոթեզն առաջինն է եղել, որը տնտեսական աճի և անհավասարության միջև ենթադրել է ոչ գծային կապ:

1971 թվականին Կալեսկին որոշակիորեն զարգացնելով Քեյնսի դրույթները՝ ցույց տվեց, որ շահույթի նորմից և կարողությունների կիրարկման մակարդակից կախված՝ տրված ներդրումային ֆունկցիայի դեպքում և մոնոպոլիստական մրցակցության պայմաններում, որն ենթադրում է գների հավելադրի (markup) ձևավորում, ամբողջական պահանջարկը և եկամուտների բաշխվածությունն է, որ կանխորոշում են տնտեսական աճը: Կալեսկին ցույց տվեց նաև, որ ճյուղերում եկամուտների բաշխումը աշխատավարձի և շահույթի կարող է փոփոխվել էնդոգեն (ներծին) կերպով, սակայն ընդհանուր բաշխումը չի փոխվի մինչև չփոխվեն հետևյալ փոփոխականներից մեկը կամ մի քանիսը, հարկային համակարգը կամ կառավարության եկամուտները, գնային քաղաքականությունը և արհմիությունների քաղաքականությունը[5]:

Տնտեսական աճի և եկամուտների անհավասար բաշխման խնդիրը դիտարկվել է նաև ստրուկտուրալիստների կողմից: Համաձայն ստրուկտուրալիստների (Լ Թեյլոր)՝ եկամուտների բաշխումն իր ազդեցությունն է ունենում ամբողջական պահանջարկի, հետևաբար նաև՝ տնտեսական աճի վրա[6]: Սա պայմանավորված է նրանով, որ տնտեսավարող սուբյեկտները շուկայում ունեն ազդեցության տարբեր աստիճաններ:

Ըստ ստրուկտուրալիստների՝ անհավասարությունը սահմանափակում է տնտեսության զարգացման հնարավորությունները, սակայն նրանցից ոմանք փորձում են պատասխանել այն հարցին, թե անհավասարությունը հարթեցնող քաղաքականություն իրականացնելու հետևանքով աշխատավարձերի բարձրացումն ինչ ազդեցություն կունենա տնտեսական աճի վրա: Ըստ նրանց՝ աշխատավարձերի աճը դրական ազդեցություն կունենա տնտեսական աճի վրա (wage-led growth) այն դեպքում, երբ սպառման աճի արդյունքում աճեն նաև ներդրումները: Հակառակ դեպքում աշխատավարձերի աճը կկրճատի համախառն պահանջարկը, ներդրումները և կզսպի տնտեսական աճը (profit-led growth):

Ամփոփելով աճի և բաշխման տեսությունների հակիրճ նկարագրությունը՝ կարող ենք ասել, որ այսօր ակադեմիական աշխարհում չկա մեկ միասնական կարծիք այս հարցի առնչությամբ: Մի շարք տեսություններ պնդում են, որ եկամուտների բաշխումը ազդում է տնտեսական աճի վրա, մյուսները դիտարկում են հակառակ կապը: Տեսությունների մի մասը այդ կապը չի քննարկում ընդհանրապես: Տարամետ են նաև այս խնդրի առնչությամբ կատարված էմպիրիկ վերլուծությունների արդյունքները:

Հաշվի առնելով այն հանգամանքը որ Հայաստանում բարձր է եկամուտների բևեռացվածությունը, և գրեթե բացակայում է ֆոնդային շուկան, կարծում ենք, ՀՀ տնտեսության համար աճ և բաշխում կապը առանձնակի ուշադրության է արժանի: Այնուամենայնիվ, համոզվելու համար դիտարկենք 1990-2003 թվականների ընթացքում մեր տնտեսությունում եկամուտների բաշխումը ըստ ճյուղերի և տնտեսական աճին ճյուղերի մասնակցության դինամիկան[7]:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1990-2003 ԹԹ.

Խնդրի ձևակերպումը հիմնականում հիմնված է այն ենթադրության վրա, որ Հայաստանում եկամուտների բաշխումը (շահույթի և աշխատավարձի) ճյուղերում կատարվում է տարբեր համամասնություններով: Խնդրի արդիականությունը կախված է նաև այն հանգամանքից, թե որքան հաճախակի է փոխվում ճյուղերի մասնակցությունը տնտեսական աճին: Քանի որ, եթե նույնիսկ բաշխման համամասնությունները ճյուղերում տարբերվեն, տնտեսական աճին ճյուղերի որոշակի օրինաչափ մասնակցության պարագայում մասնավոր սպառման և ներդրումների ծավալները կանխատեսելի կլինեն նաև համախառն եկամտից այդ կախվածությունը դիտարկելիս:

---

[4] Սակայն, կատարվել են մի շարք վերլուծություններ, որոնց արդյունքում արձանագրվել է Կուզնեցի հիպոթեզի թույլ արտահայտություն: Ըստ Դեյնհիգերի և Սքուերի (1996)՝ դիտարկված 88 երկրների համար երկարաժամկետ տնտեսական աճի առկայության պարագայում անհավասարությունը ճշգրտվել է 45 երկրներում և վատացել է 43-ում: Շատ դեպքերում անհավասարության փոփոխությունները եղել են չնչին:

[5] Ըստ Կալեսկիի, աշխատավարձերին ուղղված եկամուտների հավասար բաշխումը նպաստում է տնտեսական աճին: Իր մոդելում Կալեսկին աշխատողների և սեփականատերերի համար նույնպես ենթադրել էր տարբեր խնայողության նորմեր, սակայն, ի տարբերություն Կալդորի, ըստ նրա՝ անհավասարությունը զսպում է տնտեսական աճը:

[6] L. Թեյլոր, «Income Distribution, Inflation, and Growth», Lectures on Structuralist Macroeconomic Theory, 1994:


[7] Ներկայացված տեսությունների համեմատականը առավել մանրամասն տե՛ս «Theories Growth and Distribution», The World Bank Group, www.worldbank.org.

Այդ իսկ պատճառով փորձենք փաստացի տեղեկատվության ուսումնասիրման միջոցով պատասխանել այդ երկու հարցին.

- արդյո՞ք ճյուղերում եկամուտների բաշխումը տարբեր է,
- արդյո՞ք ճյուղերի մասնակցությունը տնտեսական աճին էականորեն տատանվում է:

Ինչպես տեսնում ենք, տնտեսության ճյուղային զարգացումների վերջին տարիների ընթացքը չի ընդգծում որոշակի կանոնավոր միտում (գրաֆիկ 1):


Գրաֆիկ 1. Տնտեսության ճյուղերի մասնակցությունը տնտեսական աճին



Ըստ տարիների տարբերվում են ճյուղերի մասնակցությունները տնտեսական աճին (տե՛ս գրաֆիկ 1): Կրկին դժվար է առանձնացնել որևէ ճյուղի դերը ընդհանուր համատեքստում կամ գնահատել միջճյուղային զարգացման որևէ օրինաչափություն: Ակնհայտ է, որ ճյուղերի մասնակցությունը տնտեսական աճին այս ժամանակահատվածում կարելի է բնութագրել որպես տատանողական և անկայուն: Եվ քանի դեռ տնտեսական զարգացումներն ուղղորդվում են կառուցվածքային էական տեղաշարժերով, նման երևույթը բնական կարելի է համարել:

Ինչ վերաբերում է եկամուտների բաշխմանը, ապա անցած տարիներին դրանք ևս էական փոփոխություններ են կրել[7] (տե՛ս գրաֆիկ 2):

Գրաֆիկ 2. Ավելացված արժեքի բաշխումը աշխատավարձի, շահույթի, արտադրության այլ զուտ հարկերի և կապիտալի սպառման միջև[8]



[7] *Եկամուտների գործոնային բաշխումը համախառն եկամտի բաշխումն է եկամտի տեսակների միջև՝ աշխատավարձ, համախառն շահույթ և անուղղակի հարկեր:*

Այսպես, 1990 թվականից համախառն ավելացված արժեքում աշխատավարձի կշիռը (0.62) շարունակել է նվազել մինչև 1995 թվականը՝ կազմելով 0.41 միավոր: Այնուհետև դրսևորել է աճի միտում մինչև 1999 թվականը և հասնելով 0.47 միավորի՝ մնացել է գրեթե անփոփոխ մինչև 2001թ.: 2002թ. նկատվել է աշխատավարձի կշռի փոքր-ինչ նվազում, ինչը պայմանավորված էր շինարարության ճյուղում ավելացված արժեքի բաշխման համամասնությունների էական փոփոխմամբ: Եվ քանի որ արտադրության այլ զուտ հարկերի կշիռը էական չէ եկամուտների կառուցվածքում, տրամագծորեն հակառակ վարքագիծ է դրսևորել շահույթի կշիռը: Հատկանշական է նաև այն, որ դիտարկվող ժամանակահատվածի վերջին մի քանի տարիներին գործոնային եկամուտների բաշխման կառուցվածքը մնացել է անփոփոխ: Ընդ որում, այդ միտումը դիտվում է տնտեսության բոլոր ճյուղերում:

Սակայն գործոնային եկամուտների բաշխումը տնտեսության ճյուղերի միջև էապես տարբերվում է: Հավելված 1-ում ներկայացված է տնտեսության ճյուղերում ավելացված արժեքի բաշխումը աշխատավարձի և համախառն շահույթի միջև:

Եթե 1990 թվականին արդյունաբերությունում և ծառայություններում աշխատավարձի կշիռը նույնն է՝ 68% և շինարարության համապատասխան ցուցանիշից փոքր է ընդամենը 5 տոկոսով, ապա 2002 թվականին պատկերը այլ է (տե՛ս հավելված 1): Աշխատավարձի կշիռը եկամուտներում համապատասխանաբար կազմում է՝ արդյունաբերությունում՝ 45.9%, շինարարությունում՝ 52.2%, ծառայություններում՝ 48.7%: Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը[9], ապա, համաձայն պաշտոնական վիճակագրության, 2002 թվականին ճյուղում աշխատավարձի կշիռը կազմել է 30.1%: Այսինքն՝ եթե մյուս երեք ճյուղերի հետ մեկտեղ դիտարկում ենք նաև գյուղատնտեսությունը, գործոնային եկամուտների բաշխման անհավասարության պատկերը ըստ ճյուղերի ավելի է սրվում:

Նկատենք նաև, որ ճյուղերում էապես տարբերվում են զուտ շահույթի և աշխատավարձի կշիռների միջին արժեքները: Շինարարությունում աշխատավարձի կշռի միջին արժեքը 1990-2002թթ. ամենաբարձրն է՝ 69.9%, իսկ գյուղատնտեսությունում աշխատավարձի միջին կշիռը կազմում է 30.7%, որն ամենացածրն է տնտեսությունում: Ծառայություններում և արդյունաբերությունում աշխատավարձի կշռի միջին արժեքը համապատասխանաբար կազմում է 52.9% և 44.2%:

Ամփոփելով վերը կատարված հակիրճ հետազոտությունը՝ կարող ենք ընդգծել, որ իրոք՝

- ճյուղերի մասնակցությունը տնտեսական աճին բավականին տատանողական է,
- տնտեսության ճյուղերի միջև եկամուտների բաշխումը կատարվում է տարբեր համամասնություններով:

Հիպոթեզի ձևակերպումը

Ընդհանուր եկամտի մեջ աշխատավարձի կշռի նվազումը և շահույթի աճը խորացնում են տնային տնտեսությունների միջև եկամուտների բաշխման անհավասարությունը:

Դա պայմանավորվում է նրանով, որ տնային տնտեսությունների միջև աշխատավարձի հավասարաչափ բաշխման հավանականությունն ավելի մեծ է, քան շահույթինը, քանի որ աշխատուժի շուկան կարգավորիչ դեր կատարելով, ըստ էության, մոտեցնում է աշխատավարձերի մակարդակները[10]: Իսկ, թեկուզ միայն հարստության սկզբնական անհավասարաչափ բաշխման պայմաններում, շահույթը բաժանվում է փոքրաթիվ մարդկանց միջև:

Հաշվի առնելով նաև աղքատության բարձր մակարդակը՝ *կարելի է ենթադրել, որ տնտեսությունում աշխատավարձի տեսքով եկամուտ ստացողները և շահույթ ստացողներն ունեն սպառման սահմանային տարբեր հակումներ*: Տնտեսությունում որպես աշխատավարձ ստացված եկամուտը գրեթե ամբողջովին ուղղվում է սպառմանը: Իսկ որպես շահույթ ձևավորված եկամուտը արդեն բաշխվում է սպառման և խնայողությունների՝ համաձայն գործող խնայողության նորմի:

Փաստորեն, հիմնվելով կատարված ենթադրությունների վրա, կարող ենք եզրակացնել, որ տնտեսության մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների ծավալները կախված են այն հանգամանքից, թե տնտեսական աճը ինչպես է բաշխվում աշխատավարձի և շահույթի միջև: Իսկ, քանի որ տնտեսության ճյուղերում եկամուտների բաշխումը էապես տարբերվում է, և տնտեսական աճին ճյուղերի մասնակցու-

---

[8] Աղբյուր՝ ՀՀ ազգային հաշիվները 1990-2001, ԱՎԾ, 2003:

[9] Համաձայն հաշվարկման մեթոդաբանության՝ գյուղատնտեսությունում շահույթ է հանդիսանում նաև տնային տնտեսությունների գործունեության արդյունքում ստացված զուտ հասույթը: Իսկ որպես աշխատավարձ է դիտարկվում վարձու աշխատանքի դիմաց ստացված եկամուտը:

[10] Մ. Թումասյան, Ա. Մկրտչյան, Ս. Մուրադյան, Աճն արդարացի բաշխման պայմաններում: Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն, Երևան, 2002:

թյունը փոփոխական է, *ուստի մասնավոր սպառման և ներդրումների համամասնությունները կախվածության մեջ են տնտեսության ծյուղային զարգացումների համամասնություններից:*

Հիպոթեզի նկարագրությունը

Աշխատանքի նախորդ մասում ձևակերպված հիպոթեզը ներկայացնենք մոդելի տեսքով: Մոդելի սահմանափակումներն են՝

1. դիտարկվում է տնտեսության ավելացված արժեքը, որը բաշխվում է աշխատավարձի և շահույթի միջև,
2. համաձայն կատարված ենթադրության՝ աշխատավարձի և շահույթի խնայողության նորմերը տարբեր են, ավելին՝ աշխատավարձն ամբողջությամբ սպառվում է. $s_w = 0$, $s_p \le 1$,
3. պարզության համար ենթադրենք, որ դիտարկվող տնտեսությունում բացակայում է պետական հատվածը:

Նշված սահմանափակումների պարագայում ներկայացնենք համախառն ներքին արդյունքը՝ ըստ ծախսերի.

$$Y = C + I + Nx \quad (1),$$

որտեղ՝

Y *-ը համախառն ներքին արդյունքն է,*
C*-ն՝ մասնավոր սպառումը,*
I *-ն՝ մասնավոր ներդրումները,*
Nx *-ը՝ զուտ արտահանումը:*

Համախառն ներքին արդյունքը կարելի է ներկայացնել նաև ըստ եկամտի.

$$Y = W + P = \sum_{i=1}^{n} y_i = \sum_{i=1}^{n} w_i + \sum_{i=1}^{n} p_i \quad (2),$$

որտեղ՝

W *-ն տնտեսության աշխատավարձն է,*
P *-ն՝ տնտեսության շահույթը,*
y_i *-ն՝ i-րդ ճյուղի համախառն արդյունքը,*
w_i *-ն՝ i-րդ ճյուղում ստեղծված աշխատավարձը,*
p_i *-ն՝ յուրաքանչյուր ճյուղի շահույթի մասը:*

Մյուս կողմից, տնտեսության ստացած եկամուտները սպառվում (C) կամ խնայվում (S) են, այսինքն.

$$Y = C + S \quad (3),$$

Համախառն սպառումը և խնայողությունները ըստ գործոնային եկամուտների կարող ենք ներկայացնել հետևյալ տեսքով.

$$C = (1 - s_w) \times W + (1 - s_p) \times P \quad (4),$$

$$S = s_w \times W + s_p \times P \quad (5),$$

և քանի որ $s_w = 0$, հետևաբար՝

$$C = W + (1 - s_p) \times P \quad (6),$$

$$S = s_p \times P \quad (7):$$

Կամ

$$C = \sum_{i=1}^{n} w_i + (1 - s_p) \times \sum_{i=1}^{n} p_i \quad (8),$$

$$S = s_p \times \sum_{i=1}^{n} p_i \quad (9),$$

(1), (3) և (9), հավասարումների միջոցով կստանանք, որ.

$$I = s_p \times \sum_{i=1}^{n} p_i - Nx \quad (10),$$

Մոդելի հավասարումների միջոցով տնտեսության մասնավոր սպառման և ներդրումների համամասնություններն արտահայտվում են տնտեսության չորս ճյուղերում ձևավորված համախառն եկամտի բաշխմամբ:

Հիպոթեզի ստուգման արդյունքները

Համաձայն ներկայացված հիպոթեզի՝ *մասնավոր սպառման և ներդրումների համամասնությունները կախված են տնտեսության ճյուղային զարգացումների համամասնություններից:* Ներկայացվեց մի մոդել, ըստ որի՝ տնտեսական աճը բաշխվում է աշխատավարձի և շահույթի, որոնք իրենց հերթին ուղղվում են սպառմանն ու ներդրումներին: Ընդ որում, մոդելում հստակ ընդգծված է տնտեսության ճյուղային զարգացումների դերն այդ գործընթացում, քանի որ համախառն աշխատավարձը և շահույթը ձևավորվում են ճյուղերի աշխատավարձերից և շահույթներից: Աշխատանքի այս մասում ներկայացնենք մոդելի հիման վրա կատարված վերլուծության արդյունքները և փորձենք ստուգել առաջադրված հիպոթեզի արժանահավատությունը: Ստուգման համար անհրաժեշտ է ըստ մոդելի կանխատեսել նախորդ մի քանի տարիների մասնավոր սպառման և ներդրումների արժեքները և դրանք համեմատել փաստացի արժեքների հետ: Կանխատեսված և փաստացի արժեքների միջև սխալի փոքր չափը կհաստատի հիպոթեզը, իսկ հակառակ դեպքում կժխտի այն:

Այդ նպատակով նախ անհրաժեշտ է հաշվարկել խնայողության նորմը համապատասխան տարիների համար և հետո կանխատեսել սպառման և ներդրումների մակարդակները:

Վիճակագրական տվյալները[11] դիտարկվել են 1995 թվականից սկսած, ընդ որում՝ քանի որ պարզության համար մոդելը դիտարկվում է առանց պետության, տվյալներից հանվել են հարկերը: Մասնավորապես՝ ավելացված արժեքից հանվել են արտադրության այլ զուտ հարկերը, աշխատավարձի ֆոնդից՝ եկամտահարկը, իսկ զուտ շահույթից՝ շահութահարկը: Եկամտահարկի միջին դրույքը վերցվել է 5%, իսկ շահութահարկի դրույքը՝ 20%[12]: Ելնելով գործող օրենսդրության նորմերից՝ գյուղատնտեսության զուտ շահույթից չի հանվել շահութահարկը: Բացի այդ, արդեն իսկ հարկված շահույթին գումարվել է կապիտալի սպառումը, քանի որ այն, այսպես թե այնպես, մնում է սեփականատիրոջ տնօրինության տակ:

Համաձայն մոդելի՝ սպառումը հավասար է բոլոր ճյուղերի շահույթների մի մասի և աշխատավարձերի գումարին, սակայն հաշվարկների ժամանակ սպառման մեջ գյուղատնտեսության ավելացված արժեքն ընդգրկվել է ամբողջությամբ: Այս ենթադրությունը կատարվել է՝ հիմնվելով այն փաստերի վրա, որ նախ՝ գյուղատնտեսությունում իրականացվող ներդրումները տնտեսության մյուս ճյուղերի համեմատ չնչին են, երկրորդ, համաձայն հաշվարկման մեթոդաբանության, գյուղատնտեսության շահույթը ներառել է նաև տնային տնտեսությունների կողմից ստացված խառը եկամուտները, որը, որպես կանոն, ամբողջությամբ ուղղվում է սպառմանը:

Նկարագրված մոդելում խնայողության նորմը հանդես էր գալիս որպես անհայտ փոփոխական, որի արժեքը (6) հավասարումից՝ $C = W + (1 - s_p) \times P$, կարող ենք ներկայացնել հետևյալ տեսքով.


$$s_p = 1 - (C - W) / P \ :$$

[11] *Աղբյուրը՝ «ՀՀ ազգային հաշիվները 1990-2001», ՀՀ ԱՎԾ, 2003, էջ 28-33:*
[12] *Դրույքաչափերը գնահատվել են ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչության կողմից:*

Հետևաբար, ունենալով սպառման, շահույթի և աշխատավարձի վիճակագրական տվյալները՝ հեշտությամբ կարելի է գտնել խնայողության նորմի արժեքները 1995-2002 թվականների համար: 2003 թվականի եկամուտների գործոնային բաշխման վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայության պատճառով անհրաժեշտություն է առաջանում այդ տարվա համար գնահատել խնայողության նորմի մեծությունը (տե՛ս հավելված 2):

Տնտեսության ճյուղերում եկամուտների բաշխման միտումներն ուսումնասիրելիս ուշադրություն դարձվեց այն հանգամանքին, որ վերջին տարիներին բոլոր ճյուղերի ավելացված արժեքներում աշխատավարձի և շահույթի կշիռները գրեթե կայուն են: Այդ իսկ պատճառով 2003 թվականի խնայողության նորմը գնահատելիս որպես աշխատավարձի և շահույթի կշիռներ վերցվում են նախորդ հինգ տարիների կշիռների միջինները (հավելված 2): Այդպիսով, ճյուղերի աշխատավարձերի և շահույթների մեծությունները մոտարկելուց հետո, հնարավոր է գնահատել նաև խնայողության նորմը 2003թ. համար (գրաֆիկ 3):


Գրաֆիկ 3. Խնայողության նորմի միտումները 1997-2003 թվականների ընթացքում



Համաձայն ստացված արդյունքների՝ տնտեսության ճյուղերի խնայողության նորմը դիտարկված ժամանակահատվածում իր նվազագույն արժեքն է ունեցել 1997 թվականին, կազմելով -0.715, այնուհետև դրսևորել է աճի միտումներ, որն արտահայտվում է պարաբոլային տրենդով ($R^2 = 0.9681$), և 2003 թվականին կազմել է -0.071 (գրաֆիկ 3): Հատկանշական է նաև այն, որ խնայողության նորմն ուղիղ համեմատական է տնտեսական աճի տեմպին, ինչի մասին է վկայում դրանց միջև կոռելյացիայի բարձր գործակիցը՝ 0.8:

Մինչև 2004 թվականի համար դատողություններ անելը, կատարենք որոշակի համեմատություններ: 2003 թվականի համար խնայողության նորմի կանխատեսումն իրականացնելով 1997-2002 թվականների շարքով (տե՛ս գրաֆիկ 4), ստանում ենք խնայողության նորմի –0.1984 արժեք:

Գրաֆիկ 4. Խնայողության նորմի կանխատեսումը 2003 թվականի համար՝ 1997-2002 թվականների տվյալների հիման վրա




2003 թ. մասնավոր սպառումը ստանալու համար օգտագործվում է աշխատավարձի, կապիտալի սպառման և զուտ շահույթի՝ նախորդ 5 տարիների կշիռների միջինը: Ստանալով կշիռները՝ հաշվարկում ենք աշխատավարձի, կապիտալի սպառման և զուտ շահույթի անվանական մեծությունները: Աշխատավարձից և զուտ շահույթից հարկերը նվազեցնելուց հետո զուտ շահույթին գումարվում է կապիտալի սպառումը՝ ձևավորելով համախառն շահույթ: Ունենալով աշխատավարձի և համախառն շահույթի մեծությունները (առանց հարկերի) և խնայողության նորմի կանխատեսված մեծությունը՝ հաշվարկում ենք մասնավոր սպառման մեծությունը 2003 թ. համար (1339482.0 մլն դրամ): 2003 թ. մասնավոր սպառման կանխատեսված մեծությունը փաստացի մեծությունից շեղվել է 1.9%-ով, այն դեպքում, երբ ADL ռեգրեսիոն մոդելի միջոցով ՀՀ ԿԲ կողմից կանխատեսված մասնավոր սպառումը իրական մեծությունից շեղվել է 6.57%-ով:

2004 թվականի մասնավոր սպառման մակարդակը կանխատեսելու համար նախ պետք է կանխատեսել 2004 թվականի խնայողության նորմը, այնուհետև, օգտագործելով տնտեսության ճյուղերի ավելացված արժեքի կանխատեսումները ըստ ճյուղերի[13] և դրանցում եկամուտների բաշխման նախորդ տարիների կառուցվածքը, գնահատել այն (հավելված 2):

Խնայողության նորմը կանխատեսվել է y = 0.1109x - 0.8763 հավասարման միջոցով, և *2004 թվականի համար խնայողության նորմի արժեքը ստացվել է 0.0109 (գրաֆիկ 5): Իսկ ըստ մոդելի՝ մասնավոր սպառման մակարդակի գնահատականը կազմել է 1509531.3 մլն դրամ, որը ADL ռեգրեսիոն մոդելի միջոցով ՀՀ ԿԲ կողմից կանխատեսված մակարդակից տարբերվում է 0.02%-ով[14]. իսկ մասնավոր սպառման փաստացի մակարդակից շեղումը կազմում է 6 տոկոս, որը գերազանցում է 5 տոկոսանոց թույլատրելի շեմը: Սակայն, քանի որ նույն չափ շեղվում է նաև կիրառվող մեթոդը, ֆինանսական ծրագրավորման աշխատանքներում կարելի է կիրառել երկու մեթոդն էլ զուգահեռ: Առաջարկվող մեթոդի առավելությունն այն է, որ առավել լայն է մեկնաբանում կախատեսվող արդյունքը:*

Գրաֆիկ 5. 2004 թվականի խնայողության նորմի կանխատեսումը



Մասնավոր ներդրումների դեպքում, վիճակագրական խնդիրների պատճառով չի հաջողվել նման արժանահավատ արդյունքներ ստանալ:

Մասնավոր ներդրումները մոդելում որոշվում են (10) հավասարման միջոցով, ըստ որի՝ $I = s_p \times \sum_{i=1}^{n} p_i - Nx$: Ընդ որում, քանի որ մոդելում պետությունը չի դիտարկվում, զուտ արտահանման մեջ բացակայում են պետական ներմուծումն ու արտահանումը: Սակայն վերջիններիս վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս այս հավասարման միջոցով գնահատել մասնավոր ներդրումները: Այդ իսկ պատճառով կիրառում ենք մնացորդային եղանակը.

Հիմնական մակրոտնտեսական հավասարումից ունենք.

$$I_p = Y - (I_g + C_p + C_g + Nx):$$

[13] *Տե՛ս «ՀՀ 2004 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիր», էջ 51:*
[14] *Ըստ ՀՀ ԿԲ ADL ռեգրեսիոն մոդելի միջոցով կանխատեսումների՝ այն հավասար է 1509861 մլն դրամ: Տե՛ս «ՀՀ 2004 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիր», էջ 51:*

Հաշվարկները վերոնշյալ նույնության միջոցով իրականացնելու դեպքում մասնավոր ներդրումների կանխատեսված մակարդակը 2003 թվականի համար փաստացիից շեղվում է 15 տոկոսով: Սխալի նման մեծությունը պայմանավորվում է նրանով, որ սպառման բացարձակ մեծությունը ներդրումների բացարձակ մեծության նկատմամբ համեմատաբար ավելի մեծ արժեք ունի, որի հետևանքով կանխատեսված սպառման փոքր սխալը ներդրումների դեպքում տոկոսային հարաբերակցությամբ դառնում է ավելի մեծ: *2004 թվականի համար մասնավոր ներդրումների գնահատված արժեքը հավասար է 394 708.3 մլն դրամ, այն դեպքում, երբ ADL ռեգրեսիոն մոդելի միջոցով ՀՀ ԿԲ կողմից կանխատեսված մասնավոր ներդրումները կազմում են 351 437.8 մլն դրամ (շեղումը կազմում է 12%), իսկ մասնավոր ներդրումների փաստացի մակարդակը՝ 383379 մլն դրամ (շեղումը կազմում է 2.6%):*

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատանքում գնահատվել է եկամուտների բաշխման նշանակությունը տնտեսության սպառման ու ներդրումների տեսանկյունից: Վերջին մի քանի տարիներին տնտեսության ճյուղերում եկամուտների բաշխման գործընթացի վերլուծությունից պարզվեց, որ տնտեսությունում եկամուտների՝ աշխատավարձի և շահույթի բաշխման համամասնությունները որոշակիորեն պայմանավորվում են տնտեսության ճյուղային զարգացումներով:


Հիմնվելով այդ եզրահանգման վրա՝ ներկայացվեց մի մոդել, ըստ որի՝ սպառումը և ներդրումները որպես էնդոգեն (ներծին) մեծություններ կախված են տնտեսությունում եկամուտների բաշխման արդյունքում շահույթի և աշխատավարձի համամասնություններից: Մոդելի էմպիրիկ ստուգման արդյունքները ցույց տվեցին, որ առաջադրված մոդելն արժանահավատ է և կիրառելի տնտեսության մասնավոր սպառման մակարդակի կանխատեսման համար:


Աշխատանքում ներկայացված մոդելը առավելապես հիմնված է տնտեսագիտության դասական դպրոցի դրույթների վրա: Մասնավորապես ենթադրվում են տարբեր խնայողության նորմեր վարձու աշխատողների և սեփականատերերի համար, համաձայն որի՝ աշխատավարձերը ամբողջությամբ ուղղվում են սպառմանը, և ներդրումների ներքին աղբյուր հանդիսանում է շահույթը: Մոդելում չի քննարկվում գործազրկության հարցը: Ի վերջո, ընդունվում է դասականների այն համոզմունքը, որ տնտեսական աճի և եկամուտների միջև երկընտրանքն անխուսափելի է:


Ամբողջական պահանջարկում սպառման և ներդրումների համամասնությունների փոփոխությունը չի կարող չանդրադառնալ տնտեսական աճի վրա: Այդ իսկ պատճառով այս հետազոտության հետագա հնարավոր զարգացումը կարելի է տեսնել տնտեսական աճի և եկամուտների բաշխման փոխկապվածության խնդրի ուղղությամբ: Դիտարկված փոխկապվածությունների վերաբերյալ կատարված եզրահանգումներն առավել ամբողջական կլինեին, եթե առաջիկայում տնտեսական աճ-բաշխում կապը քննարկվեր Կուզնեցի կորի շրջանակներում: Այդ աշխատանքը հնարավորություն կտար դատողություններ անել ժամանակի ընթացքում աճ-բաշխում կապի փոփոխությունների ուղղությունների և արագությունների վերաբերյալ:


Ներկայացված աշխատանքի կիրառությունը տեսնում ենք ՀՀ ԿԲ կողմից իրականացվող ֆինանսական ծրագրավորման շրջանակներում: Մասնավորապես՝ առաջարկում ենք սպառման կանխատեսման նպատակով կիրառվող մեթոդին զուգահեռ օգտագործել նաև աշխատանքում ներկայացված տարբերակը:

Տնտեսության ճյուղերում ավելացված արժեքի բաշխումը աշխատավարձի և համախառն շահույթի միջև









2003 թ. խնայողության նորմի հաշվարկման և 2004 թ. մասնավոր սպառման կանխատեսման եղանակները

Մանրամասն ուսումնասիրենք 2003թ. խնայողության նորմի հաշվարկման քայլերի հաջորդականությունը:

Նախ դիտարկենք 2003թ. ՀՆԱ արտադրությունն ըստ ճյուղերի:

Արդյունաբերություն	322878.7
Գյուղատնտեսություն	346869.4
Շինարարություն	252193.9
Ծառայություններ	553515.3
Զուտ անուղղակի հարկեր	147878.9
ՀՆԱ	**1623336.2**

Որպես տնտեսության ճյուղերի աշխատավարձի, կապիտալի սպառման և զուտ շահույթի կշիռներ՝ վերցնում ենք նախորդ հինգ տարիների կշիռների միջինը.

		1998	1999	2000	2001	2002	1998-2002 թթ. միջին
Արդյունաբերություն	Աշխատավարձ	46.45	47.09	45.33	46.26	47.26	46.48
	Կապիտալի սպառում	14.49	15.00	16.58	16.51	22.44	17.00
	Զուտ շահույթ	39.06	37.90	38.09	37.23	30.30	36.52
Գյուղատնտեսություն	Աշխատավարձ	30.99	34.60	33.40	32.94	30.54	32.497
	Կապիտալի սպառում	14.30	14.41	15.60	15.46	15.27	15.007
	Զուտ շահույթ	54.70	50.99	51.00	51.60	54.19	52.497
Շինարարություն	Աշխատավարձ	74.29	74.99	68.76	68.16	52.88	67.82
	Կապիտալի սպառում	7.20	7.34	8.27	9.02	8.82	8.13
	Զուտ շահույթ	18.51	17.66	22.97	22.82	38.30	24.05
Ծառայություններ	Աշխատավարձ	52.76	51.98	52.61	52.22	49.61	51.84
	Կապիտալի սպառում	18.49	19.05	18.98	18.36	17.69	18.51
	Զուտ շահույթ	28.75	28.96	28.41	29.42	32.69	29.65

Ունենալով յուրաքանչյուր ճյուղի ավելացված արժեքը և ճյուղերում աշխատավարձի, կապիտալի սպառման և զուտ շահույթի կշիռները, ստանում ենք յուրաքանչյուր ճյուղի համապատասխան ցուցանիշի անվանական մեծությունները: Քանի որ մոդելում ավելացված արժեքները վերցվում են առանց հարկերի, ապա նախ՝ ՀՆԱ-ից հանվում են զուտ անուղղակի հարկերը, այնուհետև՝ աշխատավարձի ֆոնդից հանվում է եկամտահարկը (5%), իսկ զուտ շահույթից՝ շահութահարկը (20%): Ելնելով գործող օրենսդրության նորմերից, ըստ որի՝ գյուղատնտեսության ոլորտում ստեղծված շահույթը չի ենթարկվում հարկման՝ գյուղատնտեսության զուտ շահույթից չի հանվել շահութահարկը:

Ճյուղ	**Ներառյալ հարկերը**			**Առանց հարկերի**		
	Աշխատավարձ	Կապիտալի սպառում	Զուտ շահույթ	Աշխատավարձ	Կապիտալի սպառում	Զուտ շահույթ
Արդյունաբերություն	150066.7	54903.6	117908.3	142563.4	54903.6	94326.7
Գյուղատնտեսություն	112721.8	52053.2	182094.5	107085.7	52053.2	182094.5
Շինարարություն	171026.6	20505.4	60662.0	162475.2	20505.4	48529.6
Ծառայություններ	286939.0	102483.1	164093.3	272592.0	102483.1	131274.6

Ստանալով աշխատավարձի և զուտ շահույթի (առանց հարկերի) և կապիտալի սպառման մեծություններն ըստ ճյուղերի՝ կարող ենք ստանալ մեր մոդելում կիրառվող աշխատավարձի և համախառն շահույթի մեծությունները: Համախառն շահույթը ստանալու համար զուտ շահույթին (առանց հարկերի) գումարում ենք կապիտալի սպառումը:

Ճյուղ	**Աշխատավարձ**	**Կապիտալի սպառում**	**Զուտ շահույթ**	**Աշխատավարձ**	**Համախառն շահույթ**
Արդյունաբերություն	142563.4	54903.6	94326.7	142563.4	149230.3
Գյուղատնտեսություն	107085.7	52053.2	182094.5	107085.7	234147.6
Շինարարություն	162475.2	20505.4	48529.6	162475.2	69034.9
Ծառայություններ	272592.0	102483.1	131274.6	272592.0	233757.7

Այժմ կարող ենք հաշվարկել ողջ տնտեսության աշխատավարձի և շահույթի մեծությունները: Հիշենք, որ համաձայն մեթոդաբանության՝ գյուղատնտեսության ճյուղի ողջ ավելացված արժեքը ներառվում է աշխատավարձի կազմում: Այսպիսով, գումարելով բոլոր ճյուղերի աշխատավարձերը և գյուղատնտեսության ճյուղի շահույթը, ստանում ենք մոդելի պահանջներից բխող աշխատավարձի մեծությունը՝ 918864.0 մլն դրամ: Իսկ համախառն շահույթը ստացվում է արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ճյուղերի շահույթների գումարման արդյունքում՝ 452022.9 մլն դրամ:

Ունենալով այդ երկու մեծությունները, ինչպես նաև մասնավոր սպառման մեծությունը (1364944.5 մլն դրամ)՝ հաշվարկում ենք խնայողության նորմը 2003 թ. համար, հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$s_p = 1 - \frac{(C - W)}{P}$$

Արդյունքում՝ 2003 թ. համար խնայողության նորմի մեծությունը հավասարվում է 0.0131:

2004 թ. մասնավոր սպառման կանխատեսումը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ՝


1. Որպես հիմք ընդունելով 2004 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրում առկա ըստ տնտեսության ճյուղերի կանխատեսումները և յուրաքանչյուր ճյուղում աշխատավարձի, կապիտալի սպառման և զուտ շահույթի նախորդ հինգ տարիների կշիռները՝ վերը ներկայացված քայլերի հաջորդականությամբ հաշվարկում ենք ողջ տնտեսության մասշտաբով աշխատավարձի և համախառն շահույթի մեծությունները:
2. 1997 - 2003 թթ. խնայողության նորմերի հիման վրա կանխատեսում ենք 2004թ. խնայողության նորմը՝ գծային տրենդի օգնությամբ:
3. Ունենալով աշխատավարձի և համախառն շահույթի մեծությունները, ինչպես նաև խնայողության նորմի կանխատեսված մեծությունը՝ հետևյալ բանաձևի օգնությամբ հաշվարկում ենք 2004 թ. մասնավոր սպառումը.

$$C = P * (1 - s_p) + W$$

Արդյունքում՝ 2004 թ. մասնավոր սպառման կանխատեսված մեծությունը կազմել է 1509531.3 մլն դրամ:

Հավելված 3

Խնայողության նորմը երկարաժամկետ հատվածում չի կարող ունենալ աճի նման միտումներ, քանի որ, դրա արժեքը չի կարող գերազանցել 1-ը: Մոդելի շրջանակում դա կնշանակի, որ խնայողությունները չեն կարող գերազանցել շահույթի մակարդակը, այսինքն՝ $s \leq 1$: Հետևաբար, խնայողության նորմի աճի տեմպերը աստիճանաբար պետք է նվազեն և ձգտեն զրոյի, երբ խնայողության նորմը մոտենում է 1-ի կամ 1-ից փոքր ինչ-որ մեծության: Ասվածը ներկայացնենք գրաֆիկորեն:



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ տնտեսության համար խնայողության նորմի արժեքները բացասական են, և վերջին արժեքները գտնվում են զրոյի մոտակայքում, կարելի է ենթադրել, որ նորմի աճի նվազման միտումներ դեռ չեն սպասվում: Այսինքն՝ հաջորդ մի քանի տարիներին կպահպանվեն նորմի աճի բարձր տեմպերը, սակայն որոշ ժամանակից սկսած՝ դրանք պետք է նվազեն մինչև 0: Միևնույն ժամանակ, կարելի է ենթադրել, նաև, որ խնայողության նորմը ՀՀ տնտեսության համար ներկա փուլում ունի գծային տրենդ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Թումասյան, Ա. Մկրտչյան, Ս. Մուրադյան, Աճն արդարացի բաշխման պայմաններում: Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն, Երևան, 2002:
2. Հայաստանի ազգային հաշիվները 1990-2001, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2003:
3. Հայաստանի ազգային հաշիվները 1998-2002, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004:
4. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. Վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2002:
5. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. Վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2003:
6. ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002 թթ.: Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2003:
7. Anneli Kaasa, Factors influencing income inequality in transition economies, Uneversity of Tartu, 2003.
8. Branko Milanovic, “Income, Inequality, and Poverty during the Transition from Planned to Market Economy”, World Bank, 1998.
9. David R. Howell, Ellen Houston and William Milberg, Demand Shifts and Earnings Inequality: Wage and Hours Growth by Occupation in the U.S., 19970-97, CEPA, April 1999.
10. EBRD Transition Report, 2000.
11. Edgar Pardo-Beltran, Effects ûf Distribution on Growth, Center for Economic Policy Analysis; CEPA, 2002.
12. Garbis Iradian; Poverty, Inequality, and Growth in Armenia, Cross-Country Evidance, World Bank, January 2004.
13. George R. G. Clarke, More Evidanc on Income Distribution and Growth, The Woeld Bank, December 1992.
14. Income Inequality: Issues and Policy Options, A Symposium Sponsored By The Federal Reserve Bank of Kansas City, 1998.
15. Jane Falkingham, Inequality & Poverty in the CIS 7 1989-2002, University of Southampton, UK, 2003.
16. Klaus Deininger, Pedro Olinto, Asset Distribution, Inequality, and Growth, The World Bank, June 2000.
17. Lance Taylor, Income Distribution, Inflation, and Growth, Lectures on Structuralist Macroeconomic Theory, 1994.
18. Martin Ravallion, Inequality Convergence, July 2001.
19. Nelson H. Barbosa Filho, Effective Demand and Growth, An Analysis of the Alternative Closures of Keynesian Models, CEPA, December 2001.
20. Richard H. Adams, Jr., Economic Growth, Inequality and Poverty, Finding from a New Data Set, The World Bank, February 2003.
21. Robert J. Barro, Inequality, Growth, and Investment, National Bureau of Economic Reserch; NBER, 1999.
22. Robert J. Barro and Xavier Sala-i-Martin, Economoc Growth, Cambridge, Massachusetts, second edition, 2004.
23. Ronald Benabou, Inequality and Growth, National Bureau of Economic Reserch; NBER, 1996.
24. Theories of Growth and Distribution, The World Bank Group, (www.worldbank.org).
25. William Easterly, Inequality does Cause Underdevelopment, Center for Global Development, 2002.
26. World Development Indicators; World Bank, 1999.
27. World Economic Outlook; 2000.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ *

Ա. Գրիգորյան, Կ. Պողոսյան, Գ. Աղաջանյան

Վիճակագրության վարչություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացման համար ՀՀ կենտրոնական բանկը հնարավորինս շատ տեղեկատվություն պետք է ունենա տնտեսության իրական հատվածի գործունեության վերաբերյալ: Այդ նպատակով 2003թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կենտրոնական բանկը նախաձեռնեց ձեռնարկությունների հարցում: Հարցման հիմնական նպատակներից էր՝ բացահայտել տնտեսավարող սուբյեկտների՝ Կենտրոնական բանկի հետ համագործակցելու պատրաստակամությունը, պարզել տնտեսության երեք հիմնական ճյուղերում (արդյունաբերություն, շինարարություն, ծառայություններ) գործող ձեռնարկությունների մոտավոր քանակը և որոշակի գնահատումներ կատարել տնտեսության ֆինանսատնտեսական զարգացման վերաբերյալ:

Հաշվի առնելով առաջին հարցման արդյունքները՝ 2004թ. հոկտեմբեր-նոյեմբերին իրականացվեց ձեռնարկությունների երկրորդ փորձնական հարցումը, որի հիմնական նպատակներն էին.

1. ձեռնարկությունների թողարկման և արտադրանքի գների փոփոխությունների վերաբերյալ սպասումների հիման վրա գնահատել ճյուղերում իրական աճը և գների ինդեքսները,
2. տնտեսական գործընթացների վերաբերյալ որակական տեղեկատվության հիման վրա կառուցել տնտեսական միջավայրը և միտումները բնութագրող որակական բաղադրյալ ինդեքսները:

ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետազոտվել է արդյունաբերության, շինարարության և ծառայությունների[1] ոլորտներում գործող 209 ձեռնարկություն: Ձեռնարկությունների քանակական բաշխումն ըստ նշված ճյուղերի իրականացվել է ավելացված արժեքներում դրանց ունեցած տեսակարար կշիռների հիման վրա: Այսինքն՝ նախ որոշվել է հետազոտվող ձեռնարկությունների քանակը՝ 150-200 ձեռնարկություն: Այնուհետև, հիմք ընդունելով ՀՆԱ-ում հետազոտվող ճյուղերի ավելացված արժեքի տեսակարար կշիռները, կատարվել է ձեռնարկությունների քանակի բաշխում՝ ըստ ճյուղերի: Ընտրանքի որոշման վերջին քայլում կատարվել է ձեռնարկությունների ճյուղային բաշխման փորձագիտական ճշգրտում: Հետազոտվող ձեռնարկությունների քանակը որոշվել է փորձագիտական եղանակով՝ հաշվի առնելով նախորդ հարցման արդյունքները և առկա ռեսուրսները [2]:

Հարցման ընտրանքում ընդգրկված ձեռնարկությունների բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի

Ճյուղ	Ընտրված ձեռնարկությունների քանակ	Հետազոտված ձեռնարկությունների քանակ
Արդյունաբերություն	84-112	111
Ծառայություններ	45-60	73
Շինարարություն	21-28	25
Ընդամենը	**150-200**	**209**

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] *Ծառայությունների ոլորտը հիմնականում ներառում է բնակչությանը վճարովի ծառայություններ մատուցող ձեռնարկությունները:*

[2] *Քանակը որոշվել է փորձագիտական եղանակով, քանի որ ՀՀ-ում գործող կազմակերպությունների քանակի և վիճակագրական բնութագրիչների վերաբերյալ տվյալներ չկան:*

Հետազոտվել են Երևան քաղաքի և Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Տավուշի, Լոռու, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի ձեռնարկություններ: Հաշվի առնելով մարզերում գործող ձեռնարկությունների ղեկավարների հետ հարցումների իրականացման վերաբերյալ բանակացությունների վարման և վերջիններիս՝ տեղում (ձեռնարկությունում) գտնելու հետ կապված դժվարությունները՝ յուրաքանչյուր մարզում հետազոտվել են մի քանի ձեռնարկություններ:


ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ


Հարցաթերթիկները լրացվել են ձեռնարկությունների գտնվելու վայրում՝ հարցազրուցավարների կողմից: Վերջիններիս հետ նախօրոք իրականացվել են հրահանգավորման աշխատանքներ, պարզաբանումներ են տրվել հարցաթերթիկներում ներառված հարցերի և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ:

Ստորև ներկայացված են ձեռնարկությունների երկրորդ փորձնական հարցման ամփոփ արդյունքները (աղյուսակներով և գծապատկերներով): Արդյունաբերության և ծառայությունների ճյուղերի ձեռնարկությունները ներկայացվել են նաև ըստ աշխատողների թվաքանակի՝ դասակարգվելով որպես փոքր, միջին և խոշոր ձեռնարկություններ:

Արդյունաբերություն		Ծառայություններ	
Աշխատողների թիվը	Դասակարգումը	Աշխատողների թիվը	Դասակարգումը
Մինչև 50	փոքր	Մինչև 15	փոքր
51-100	միջին	16-30	միջին
100-ից ավելի	խոշոր	31-ից ավելի	խոշոր

Ձեռնարկությունների դասակարգումը՝ ըստ աշխատողների թվի





Հետազոտության արդյունքները


Երևան քաղաքում և մարզերում հետազոտված բոլոր 209 ձեռնարկությունները հետազոտության ընթացքում գործել են:

Ըստ հարցման մասնակից ձեռնարկությունների պատասխանների՝ 2004թ. նոյեմբերի վերջի դրությամբ արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ոլորտներում գործել է 4597 ձեռնարկություն:

Գործող ձեռնարկությունների բաշխումն ըստ ճյուղերի

Ճյուղերը	**Ձեռնարկությունների քանակը**
Արդյունաբերություն	1594
Շինարարություն	1000
Ծառայություններ	2003
Ընդամենը	**4597**

Ճյուղերի աճի վերաբերյալ ձեռնարկությունների սպասումները 2004-2005թթ. համար




Ճյուղերի նախորդ տարվա իրական աճերի կանխատեսումների համեմատությունից պարզվում է, որ ձեռնարկությունները հիմնականում սպասում են աճի տեմպերի նվազում[3]: Առանց աղամանդագործությամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեության արդյունքները հաշվի առնելու՝ 2004 թ. ընթացքում ակնկալվում էր արդյունաբերության 7% աճ (փաստացի աճը կազմել է 2.1%): 2005թ. համար արդյունաբերության իրական աճի վերաբերյալ սպասումներում զգալի փոփոխություն չի նկատվում:

2004 – 2005 թթ. ընթացքում ծառայությունների ճյուղի վերաբերյալ ձեռնարկությունների սպասումներում էական տատանումներ չկան:

Շինարարության ոլորտում 2004 թ. ընթացքում, նախորդ տարվա համեմատ, կանխատեսվում էր անկում, մինչդեռ ՀՀ ԱՎԾ կողմից հայտարարված՝ կապիտալ շինարարության պաշտոնական իրական աճի տեմպը 2004 թ. կազմել է 17.2%: Հարցմանը մասնակցած ձեռնարկությունների կողմից կանխատեսված բացասական աճը հիմնականում պայմանավորված էր մի քանի խոշոր շինարարական կազմակերպությունների կողմից (որոնց իրականացրած կապալային աշխատանքների ծավալը կազմում է հետազոտված կազմակերպությունների աշխատանքների ընդհանուր ծավալի 48%-ը) սպասվող էական անկումներով[4]: 10% հատած միջինների եղանակով հաշվարկված միջին կշռված աճի տեմպը կազմել է 105%: Այսպիսով, ըստ հարցման արդյունքների՝ 2005 թ. ընթացքում սպասվում է բավականին բարձր՝ 15.1% իրական աճ:

Ճյուղային դեֆլյատորների արժեքները 2004 – 2005 թթ. (կազմակերպությունների գնահատումներ)



[3] Արդյունաբերության ճյուղի ցուցանիշներում ներառված չեն թանկարժեք իրերի արտադրության (մասնավորապես՝ ադամանդագործության) վերաբերյալ ցուցանիշները: Դրանք ներկայացված են ճյուղի հավելվածներում՝ առանձին աղյուսակներով:

[4] Գծապատկերում ներկայացված ցուցանիշները հաշվարկվել են 5% հատած միջինների եղանակով, ինչի արդյունքում միջինի հաշվարկի ժամանակ հաշվի չեն առնվել 1՝ ամենամեծ և 1՝ ամենափոքր աճ կանխատեսած կազմակերպությունները: Նշված եղանակը կիրառվել է բոլոր հարցերի ամփոփման ժամանակ:

Շինարարության ճյուղի դեֆլյատորի նման տատանումներն առավելապես պայմանավորված են ընտրանքում ներգրավված շինարարական կազմակերպությունների ցածր ներկայացուցչականությամբ, որոնք հիմնականում ակնկալում են գների զգալի աճ:

Հետազոտված կազմակերպությունների գնահատումներով՝ 2005թ. ընթացքում տնտեսության ճյուղերում սպասվում է միջին աշխատավարձի աճ:

Միջին աշխատավարձի անվանական աճի ցուցանիշներ (կազմակերպությունների գնահատումներ)

Ճյուղերը	Միջին աշխատավարձի չափը, 2004թ., դրամ	Միջին աշխատավարձի փոփոխությունը, 2005թ., %-ով
Արդյունաբերություն	62903	105.8
Շինարարություն	79030	109.1
Ծառայություններ	67157	107.5
Ծրագրավորում*	280825	108.4

** Ներկայացված է համեմատության համար:*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկությունների երկրորդ փորձնական հարցման արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

- համաձայն ձեռնարկությունների գնահատումների՝ արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ոլորտներում գործում են 4597 կազմակերպություններ,
- 2005թ. ընթացքում շինարարության ոլորտում սպասվում է տնտեսական ակտիվության էական աճ, իսկ արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում՝ համեմատաբար զուսպ աճ: Ընդ որում, համաձայն ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների՝ 2005թ. առաջին եռամսյակի ընթացքում արդյունաբերությունում իրական աճը կազմել է 5.1%, շինարարությունում՝ 22.3%, ծառայությունների ոլորտում՝ 17.7%,
- արդյունաբերական կազմակերպությունները սպասում են, որ կաճեն թե՛ թողարկման ծավալները և թե՛ արտադրանքի ինքնարժեքը, ինչը վկայում է այն մասին, որ չի գործում մասշտաբի էֆեկտը,
- 2005թ. ընթացքում սպասվում է գների համեմատաբար կայուն աճ (բացի շինարարության ճյուղից, որտեղ առկա է հարցման ներկայացուցչականության խնդիր), ինչը հիմնականում պայմանավորված է գների նախորդ տարվա միտումներով,
- 2005թ. ընթացքում արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ճյուղերում սպասվում է միջին աշխատավարձի 6.5% աճ (կշռված 2004թ. ընթացքում ճյուղերի կողմից գնահատված թողարկման ծավալներով), ինչը պայմանավորված է հիմնականում արտադրողականության աճով,
- ձեռնարկությունների գնահատումներով՝ թողարկման ծավալները բավականին մեծ կախվածություն ունեն ներքին պատվերներից, մինչդեռ արտաքին պատվերների ազդեցությունը համեմատաբար թույլ է, քանի որ հետազոտված ձեռնարկությունների մեծ մասն արտաքին շուկայում տնտեսական գործունեություն չի ծավալում,
- համեմատաբար խոշոր կազմակերպություններում սպասվում է առկա արտադրական հզորությունների օգտագործման մակարդակի աճ,
- առամանդագործությամբ զբաղվող արդյունաբերական կազմակերպություններում, ի տարբերություն 2004թ., 2005թ. ընթացքում սպասվում է իրական աճ:

	Արդյունաբերություն	Թողարկման աճ (2004 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված*
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	49	47
	Միջին	109 .6	107 .9
	Հատած միջին (5%)	105 .3	108 .0
	Վարիացիայի գործակից(%)	48 .1	37 .1
Միջին	Ձեռնարկությունների քանակը	19	19
	Միջին	104 .5	115 .5
	Հատած միջին (5%)	104 .8	117 .1
	Վարիացիայի գործակից	40 .4	32 .8
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	33	33
	Միջին	144 .3	108 .8
	Հատած միջին (5%)	135 .5	106 .8
	Վարիացիայի գործակից	53 .7	30 .4
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	101	99
	Միջին	119 .9	109 .0
	Հատած միջին (5%)	112 .9	106 .9
	Վարիացիայի գործակից	51 .6	30 .8
	Փաստացի աճը ԱՎԾ տվյալներով	102 .1	

	Շինարարություն	Թողարկման աճ (2004 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	19	19
	Միջին	115 .3	96 .7
	Հատած միջին (5%)	113 .0	96 .1
	Վարիացիայի գործակից	40 .9	33 .3
	Փաստացի աճը ԱՎԾ տվյալներով	117 .2	

	Ծառայություններ	Թողարկման աճ (2004 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	31	30
	Միջին	117 .3	111 .9
	Հատած միջին (5%)	110 .0	107 .8
	Վարիացիայի գործակից(%)	54 .4	42 .8
Միջին	Ձեռնարկությունների քանակը	18	18
	Միջին	111 .7	104 .1
	Հատած միջին (5%)	112 .5	103 .3
	Վարիացիայի գործակից	16 .0	11 .4
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	26	24
	Միջին	110 .6	109 .7
	Հատած միջին (5%)	109 .1	109 .4
	Վարիացիայի գործակից	19 .7	14 .0
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	75	72
	Միջին	113 .7	109 .2
	Հատած միջին (5%)	110 .4	108 .8
	Վարիացիայի գործակից	38 .3	16 .6
	Փաստացի աճը ԱՎԾ տվյալներով	112 .5	

	Ծրագրավորում	Թողարկման աճ (2004 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	6	6
	Միջին	118 .2	115 .4
	Հատած միջին (5%)	116 .9	113 .8
	Վարիացիայի գործակից	24 .1	14 .9

* *Այս և հետագա աղյուսակներում 2004թ. վերաբերյալ ցուցանիշները կշռվել են 2003թ., իսկ 2005թ. վերաբերյալ ցուցանիշները՝ 2004թ. ձեռնարկությունների թողարկման ծավալներով:*

Արդյունաբերություն		Թողարկման աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	48	48
	Միջին	195 .8	132 .0
	Հատած միջին (5%)	128 .4	122 .3
	Վարիացիայի գործակից(%)	220 .9	93 .8
Միջին	Ձեռնարկությունների քանակը	19	19
	Միջին	134 .2	132 .7
	Հատած միջին (5%)	121 .9	119 .8
	Վարիացիայի գործակից	51 .2	47 .2
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	32	32
	Միջին	114 .5	107 .8
	Հատած միջին (5%)	111 .8	105 .8
	Վարիացիայի գործակից	17 .1	11 .9
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	99	99
	Միջին	157 .3	109 .4
	Հատած միջին (5%)	121 .4	106 .5
	Վարիացիայի գործակից	192 .0	26 .9

Շինարարություն		Թողարկման աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	19	18
	Միջին	112 .5	115 .7
	Հատած միջին (5%)	113 .2	115 .1
	Վարիացիայի գործակից	23 .9	20 .9

Ծառայություններ		Թողարկման աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	32	30
	Միջին	115 .4	111 .5
	Հատած միջին (5%)	115 .1	110 .8
	Վարիացիայի գործակից(%)	15 .5	12 .6
Միջին	Ձեռնարկությունների քանակը	19	19
	Միջին	112 .6	115 .3
	Հատած միջին (5%)	114 .0	115 .7
	Վարիացիայի գործակից	19 .1	12 .3
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	25	24
	Միջին	114 .3	107 .2
	Հատած միջին (5%)	110 .4	106 .0
	Վարիացիայի գործակից	23 .4	10 .6
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	76	73
	Միջին	114 .4	108 .3
	Հատած միջին (5%)	112 .9	106 .9
	Վարիացիայի գործակից	19 .0	11 .2

Ծրագրավորում		Թողարկման աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	5	5
	Միջին	111 .0	116 .3
	Հատած միջին (5%)	110 .8	116 .8
	Վարիացիայի գործակից	8 .1	7 .3

	Արդյունաբերություն	Գների աճ (2004 թ. %-ով)		Գների աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված	Չկշռված	Կշռված
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	50	47	50	50
	Միջին	107 .9	112 .1	108 .1	109 .7
	Հատած միջին (5%)	105 .1	109 .6	107 .2	108 .5
	Վարիացիայի գործակից (%)	22 .6	31 .1	15 .3	14 .8
Միջին	Ձեռնարկությունների քանակը	18	18	17	17
	Միջին	112 .3	109 .9	109 .5	105 .5
	Հատած միջին (5%)	108 .4	106 .4	107 .2	104 .9
	Վարիացիայի գործակից	20 .3	17 .4	13 .2	6 .5
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	32	32	33	33
	Միջին	103 .7	106 .6	104 .1	101 .9
	Հատած միջին (5%)	101 .6	103 .3	103 .4	101 .1
	Վարիացիայի գործակից	13 .2	19 .7	9 .1	5 .7
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	101	98	100	100
	Միջին	107 .3	106 .8	106 .9	102 .3
	Հատած միջին (5%)	104 .4	103 .6	105 .7	101 .4
	Վարիացիայի գործակից	19 .7	20 .2	13 .2	6 .6
	Փաստացի գների աճը ԱՎԾ տվյալներով	121.7			

	Շինարարություն	Գների աճ (2004 թ. %-ով)		Գների աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված	Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	19	18	19	18
	Միջին	116 .8	117 .7	112 .5	112 .4
	Հատած միջին (5%)	116 .0	118 .1	112 .5	112 .6
	Վարիացիայի գործակից	11 .6	8 .3	6 .8	27 .0
	Փաստացի գների աճը ԱՎԾ տվյալներով	101.3			

	Ծառայություններ	Գների աճ (2004 թ. %-ով)		Գների աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված	Չկշռված	Կշռված
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	30	30	31	31
	Միջին	102 .7	104 .3	104 .3	102 .9
	Հատած միջին (5%)	102 .5	104 .7	102 .7	102 .6
	Վարիացիայի գործակից	10 .2	9 .1	14 .0	7 .7
Միջին	Ձեռնարկությունների քանակը	17	17	19	19
	Միջին	104 .0	104 .1	103 .4	103 .4
	Հատած միջին (5%)	102 .8	103 .1	103 .3	103 .2
	Վարիացիայի գործակից	13 .1	7 .0	5 .4	3 .2
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	26	26	26	26
	Միջին	99 .7	107 .6	100 .9	104 .3
	Հատած միջին (5%)	100 .5	108 .4	100 .6	104 .3
	Վարիացիայի գործակից	10 .2	7 .4	4 .3	4 .9
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	73	73	76	76
	Միջին	101 .9	107 .1	102 .9	104 .1
	Հատած միջին (5%)	101 .8	107 .7	101 .8	104 .1
	Վարիացիայի գործակից	10 .9	7 .5	9 .8	4 .9
	Փաստացի գների աճը ԱՎԾ տվյալներով	101.5			

	Ծրագրավորում	Գների աճ (2004 թ. %-ով)		Գների աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված	Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	6	6	6	6
	Միջին	105,0	104,7	105,0	104,3
	Հատած միջին (5%)	104,4	104,1	104,4	103,7
	Վարիացիայի գործակից	8,0	6,1	8,0	6,0

Արդյունաբերություն		Աշխատողների թվաքանակի աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	49	49
	Միջին	124 .1	121 .5
	Հատած միջին (5%)	121 .4	118 .3
	Վարիացիայի գործակից(%)	23 .2	21 .1
Միջին	Ձեռնարկությունների քանակը	18	18
	Միջին	113 .9	115 .6
	Հատած միջին (5%)	112 .9	114 .5
	Վարիացիայի գործակից	17 .7	14 .8
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	33	33
	Միջին	108 .6	100 .1
	Հատած միջին (5%)	107 .2	99 .0
	Վարիացիայի գործակից	16 .0	8 .4
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	100	100
	Միջին	117 .0	101 .3
	Հատած միջին (5%)	114 .2	99 .5
	Վարիացիայի գործակից	21 .2	10 .8

Շինարարություն		Աշխատողների թվաքանակի աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	18	17
	Միջին	105 .6	113 .2
	Հատած միջին (5%)	107 .3	114 .5
	Վարիացիայի գործակից	22 .9	18 .4


Ծառայություններ		Աշխատողների թվաքանակի աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	32	30
	Միջին	115 .8	115 .0
	Հատած միջին (5%)	114 .4	114 .5
	Վարիացիայի գործակից	16 .9	13 .4
Միջին	Ձեռնարկությունների քանակը	19	19
	Միջին	108 .3	107 .2
	Հատած միջին (5%)	108 .7	107 .2
	Վարիացիայի գործակից	16 .1	8 .0
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	26	24
	Միջին	106 .7	104 .2
	Հատած միջին (5%)	105 .0	103 .4
	Վարիացիայի գործակից	11 .5	5 .5
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	77	73
	Միջին	110 .9	105 .1
	Հատած միջին (5%)	109 .7	103 .9
	Վարիացիայի գործակից	15 .5	6 .9


Օրագրավորում		Աշխատողների թվաքանակի աճ (2005 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	6	6
	Միջին	123 .3	128 .9
	Հատած միջին (5%)	123 .7	129 .8
	Վարիացիայի գործակից	13 .2	9 .9


Արդյունաբերություն		Արտադրական հզորությունների օգտագործման աստիճան (2004 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Փոքր	Ձեռնարկությունների քանակը	49	49
	Միջին	45 .8	41 .7
	Հատած միջին (5%)	45 .1	40 .6
	Վարիացիայի գործակից	63 .9	63 .2
Միջին	Ձեռնարկությունների քանակը	18	18
	Միջին	39 .3	50 .4
	Հատած միջին (5%)	38 .5	50 .7
	Վարիացիայի գործակից	72 .9	58 .6
Խոշոր	Ձեռնարկությունների քանակը	30	30
	Միջին	54 .5	50 .4
	Հատած միջին (5%)	54 .4	49 .1
	Վարիացիայի գործակից	47 .1	38 .3
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	97	97
	Միջին	47 .5	50 .1
	Հատած միջին (5%)	47 .0	49 .2
	Վարիացիայի գործակից	59 .7	39 .7


Ծրագրավորում		Արտադրական հզորությունների օգտագործման աստիճան (2004 թ. %-ով)	
		Չկշռված	Կշռված
Ընդամենը	Ձեռնարկությունների քանակը	5	5
	Միջին	90 .0	93 .9
	Հատած միջին (5%)	90 .6	94 .9
	Վարիացիայի գործակից	13 .6	10 .8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ













ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ









ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

•

ՀՀ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

Երևան 10,
Վ. Սարգսյան փող. 6
http://www.CBA.am

•

Չափսը՝ 60 x 84 1/8:
16.28 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 120:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2005